

2  
666

Հրատարակ. Ա. Մալխասեանցի

# ԼԵՅԼՈՒ ԵՐ ՄԱՆՈՒՆԻ

ՀԵՔԵԱԹԸ

Հայերէն երգերով

446

ՓՈԽԱԴՐԵՑ ԹԻՒՐՔԵՐԵՆԻՑ

Ա. Պ. Է. Թ. Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն



Ա. Լ. Ք Ս Ո Ո Ն Դ Շ Ո Պ Ո Լ

ՏՊԱՐԱՆ Ա. Մ. ՄՊԼԻԱԾԵԱՆՆԻՑԻ

1910

## ԼԵՅԼՈՒ ԵՒ ՄԱՃԱՌԻՆԻ

ՀԵՔԵԱԹԸ

Սախնի հեքեաթաբանները այսպէս են պատմում,  
թէ ժամանակով Արաբական ցեղերից մէկում, Պանու-Աճիր  
անունով մի խիստ քաջ ու զօրեղ իշխան է լինում, որը  
անչափ կալք ու կարողութիւն... և բացի այս, բոլոր Արա-  
բական ցեղերի մէջ, լաւ անուն և մէծ համբաւ ու հռչակ  
է ունեցել: Այնպէս որ, բոլոր ցեղերի մէջ ոչ ոք նրանից  
մէծ ու զօրեղ չի եղել. նրա հրամաններն ու պատուէրները  
ամենայն ճշտութեամբ կատարուել են. ոչ ոք նրա խօս-  
քից ու հրամանից գուրս չի եկել: Միով բանիւ անհամար  
կարողութիւնով և ամեն կերպ առաւելութիւններով պսա-  
կուած կամ օժտուած մի մարդ է եղել: Նրա գուռը ամենքի  
առաջ բաց և նրա հացի սեղանը ամեն մարդի համար միշտ  
պատրաստ է եղել: Ամեն գնացող եկող հիւր նրա լիառատ  
սեղանի բարիքները վայելելուց լետոյ՝ գնալիս էլ—բացի  
ստացած պատուից ու հիւրասիրութիւնից—իւր արժանիքին  
համեմատ, մի ընծայ կամ պարզե էլ է ստացել այդ իշխա-  
նից: Հեռաւոր ու մօտաւոր շրջակալքից, ով որ մի կարիք է  
ունեցել, դիմել է նրան, և թէ խօսքով ու խորհրդով և թէ  
նիւթապէս լիուլի բաւականութիւն ստացած, վերադարձել  
է իւր տունը:

83)-61

Աշխարհում, ասում են, ոչ մի բանի կարիք ու կարօ-  
առնթիւն չի ունեցել, բացի զաւակից, որ երկար ժամանակ  
չունէր... Միշտ զաւակ ունենալու փափագն է քաշել ու  
այդ մասին այնքան մտածելիս է եղել, որ սիրտը այրուել—  
խորովել է: Մշտապէս աղքատների վերալ խղճացել և նրանց  
լիաբուռն տուրք ու ողորմութիւն է տուել, որ գուցէ Աս-  
տուած նրանց խնդրուածքն ու օրհնութիւնը լսելով, իրան  
մի զաւակ պարգևէ:— „Աշխարհում միմիայն մի որդի ունե-  
նամ“.— պունքը պատռելով ասում է ու բոլոր կարողութիւնը  
յանուն Աստուծոյ բաշխում ու բաժանում է աղքատ կա-  
րօտեալներին:

Անցնում է բաւականին ժամանակ, մի օր էլ Աստուծոյ  
ամենակարող զօրութեամբ այդ իշխանի կինը լղանում է:  
Որոշեալ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ, լուսնի նման  
գեղեցիկ, սեաչեալ և աղեղ ունքերով մի արու կայտառ  
տղալ է աշխարհ գալիս: Այս որդեծնութեան մասին, հազիւ  
թէ ծնողների աչքերը լոյս է գալիս... Աստուծու տուած  
պարգևից խիստ գոհ լինելով, նրա սուրբ անուանը շատ զո-  
հեր են մատուցանում ու աղքատներին բաժանում: Մի  
քանի օրեր խնջոյքներ են կազմում, ուրախութիւն անում,  
զուարձանում ու երեխալին թլպատելով, անուանում են  
Ղայս: Այնուհետև սկսում են քնքոյշ պահել մեծացնել և  
մեծ հոգո ու խնամք ունենալ վերան, որ հողմերից ու արե-  
գակի ճառագալթներից չը վնասուի .. Մանաւանդ որ նրան  
չար աչք չը դիպչի ու նազար չառնի, պարանոցից ու բա-  
զուկից աչքահլուն ու թպղահլուն են քաշ անում:

Երեխան սկսում է օրըստօրէ հասակն առնել—աճիլ ու  
մեծանալ: Ծնողների միամօր զաւակը լինելով, ոսկէ խնձորի  
նման ձեռներիցը վայր չէին դնում: Այս դրութեամբ հաս-  
նում է երեքամեալ հասակին: Ամեն օր, ինչ տեսակ անուշ  
խօսքեր ասես, որ թութակների նման չէր թոթովում ծնող-

ներին ու նրանց սիրտը չափազանց ուրախացնում: Նրանց  
տունը երթևեկող բարեկամներն անգամ կայտառ ու գեղե-  
ցիկ մանկանը տեսնելով, միշտ սրտանց խնդրում էին Աս-  
տուծուց որ չար աչքից ազատ ու անվտանգ պահէ:

Այսպէս տարիքը հետզհետէ սահելով, երեխան մտնում  
է եօթ տարեկան հասակի մէջ և սկսում կամաց կամաց գի-  
տակցութեան հասնել: Մի կողմից էլ հայրն է սկսում նրան  
ամեն տեսակ մարդագարութեան ու քաղաքավարութեան  
մէջ կրթել ու վարժեցնել, որպէսզի երեխան ապագային  
կատարեալ մարդ լինի:

Այդ միջոցին, այն կողմերում մի հռչակուած ու բարի  
համբաւ ստացած ուսուցիչ է լինում, որ մեծամեծ ու հա-  
րուստ մարդկերանց որդոցը ուսում էր տալիս և կրթում ու  
դաստիարակում էր: Մի լարմարաւոր օր, ծնողները այդ  
վարժապետին հրաւիրում են տուն և լաւ հիւրասիրելուց  
յետոյ, իրանց որդի Ղայսին յանձնում են նրան ուսում և  
կրթութիւն տալու:

Վարժապետը նրան ընդունելով իւր խնամքի ու հսկո-  
ղութեան տակ, սկսում է իւր սանիկին կամաց կամաց դաս-  
տիարակել ու վարժեցնել. Խսկ Ղայսը դասերը վարժապետից  
լսելուն պէս, բոլորը միանգամից իսկոյն ըմբռնում է և  
սկսում ազատ, վարժ ու անօխալ կարգալ, այնքան որ շնոր-  
հալի, խելացի ու մտաբաց է լինում:

Պատմում են, որ նոյն տեղին մօտ ու սահմանակից,  
ուր Ղայսի ծնողներն էին բնակվում, մի ուրիշ Արաբական  
յայտնի ցեղ էլ կար: Այդ ցեղի գլխաւոր իշխանապետը մի  
ամենագեղեցիկ ու նազանի աղջիկ է ունենում, որ անուան-  
վում էր Լէլլի: Մի օր Լէլլու հայրն էլ իրան տանում յանձ-  
նում է այն վարժապետին, որի մօտ սովորում էր Ղայսը:  
Այնուհետև այդ երկուսը (Ղայսն ու Լէլլին) միենոյն յարկի  
և միենոյն ուսուցչի ձեռքի տակ, քրոջ ու եղբօր պէս միա-

միտ սրտով շարունակում են իրանց ուսման ընթացքը։ Պէտք եղած միմեանց օգնութեան հասնելով, սխալներն ուղղում ու դասերը սովորացնում են... Մէկ մէկու հետ նիստ ու կաց են անում... և ելքեմնսպէս յարմար միջոց ու առիթ գտնելով, ուսուցչից ծածուկ, ազատօրէն ծիծաղում ու հանաքներ էլ են անում։

Մի օր էլ Ղալուր Լէլլուն յանկարծ մտիկ տալիս, նլան թւում է, իբր թէ՛ երեսները վարդագոյն են, ծամերի հիւսերը փնջած սիւնսիւլ, ունքերը կամարակապ աղեղ, այտերը անուշահոտ բռւրկէն, նայուածքը սրած դաշոյն, աչքերը սրսուռ թաւիշ, իբանը յղկած մարմար և հասակը բարձրաբերձ նոճի... մի խօսքով ամբողջովին նմանում էր կարծես մի հառագալթարձակ լուսնի... Օր օրի վրայ նրա սէրն ու համակրանքը հետզհետէ աւալանում են դէպի լէլլին... և անբաղդ Ղալուի սիրտը այն օրից ընկնելով սիրոյ թակարթի մէջ, ոտքից զլուխ—հոգւով ու մարմնով անձնատուր է լինում սիլահարութեան։ Լէլլին նոյնպէս, ինչպէս մի կատարեալ սիրահար, մտիկ տալով Ղալուի վարմունքին ու դէպի ինքը տածած համակրանքին, ցնորուելու չափ ինքն էլ սիրահարվում է նրա վերայ... Կարճ խօսքով, երկու կողմից էլ դառնում են միմեանց պաշտող անձնանուէր սիրահարներ։

Ղալուր իւր սիրտը տուած լինելով Լէլլուն, կամաց կամաց սկսում է սրանց մէջ սիրոյ կայծը բռնկիլ ու բորբոքիլ և հետզհետէ ալրում—տոչորում է նրանց... Եւ այնուհետեւ վստահացած մէկ մէկու, յալտնապէս ամեն ինչ հաղորդում են միմեանց... Դաս սովորելու փոխարէն, գրքերը խփում են ու ամեն ինչ անգիր արած, թութակի նման անգիտակցաբար կարդում և ասում ու հանաքներ են անում... Միով բանիւ ամեն ինչից թուլացած ու բարձի թողի արած, զօր գիշեր միմիալն սիրոյ մասին են մտածում։ Սմբողջ շաբաթը վերջանում է, բայց իրանք օրերը պարապ ու դատարկ են

անյկացնում։ Առաւտները գլուխները ցաւում է ու մնում են թմբած գրութեան մէջ։ Այս գրութեամբ մի առ ժամանակ սրանց մէջ եղած սիրոյ կայծը հետզհետէ աւելի բորբոքվում ու աւելանում է։ Սիրոյ ձեռքից ոչ գիշերները գիշեր՝ ոչ ցերեկները ցերեկ էր, ամբողջ օրերն ախուվախով էր անցկենում։ Ովքեր էլ որ սրանց գրութիւնից տեղեակ էին, անարգում ու մի կողմից էլ խրատում էին թէ.—Այս ինչ է ձեր արածը՝ որ անում էք. ամօթ ու նախատինք չէ։ միթէ գուք ձեր արարմունքից չէք ամաչում։ Ձեր արածները ծնողներդ որ լսեն, խեղճերն ամօթից կաթուածահար պիտի լինին։ Մի փոքր ձեր արածների մասին, որի մէջ որ այժմ գտնվում էք, լուրջ մտածեցէք ու հասկացէք, թէ ինչ վատ հետեւանք ու տիսուր վախճան կունենալ, թէ իսկապէս ձեզ և թէ ընդհանրապէս ձեր ընտանեաց ու բարեկամների համար...» Դեռ էլի այսպիսի շատ խրատներ ու պատուէրներ էին տալիս, բայց անօգուտ, որովհետեւ երկուսից ոչ մէկին էլ չէին ազգում ու ներգործում այսպիսի խօսքերն ու խրատները։

Երկու սիրահարները իրանց խրատատուրներին հետեալ երկու տողով էին միայն պատասխանում։

Տկարիս թնդ հանգիստ,  
Որովհետեւ ոչինչ չգիտես,  
Ինձ խելագար է արել,  
Զը գիտեմ թէ դու ինչ կասես։

Այս ասելով, ոչ միայն իրանց արած արարմունքից և ուղղութիւնից յետ չեն կանգնում ու ձեռք վերցնում, այլ և գեռ մի բան էլ եղածի վերայ աւելացրած, օրերն ախուվախով են անցկացնում։ Սրանց սիրոյ մասին ամեն ոք խօսում էր։ Նրանց ցեղակիցները միմեանց հետ խօսելիս, նրանց

խօսակցութեան նիւթն ու առարկան այդ երկու սիրահարներն էին։ Մինչև անգամ նրանց վերալ երգեր էին յօրինել ու երգում էին։

Այս բանը Լէլլու հօրը խիստ ամօթ էր բերում։ այդ պատճառով էլ աղջկան մի առ ժամանակ դպրոց յաճախելուց յետաձգում է և չէ ուղարկում։ Այդ բանը երկու սիրահարների համար այնքան վիրաւորական էր, ինչքան սոխակին վարդից բաժանելը։ Այս անջատումից յետոյ, աշխարհը նրանց գլխին մթնում է, մնում են տխուր ու տարակուսած։

Խղճալի Ղայսը սիրոյ կրակին մօտենալով, հետզհետէ այրվում ու տոչորվում էր. և այնուհետեւ սկսում է սիրուհու վերալ յարմարաւոր ու պատշաճի երգեր յօրինել ու երգել. որոնցից մէկն ահաւասիկ այս է. —

Բաղդի ձեռքիցն արաւ անձս բաւականին աղաղակ,  
Մեռնելուց զատ էլ չը մնաց ուրիշ ոչ մի աղաղակ,  
Այն անբաղդ մարդկանցից եմ որ ժամանակն հալածում է,  
Մօրիցը ծնուած օրիցը անում եմ լաց աղաղակ։

Ըստարձակ ծմակ տեղերում սիրոյ մեծ կրակ կանեմ,  
Թէ չը գնաց սրտիցս այսօր ցաւն ու կսկիծ—աղաղակ։  
Սիրահարը իւր կեանքի մէջ, միայն երկու բան ունի,  
Մինը իւր քաշած հոգսերը, միւսը կարօտն—աղաղակ։

Բարակ մատներս գրիչ արած, իսկ բերանս կաղամար,  
Սիրուհուս աղերս կը գրեմ, կանեմ սուգ ու աղաղակ,  
Քաղքից քաղաք աղքատի պէս, ամբողջ տարով ման արի,  
Լեռները մի գնա Մաճնուն, քաղքումն արա աղաղակ։

Այս տեսակ ողբալով ու լաց լինելով, աչքերից արիւն արտասուք էր թափում։ Ֆողովուրդը նրան այս դրութեան մէջ տեսնելով, ոմանք դառնանցում էին և ոմանք վերան ցա-

ւելով ասում. — «Խղճալին սիրոյ կրակով այրուած, տեսէք թէ ինչ ցաւի հանդիպեցաւ. Աստուծոյ խնամքն ու ողորմութիւնը հասնի» ասելով՝ խնդրուածք էին անում. Իսկ ոմանք էլ մեղադրանք էին կարգում թէ. — „Այս գժին մտիկ արէք, որ մի աղջկայ սիրոյ համար ամբողջ օրերն ու ժամանակը կորցնում է ու ինքը տառապում և ուրիշներից կողմանակի օգնութիւն հայցում։ Որան եթէ մի քիչ ծեծող լինի, ասում էին, իսելքը շուտ գլուխը կգալ. և այնուհետեւ անունը դնում են „Մաճնուն“։

Լէլլու ցեղակից Արաբներն այդ բանին ուրիշ կերպարանք են տալիս ու մտադրվում վրէժինդիր լինել, իսկ նրա հայրը ստիպուած է լինում մի առ ժամանակ աղջկան իւր տանից բացակայ և հեռու պահել ու Մաճնունի աչքից ծածկել — անլայտացնել. Բայց Մաճնունը նրանց բնակավայրին մօտ գալով, Լէլլու բնակարանի շուրջը հեռուից մի քանի անգամ պտոյտներ է գործում ու ինքն իրան — „գոնէ մի անգամ էլ նրա դէմքն ու գեղեցկութիւնը տեսնեմ, այնուհետեւ թող Աստուած հոգիս առնի» ասում է և լաց ու կոծ անում ու մեղմիկ երգելով ման է գալիս։

Մէկ էլ թող երեսդ տեսնեմ,  
Իմ աննման սիրուն հրեշտակ,  
Քեզանից կարօտս առնեմ,  
Չասեն մնաց թերափափագ։

Երբ միտս է գալիս աչերդ,  
Լուսաթաթախ սուրբ պատկերդ,  
Մաճնաւանդ աղեղ ունքերդ,  
Կեանքս գնում է ոտնատակ։

Դուրս եկ ծաղկանց մէջ ման արի,  
Որ Մաճնունը կարօտն առնի,  
Մի օրս գառել է տարի,  
Թափառում եմ աննպատակ։

Լէլին Մաճնունի երգի ձայնը լսելով, նոյն ժամայն սիրտը թռչունի նման տեղից թռչում—գուրս է գալիս. բայց խղճալին Բնչ անէր. անգութ ծնողների երկիւղից տեղից շարժել և ձայն ու ծպտուն հանել չէր կարողանում:

Մաճնունը իւր այդ գրութեան մէջ մի երկու ընկերներ ունէր, որոնք մշտապէս նրանից անբաժան էին ու նրա վերայ խոտ հսկում և նկատում էին, որ խելքից դուրս անկարգութիւններ չանէ... կամ իրանք գիտենան, թէ նա ուր է գնում և ինչեր է անում: Բայց Մաճնունը պատահելիս, մշտապէս Լէլլուն ասելիս է եղել որ, եթէ բացի իրանից, մի ուրիշին սէր տայ և հնտը խօսի, իւր մտերմական յարաբերութիւնը խօպառ կը կարէ նրանից և այնուհետեւ իւր ասածներին պատասխան անգամ բնաւ չի տալ:

Պատմում են որ Լէլլու բնակաբանը Նէճիտ լերան ստորառումն էր գտնվում: Մաճնունը ամեն առաւտ ընկերների հետ միասին գնում էր այդ լերան ստորառը և հեռուից կարօտ աչքով ուղիղ նայում էր գէպի Լէլլու բնակաբանին... տիսուփախ անում, լալիս: Աչքերից գառն արտասուքի փոխարէն արեան կաթիլներ թափում և երկրի երեսը կարմիր կակաչի նման ներկում ու Լէլլու տան կողմից փշած հով ու զովին հետեւեալ տողերն ասում:—

Կեանքս ու հոգիս գրաւեցիր գէպի քեզ,  
Թռւաւաւորւեց սիրտս՝ գարձայ ապիկար,  
Մարդէք զուցէ շատ երանի կտան մեզ,  
Բայց սիրուցդ յատուկ եղալ խելագար:

Թարմ հասակից սէր-կրակիդ մէջ ընկայ,  
Կարծելով թէ սիրտս հանապազ պիտ խնդար,  
Բայց ափսոս որ՝ մի ուրախ օր չը տեսալ,  
Զգացի որ՝ սխալութ եմ չարաշար:

Անբաղդ Մաճնուն, Բնչ օգուտ լալ-ողբալդ,  
Թափառական լեռներ ձորեր մանգալդ,  
Բաւական չէ սիրուհու կեանք բաղձալդ,  
Եթէ չունիս քեզ նման ջերմ սիրահար:

Այս խօսքերով այնպէս էր պատկերացնում իրան, որ իբր թէ հովերի հետ իւր սիրուհու անուշ հոտն է բուրում, կամ թէ չէ, այդ հովերը Լէլլուց իրան բարեւ են բերել: Ամեն ժամանակ հովը երեսին խփելիս, Մաճնունը այդ հովը իւր այրուած սրտին սպեղանի էր համարում... Մշտապէս լեռներից փշած հովերին խօսքեր էր ասում ու իւր կողմից նրանց հետ բարեւ ուղարկում: միւնոյն ժամանակ գանգատ ու տրտունջ յալտնում իւր սիրուհուց: Լեռներից թռչող աղաւնիները, որոնք Լէլլու բնակաբանի վրալից կամ առջեւից էին անցնում ու գալով հանդիպում էին Մաճնունին, կարծելով թէ իւր սիրուհին նրանց էլ անպատճառ մի բան ասած կը լինի, սիրտը կրակ լցուած, աղաւնիներին այս տողերն է ուղղում:—

Փչէ, մի գաղարի, հով ու զով քամի,  
Սիրտս ամեն վալրեկեան քեզ է սպասում,  
Սիրուհիս թէ սրտով ինձ բարիք կամի,  
Էլ ինչո՞ւ իմ տուած կեանքս ափսոսում:

Սրտիս խորունկ վէրքը սիրուհիս տուաւ,  
Նրա զցած նետը խեղճ հոգուս դիպաւ,  
Երբոր ձեզ ուղարկեց, արդեօք ինչ ասաւ,  
Զկարծեք թէ զառանցելով եմ խօսում:

Ուր էք փախչում, մի քիչ կանգ առէք-կացէք,  
Դրութեանս մէջը մտէք-ողբացէք,  
Թէ սիրտ ունիք, դուք էլ ինձի հետ լացէք,  
Ինչ էք մէկ մէկու հետ այդքան քսփըսում:

Սիրուն աղաւնիներ, անուշիկ զեփիւռ,  
Վարդ, մանիշակ, շուշան, խօրօտ համասփիւռ,  
Երջ հանդիպէք չքնաղ Լէլլուս լուսասփիւռ,  
Ըսէք, Մաճնունն միշտ բաղդից էր գանգատում:

Այս խօսքերից լետոյ.— „Ա՛խ, Բնչ կը լինէր, որ ես էլ  
Ճեզ նման թեւեր ունենալի ու թռչելով գնալի սիրուհուս  
մօտ և նրան տեսնէի“ ասելով, աղաղակում ու լաց է լինում  
և ընկերների հետ վերադառնում գալիս դէպի իրանց բնա-  
կավայրը:

Մի օր էլ Մաճնունը ընկերների հետ ուղիղ Լէլլու բնա-  
կարանին մտիկ տալիս, տեսնում է՝ որ բնակարանի շրջա-  
կալքը բացուել են, ինքը Լէլլին տասնուհընդած—բոլորած  
լուսնի նման իւր շրջապատողների մէջ նազելով ճեմում է:  
Մաճնունը կարօտալի աչքերով ու ագահաբար նրա շորորա-  
լով անցուդարձին է մտիկ տալիս և վշտից ու սրտի սաս-  
տիկ կսկծից աչքերից մարգարտանման արտասուք թափում:  
Այնուհետև Մաճնունը առաջ գալով և գողի նման աջ ու  
ձախ մտիկ տալով, տեսնում է, որ իրան նկատող ոչ ոք չը  
կայ, ջանք է անում աւելի առաջ գալ և մօտենալ սիրու-  
հու բնակարանին ու դարձեալ սկսում է լացն ու կոծը:  
Լէլլին իւր սրտակցին այս դրութեան մէջ տեսնելով, սրտի  
խորքից մի բոցաշունչ ախ է քաշում: Այնուհետև Մաճնունը  
իւր վիշտարուած սրտի կսկծանքը հետեւալ բողոքարկու-  
երգով է արտայալտում:—

Մօտ չը գալով դու ինձի, գեղատեսիլ անկամորդ,  
Սկերես կացար մօտս, դեի նման անկամորդ,  
Արևի պէս երեսդ թանձր քօղով ծածկեցիր,  
Ամպանման քոյ սիրտդ լինի մաս մաս անկամորդ:

Ինձ հրճուելու չը թողիր, արեցիր վտարանդի.  
Վանեցիր քեզնից հեռու, մի կողմ թողիր անկամորդ.  
Խեղճ անձս մոխիր դառաւ շատ ախուվախ քաշելուց,  
Կարծում ես երկութից է կռած—կոփած անկամորդ:

Ոուր դաշոյնով, նիզակով, պէս պէս զօրեղ թոյներով,  
Տկար անձս վիրաւոր արէր—թողիր անկամորդ,  
Թշուառական Մաճնունիս, կրակում խորովելով,  
Հող ու մոխիր դարձրիր, քամուն տուիր անկամորդ:

Այնուհետև խղճալի Մաճնունը չը կարենալով իրան  
զսպել, գնում է դէպի Լէլլուն ծածկող վարագոյրը ու սկսում  
իրան գետնէ գետին խփել և մէջտեղը աղմուկ ու աղաղակ  
բարձրացնել: Ընկերները նրա այս արարմունքից ամաչելով  
ասում են.— „Ահ, այսօր գարձեալ նախա ձեռք տուինք“:  
Լէլլու հօր կողմնակից մարդիքը վրայ հասնելով տեսնում  
են կատարուած եղելութիւնը՝ և չը թողնելով անկարգու-  
թիւնը շարունակելու, ընկերներին մի թեթև ողատժում են  
ու Մաճնունի ձեռքից բռնած ուղղակի տանում են դէպի  
լեռնակողմը և այնտեղ խրատելուց ու սպառնալիքներ տա-  
լուց լետոյ՝ իրանք վերադառնում են տուն:

Մաճնունի հայրը որդու դրութեան մասին տեղեկու-  
թիւն առնելով, վեր է կենսում գնում է դէպի լեռնակող-  
մերը, որ տեսնի թէ, որդին որտեղը անք է ման գալիս և  
ինչ է անում .. Մաճնունը իւր Լէլլու վերայ ունեցած սի-  
րահարութիւնը հօրը հետևեալ սրտաբորբոք երգով է հաս-  
կացնում:—

Տիուր սիրտս մաղձոտելով, դառնացրիր ով զեփիւռ,  
Լէլլու ծամերն արշալուսին դու ծածանիր, ով զեփիւռ,  
Հարիւր տեսակ թէկուզ փշես, նա ոչ ոքի սիրտ չի տայ,  
Իսկ բնութիւնը այսպէս է, հաստատ գիտցիր, ով զեփիւռ:

Վաղուց անգօր սրտիս մէջը տեղ ունի այն գեղանին,  
Նրան հոգւով գու սրտակից քեզ ընդունիր, ով զեփիւռ,  
Ոլոր-մոլոր ճանապարհով դարձուր ու քոյ հետդ բեր,  
Լէլու հոտք... լացն ու կոծն տեղեկացիր, ով զեփիւռ:

Այս աշխարհում մինչ կը փչես, գոնէ արտասուացս համար,  
Խնդիրս Աստուծոյ ատենի առաջն հանիր, ով զեփիւռ,  
Ես տարագիր խեղճ Մաճնունն եմ, ինձի գետնով մի խփի,  
Չեռնիցս բռնած առաջնորդէ, տուր սիրուհուս, ով զեփիւռ:

Երգն աւարտելուց յետոյ, կամ Լէլու բնակարանի մօտեր-  
քըն էր գնում ու վշտահար աղաղակ բարձրացնում, կամ թէ  
չէ վերադառնում գալիս էր իրանց բնակավայրը:

Հայրը որդուն այս տեսակ սիրահարութեան մէջընկնելը  
տեսնելով, աչքերից աղբիւրի նման դառն արտասուք էր  
թափում: Մի առ ժամանակ անցնելուց յետ. ոլացը սրան չի  
օգնէ, ասում է. պէտքէ բանագէտ մարդկերանցից մի ժողով  
կազմել այս չարիքի առաջն առնելու, կամ մի ուրիշ հնար  
գտնելու համար: Այս նպատակով իրանց ցեղի մէջ գտնուած  
բոլոր փորձառու մեծամեծ մարդկերանց իւր մօտ հրաւիրելով,  
որդու վիճակի մասին յալտնում ու խորհուրդ է հարցնում:  
Ամբողջը մի տեղ եկած, ցաւալի հօր որդու դառն վիճակի  
մասին արած յայտարարութիւնը լսելուց յետոյ, նրա ցաւերին  
մի ելք ու հնար գտնելու համար, միասին խորհում ու  
խորհուրդ են անում: Երկար ու բարակ խորհրդածելուց յե-  
տոյ, սրանք, ինչպէս ասում են, խօսքերը մի աման գնելով,  
վերջնական որոշում են կալացնում ու արժան տեսնում, որ  
գնան օրինական ճանապարհով Լէլուն Մաճնունի համար  
ուզելու: «Որովհետեւ, ասում են, մեր ցեղը նրանցից պակաս  
չէ, և այդ նպատակի համար որքան էլ որ մեծամեծ ծախքեր  
ու այլ անհրաժեշտ կարիքներ լինին վճարելու կամ հոգալու,

մենք ուրախսւթեամբ բոլորը մեր սեփականութիւնից կը  
գնալենք, միայն թէ այս գործը կարգին գլուխ դայ ու քա-  
ղաքավարութեամբ վերջանալու: Այս բանը հաստատուն կեր-  
պով վճռել ու որոշելուց յետոյ, ընտրուած հարսնախօս պատ-  
գամաւորները ուզզակի դիմում են դէպի Լէլու հօր բնա-  
կավալը:

Տեղեկութիւն են տալիս Լէլու հօրը, թէ Արաբական  
այս ինչ ցեղի ցեղապետը իւր բէգերի ու նշանաւոր մեծա-  
մեծների հետ գալիս է քեզ մօտ ալցելութեան: Ընդառաջ  
դուրս գալով ու դիմաւորելով նրանց... «բարով հազար բարի  
եկաք, մեր գլխի, մեր երեսի վերայ տեղ ունիք» ասելով՝  
առաջնորդում են նրանց դէպի իրանց բնակավայրը: Մի փոքը  
հանգստանալուց յետոյ արժանավալել կերպով պատվում,  
մեծարում ու կերակրում են: Ճաշի սեղանից վերկենալով՝  
հիւրերն սկսում են իրանց գնալու նպատակի վերաբերմամբ  
խօսք բաց անել:

Մաճնունի հայրը ինչ նպատակի համար գնալները յայտ-  
նելով, ասում է. «նպատակներս այն է, որ ի վաղուց անտի  
մեր բարեկամութիւնն ու միմեանց հետ ունեցած մտերմա-  
կան յարաբերութիւնը միտ բերելով և ցանկանալով որ  
այսուհետեւ այդ բարեկամական կապը ևս առաւել ամրապն-  
դուի ու անխզելի մնայ, Ալլահի ամենակարող զօրութեամբ  
եկել ենք ձեր Լէլի անունով աղջկան իմ որդի Մաճնունին  
ուզելու և երկուսին միասին ամուսնացնելով՝ բաղդաւորաց-  
նելու»:

Այս խօսքերի վերայ, միւս խնդրակ գնացող պատգամա-  
ւորներն էլ իրանց կողմից աւելացնում են. «մենք էլ ալդ  
բանը անարգել գլուխ գալու համար խնդրելու ենք եկել, և  
արժան ենք տեսնում... մանաւանդ թէ խիստ յարմար ենք  
գտնում միմեանց. որովհետեւ յայտնապէս դիտենք, թէ ինչ-  
պէս ձեր դուստրը, նոյնպէս և Ամիրայի որդին ծնողների

համար միամօր զաւակներ են... Եւ բայի այս, ձեր երկու ցեղապէտների մէջ արենակցական կապը և բարեկամութիւնը նորոգուելով ու հաստատուելով, այնուհետեւ այլ ևս որ և է թշնամութեան տեղիք բնաւ չի մնալ. և արտաքին թշնամիները այդ բան տեսնելով, ոտնձգութիւն չեն անի դէպի ձեզ որովհետեւ գիտեն որ ալդպիսի դէպերում, իբրև սրտակից բարեկամներ, միմեանց օգնութեան ձեռք կը կարկառէք: Այդ բանն անելով ու գլուխ բերելով, բոլոր Արաբ ցեղերի մէջ ձեր շնորհքը, լարգանքն ու պատիւը օր աւուր պիտի աւելանայ: Դեռ չենք ասում և այն՝ որ այդ երկու նորահաս ու դեռափթիթ ծաղիկները, ինչպէս որ դուք էլ մասամբ գիտէք, միմեանց վերայ սաստիկ սիրահարուած են, և մէկը միւսից անջատել, եթէ չասենք մեղք է կամ անհնարին, գոնէ շատ դժուար է... և գուցէ ապագային ալնքան էլ պատուաբեր չը լինի ձեզ համար:

«Նատ գեղեցիկ էք հրամայում, պատասխանում է Լէլլու հայրը, բայց դուստրս առ այժմ դեռ ևս անչափահաս է: Առ ժամանակ խնդրումեմ մի փոքր դադար տաք, մինչև մի քիչ արբունքի հասնի, այն ժամանակ գլխիս վերայ, համեցեք եկէք, միթէ ձեզանից լաւին պիտի տանք»:

«Նատ բարի, ասում են խնամախօսները, թող ձեր ասածի նման լինի: Բայց որպէս զի ուրիշները չասեն թէ, այս ինչ ցեղի մեծամեծները իրանց գլխաւորի հետ եկան ու դատարկաձեռն վերադարձան գնացին, որ ամօթ ու անպատ ուաբեր է մեզ համար, բեր նշանադրենք, հարսանախօսութեան սովորական գրաւականները փոխադարձապէս տանք ու առնենք, այնուհետեւ երբ հրամայեցիք, կգանք մեր հարսնացուն կը տանենք...: Այս էլ իմացէք, որ բաժինքի, գլխացէք և ուրիշ կարեսոր ու անհրաժեշտ ծախքերի համար ոչ մի բան չենք խնայի: ամեն ինչ առաջարկեն-ձեր սրտի ուզնքի մեջ ուրախութեամբ կը վճարենք ու փոխա-

րէնը—բացի մի աղջկանից ձեզանից ուրիշ ոչ մի բան չենք պահանջի: Ահա այս է մեր վերջին խօսքն ու խնդիրը:

Այս խօսքերից Լէլլու հայրը նեղն ընկած ու անձարացած, հետևեալ վճռական պատասխանն է տալիս թէ. «խօսքի ճշմարիտն այս է, լարգելի բարեկամներ, որ ձեր որդին մի կատարեալ գիտ զատ է... ժամանակ առ ժամանակ մեր բնակավայրի շուրջը պլոտելով, սիրահարական բովանդակութեամբ զանազան երգեր է երգում իմ դստեր հասցէին, որոնք ձեզ քաջ լայտնի է, որ մեր Արաբ ցեղերի մէջ ընդունուած բաներ չեն... բայց այդպիսի արարմունքներից մարդ կատարելապէս խայտառակվում է: Այսքանը, պատուելի իշխաններ, գուք ինձ հարկադրեցիք ասելու, և ես հարկից ստիպուած յակամայից ասացի: Բայց եթէ դուք հնար գտնէք ձեր որուն այդ հիւանդութիւնից բուժելու և խելքը գլուխը բերելու, այն ժամանակ ոչ միայն դուստրս, այլ հօգիս էլ ձեզանից չեմ խնայի... Բայց թէ այժմեան դրութեամբ, անկարելի է որ ձեր որդուն աղջիկ տամ... Այս բանի մէջ խընդրում ինձ չեմ չեմ չը դատապարտէք, որովհետեւ քաշվում ու ամաչումեմ, որ վաղը բոլոր լսողները ինձ անպայման դատապարտելով պիտի ասեն, թէ, վեր առու միամօր զաւակ աղջիկը մի գժի տուեց... ու բերնէ բերան ընկնելով, աժող չաժողի խօսքի ու զրոյցի նիւթ պիտի դառնամ: Ուլիեմն գիտցէք, քանի որ իմ ասածի պէս չը լինի բանը, անկարելի է որ մեր բարեկամութիւնը գլուխ գալի»:

Այս իրաւացի առաջարկութիւնը Լէլլու հօրից լսելով՝ Մաճնունի հայրն ու խնամախօսները յուսերը Լէլլուց կտրած վերադառնում են Մաճնունի մօտ և ամեն ինչ նրան պարզաբար լայտնելուց յետոյ աւելացնում են.— «Դու անհոգ կաց, մենք քեզ համար Լէլլուց աւելի գեղեցիկ աղջիկ կուզենք... մեր ցեղի մէջ գեղեցկուհիներ շատ կան... ահա, այս

ինչի աղջիկը աննման գեղեցիկ է, թէ որ կը հաւանես, ասում  
են, այն աղջիկը ալսօր և եթ կուզենք քեզ համար...”:  
Որքան էլ որ գեղեցիկ աղջկերանց անուններ են տալիս,  
այնու ամենայնիւ խղճալի Մաճնունը սրանց առաջարկու-  
թիւնները լսելով, խելքը գլխից գնում է... սկսում է օձիքը  
պատառել և լաց ու թաց անել .. այնուհետեւ կարծես գժու-  
թիւնը աւելանում ու սաստկանում է: Գիշերները գնում է  
դպրոցի շուրջը պտտելով երգեր է երգում և լաց լինելով  
ինքն իրան զառանցում .. Ուտել խմելուց իսպառ ընկնում—  
կտրվում է...— „Այսուհետեւ, ասում է, ամեն յուսոյ դռները  
իմ դէմ փակուած են. միայն վշտի ու ցաւի ճանապարհներն  
են բաց երեսում... բայց կարօտ սիրուհուս երեսը չեմ տես-  
նում, որովհետեւ թանկագին շալերով պինդ փաթաթուած  
է...: Հանգիստ ու խաղաղ օրերս ցաւով ու վշտով լցուեցան,  
սիրտս սիրուհուս կարօտով տապակուեցաւ... Գլխիս վերալ  
մելամաղձատութեան թռչունները վեր եկան ու բոյն դրին...  
իսկ սև ճակատագիրս անբաղների գրքի գլուխը գրուեցաւ...  
Այսուհետեւ բարեկամներին տիրեցնելով և թշնամիներին  
ուրախացնելով պիտի թողնեմ ու օրերս թշուառութեամբ  
անցկացնեմ.., Օտարներն ինչ ուզում են թող ասեն... բայց  
արգեօք ալսուհետեւ իմ աննման սիրուհին ում պիտի վի-  
ճակուի կամ արժանի լինի... Արգեօք նա խղճուկ սիրահա-  
րիս գրութիւնից տեղեկութիւն ունի... Արգեօք նա իմ այս-  
պէս ալրուել—տոչորուելս գիտէ թէ ոչ... Գոնէ մի անգամ  
բարե զրկելով վշտալոյս բաւականութիւն տար ու հանգս-  
տացնէր... Ա՛խ, արգեօք գլուխս այնքան ժամանակ ողջ  
պիտի մնալ, որ ալսքան մեռնելուց ու կենգանանալուց յե-  
տոյ, մի անգամ էլ դրախտի սրտում ոտքը երեսիս գնէր...  
բաց աչքով մին էլ երեսը տեսնէի ու ինձ ասէր թէ, „մի  
վախենայ, չես մեռնի ու կը տեսնես...“ ասելով՝ աղտղակ  
բարձրացրած լաց է լինում ու երգում է.—

Սիրտս աւեր քաղաք դառաւ սիրելի,  
Մեղք եմ մի շարշարիր այդքան դու ինձի,  
Անհոգ մնալ բնաւ քեզ չէ ներելի.  
Մի թողնի որ ինձապէս ջիւանը խանձի:

Կեանքիս արշալոյսը զեռ նոր է ծագել,  
Սիրտս ուրախութիւն-խնդութիւն հագել,  
Բայց բաղդը ինձանից երես է թեքել,  
Սոխակն իմ վիճակին էլ չի նախանձի:

Ինչու այստեղ հասաւ մեր գրութիւնը,  
Միթէ մեզ էր պահուած ստրկութիւնը,  
Ո՞վ սերմանեց մեր մէջ այս շարութիւնը,  
Վատ հոգի սերմացանն բարով պապանձի:

Դէմ անուշիկ կէյլի, ինձ մի խօսք ասա,  
Թէ «չես մեռնի, մի օր կղառնաս փեսայ»  
Տարաբախտ Մաճնունիդ ցաւի—ափսոսա,  
Թշնամու պէս անբոյժ վէրք մի տայ ինձի:

Իսկ ողորմելի հայրը տունն ու որդին ալսպիսի խառ-  
նակ ու սգալի գրութեան մէջ տեսնելով, սիրտը կտոր կտոր  
և տակնուզրայ է լինում: Այս ցաւին մի ճար ու ճարակ չը  
գտնելով, և հետզհետէ ցաւերն ու հոգսերը միմեանց վերալ  
բարդուելով, համարեա խելագարփում է:

Մաճնունի ցաւին որեւ է հնար չը գտնելով, ոմանք  
հօրը խորհուրդ են տալիս, որ «Քեւապա»—Մահմատ փէղամ-  
պարի գերեզմանին ուխտ տանի, վերան Ղօւռան կարդալ  
ու աղօթք անել տայ, որ մի մեծ յոյս է, ասում էին... դուցէ  
թէ լաւ լինի և առողջանայ:

Մաճնունի հայրը ասողնեեի հետ համամիտ լինելով և  
այս խորհուրդը հաւանական գտնելով, միտքը գնում է, որ

ալդ տարին որդու հետ միասին Մահմատ վէղամպարի գերեզմանին ուխտի ու երկրպագութեան գնայ... ծանապարհի պատրաստութիւն տեսնելով, Մաճնունին մի պատգարակի վերայ է գնում և միտքն առ Աստուած ուղղած, որդու հետ միասին դիմում է դէպի փէղամպարի թաղած սրբավալը:

Թշուառական Մաճնունը տեսնելով, թէ իրան հետ ինչ խաղեր են խաղում, բորբոքուած սրտով հետևեալ ճշմարտապատում երգն է երգում.—

Ինձի զժի տեղ դնելով,  
Հեռու տեղեր ուխտ են տանում,  
Դրութիւնս չը քննելով,  
Անխելք ու գիմ են անուանում:

Սիրահարին սուրբն ինչ անէ,  
Ուխտ գնալը զատարկ բան է,  
Այս նեղ դրութիւնից հանէ,  
Լէյի, քեզ եմ ապաւինում:

Սիրոյ գեղը՝ սիրուհին է,  
Եմ գեղն էլ չքնազ Լէյին է,  
Հօր տան մէջը աղախին է,  
Թշուառից վբէժ են հանում:

Այս էլ կանցնի խղճուկ Մաճնուն,  
Դուք կունենաք բարի անուն.  
Լէյլուդ հետ կլնիք տեղուտուն.  
Ապագան այս է խոստանում:

Նպատակատեղին հասնելով,— „Սիրելի որդի, ասում է հայրը, այստեղ սուրբ սրտով ու մաքուր հաւատով ինչ խնդրուածք որ անենք, սրբազն մարգարէն կը լսէ ու կը

կատարէ, Երբ մարգարէի թաղած սրբավալը կը մտնենք, ժողովրդի հետ մօտեցիր սուրբ գերեզմանին և ջերմեռանդորէն համբուրելով՝ ցաւերիդ փարատութիւն խնդրէ և ասա.

— „Ով Տէր, դու այս սիրոյ հուրը ինձանից հեռացուր և ինձ այս ցաւից ազատ արա, որպէսզի առաջուան պէս իմ նախկին անմեղ դրութեանս պէս մնամ...“ Մաճնունը հօր բերանից սէր բառը լսելով, բորբոքվում է և ուխտաւորների հետ մօտենալով մարգարէի սուրբ գերեզմանին, բազկատարած խնդրում է.— «Ով մեծ մարգարէ, ցաւի պատահելով ու երեսս գետնին քսելով, դուռդ ուխտի ու երկրպագութեան եմ եկել, քոյ մեծազօր կարողութեամբդ, կաղաչեմ, խընդրուածքս լսէ ու կատարէ...“ Մի փոքր թմրութիւնից լեռու աւելացնում է, — «Ով Տէր Աստծու մեծ մարգարէ, կամենում են ինձ սիրոյ կրակից սառեցնել ու սիրուհուց բաժանել — հեռացնել։ Ողերսում ու պազատում եմ քեզ, կամ սէրս օր աւուր ևս առաւել աւելացուր ու բորբոքէ, կամ թէ կեանքիս՝ այս սիրոյ ճանապարհում վերջ տուր, որ ազատիմ», համառօտ խնդրուածքն է անում։

Հայրը որդուն այս դրութեան մէջ տեսնելով, „ալես այսուհետեւ սրան հնար գտնել և այս հիւանդութիւնից փրկել ու ազատել խիստ դժուար է“, ասում է ու լաց լինելով հետը վեր առած միասին, կրկին վերագառնում են տուն։

Բայց միւնոյն ժամանակ, Լէյլու ցեղակիցները վրէժխնդրական կրքերով լցուած, հետամուտ են լինում Մաճնունին սպանելու։ Խսկ նրա հայրը այս բանին տեղեակ լինելով, սկսում է որդու հետքը արթնութեամբ հսկել ու պահպանել, որ չը վնասեն։

Եւ որովհետեւ Մաճնունը արդէն հօր հետ ուխտատեղից վերագարձել եկել էր, ուստի, դարձեալ առաջուան նման, Նէճիթ լերան ստորոտներումն էր շրջագալում և

մօտենալով Լէլլու բնակարանին, լաց ու կոծ անելով, հետևեալ սրտաշարժ երգն է երգում —

Ուրախ կինիմ երբոր սիրտս շրջապայի յուսոյ մէջ,  
Հողսերի ժամանակ ինձի, կանգուն պահի յուսոյ մէջ,  
Թէ որ բարեն ինձնից կտրէ, այն չքնաղ արարածը,  
Սպեղանի տալու փոխան, ինձ կսպանի յուսոյ մէջ:

Թունաւոր բորբոքումները ինձ վիրաւոր չեն անի,  
Երբ սիրուհիս անօգնական ինձի թողնի յուսոյ մէջ,  
Մինչև անգամ արագին էլ, եթէ զլսիս բոյն դնէ,  
Նրա ստուերն ինձ անվնաս կը պահպանի յուսոյ մէջ:

Թէ իսկապէս մերկ էլ մնամ, ինձ մի խրճիթ կը շինեմ,  
Աշխարհում չեմ մնայ առանց բնակարանի՝ յուսոյ մէջ,  
Պաքերն ընկած կաղերսեմ, չեմ թողնի որ յոյսս կորի,  
Խնդիրըս լսել կտամ ու չեմ մեռանի յուսոյ մէջ:

Լէլլու ցեղակիցներից մի քանի պատուաւոր մարդիք,  
Մաճնունի արարքների համար գնալով Լէլլու հօր մօտ ու  
բողոք բառնալով ասում են. — „Մեր ցեղի պատիւը ոտնա-  
տակ է գնում այդ ստահակի երեսից, ամեն օր այն անիրաւը  
գալիս անկարգութիւններ է անում. նրան իւր չափը պէտքէ  
ճանաչացնել, որպէս զի այդ անկարգ սիրուց ձեռք վերցնէ  
ու դադարի»:

Լէլլու հայրն իւան արած բողոքից ամաչում է ու անձը  
վիրաւորած համարելով՝ վճռաբար ասում է. «Ես Մաճնունին  
կսպանեմ — կոչնչացնեմ... և սկսում է գրգռուել... ու հրա-  
մայում է իւր զինակրին, որ Մաճնունը իրանց կողմերը  
երեցած միջոցին, անպատճառ իրան իմաց տալ, կամ ինքն  
սպանէ անլայտացնէ նրան, որ հետքն էլ չերեալ:

Այս լուրը Մաճնունի հայրը իւր լրտեսներից առնելուն

պէս, հոգին բերանն առած, աշխատում է որդուն որոնել  
գտնելու և եղածը նրան հասկացնելու համար, ամեն կողմ  
մարդիք ուղարկել, որ նրան գոնէ գտնեն ու այլ և այլ  
ցուցմունքներով ու նշաններով բանի էութիւնը նրան հաս-  
կացնեն, որպէսզի զգոյշ մնայ և փորձանքի չը հանդիպի...  
Միենոյն ժամանակ ինքը համարեա ամեն բանից լոյսը  
կտրած, սկսում է լաց ու կոծ անել:

Պատմում են թէ, Բանի — Սայիս արաբական ցեղից մի  
մարդ ճանապարհ գնալիս, տեսնում է որ մի նորահաս երի-  
տասարդ անապատում կանգնած լաց է լինում ու երգեր  
երգում: Նրան մօտենալով լաց լինելու պատճառն հարցնում  
է ու տեղեկանալուց յետոյ, առանց ձայն հանելու շարու-  
նակում իւր ճանապարհին ծանապարհին Մաճնունի հօր  
ընակավայրը պատահելով, տեսնում է, որ բազմութիւնը հա-  
ւաքուած մի սպանութեան մասին են խօսում: Հետաքրքրու-  
ելով, սկսում է սպանուածի նշանները հարցնել... Տեղեկա-  
նալով որ խօսողները մի այլ անձի վերայ են մատնացոյց  
անում... Նրանց ցոյց տուած նշաններից հասկանում է, որ  
ասածները իւր մի քանի ժամ առաջ անապատում տեսած երի-  
տասարդն է, որին ինքը պատահել էր, իսկոյն ասում է. —  
«Աչքերդ լոյս և աւետիք ձեզ... ձեր ասած մարդին ես մի  
քանի ժամ առաջ այս ինչ տեղը իմ աչքով տեսալ և նա  
ողջ առողջ է»:

Այսքան բանը այդ ճանապարհորդից լսելով, իսկոյն  
նրան վերցնում բերում են Մաճնունի հօր մօտ, որ նրա որ-  
դուն որտեղ տեսնելու մասին տեղեկութիւն տայ: ծանա-  
պարհորդից ստոյդ տեղեկութիւն տռնելով, հայրն իսկոյն մի  
քանի մարդկերանց հետ ձի նստած գիմում են գէպի մատ-  
նացոյց արած կողմը, և տեղ հասնելով տեսնում, որ արդարեւ  
Մաճնունը մի քարափի տակ նստած երեխի նման հողերի  
հետ է խաղում: Հայրը որդուն այս ցաւալի դրութեան մէջ

տեսնելով, սիրտը բորբոքուած, լաց լինելով մօտենում է նրան ու ասում.—«Ով իմ սրտի սիրական և աչքի դուրեկան որդի, այդ քոյ ունեցած սէրը Բնչ անսպառ է, որ բնաւ վաղձան չունի և քեզ հանգիստ ու դադար չի տալիս»:

Այս խօսքերը հօրից լսելով, Մաճնունը նրա ոտքերն ընկած թախծագին ասում է.—«Ով իմ զոյութեան սկզբնապատճառ թանկագին ծնող, որքան ժամանակ է որ ձեզ ծառալելուց և որդիական պարտքս կատարելուց հեռու եմ մնացել... բայց այս բանի մէջ, հաւատացէք որ մազաշափ մեզք անդամ չունեմ.. Սիրոյ աստուածուհին ինձ իրան գերի ու ծառայ է շինել, խելքս զլխիցս առած, գժուացըել է ու լեռները գցել, ես ալճմ նրա իշխանութեան և հրամանի տակն եմ գտնվում. բացի նրա կամքը կատարելուց, նաև նրա համար գեռ կապիկութիւններ էլ պիտի անեմ: Այժմ գեռ նրա հրամանն ու կամքն այնպէս է, որ տակաւին թափառական ու վշտալից պիտի ման գամ: Ներողամիտ եղիր իմ սլակասութիւններին, ներէ իմ գործած յանցանքները», ասելով խօսքն աւարտում է ու հետեւել երգը երգում.—

Սիրոյ Աստուածուհին ինձ գերի շինեց.  
Մարուկ գառայ նորա սուրբ հրամանին,  
Ամուր շղթաներով կապեց—կաշկանդեց,  
Արդ նորա գերին եմ, հայր իմ թանկագին:  
Ոչ մի յանցանք չունիմ—իսպառ անմեղ եմ,  
Լեռներում թափառող՝ անտուն անտեղ եմ,  
Գուցէ մեղաղըէր՝ թէ ես չքմեղ եմ,  
Այս, տուէր ինձ տեսնեմ սիրուհիս անդին:  
Սիրոյ ծովը խորունկ է—անյատակ է,  
Մէջն ընկնողը կամաւոր նահատակ է,  
Անունը, պատիւը միշտ ոտնատակ է,  
Թւսերին բեռներ են բարձած ահաղին:

Այս խօսքերը լսելով, հայրը սրտից մի խոր ախ է քառում ու „որդի, ասում է, քեզ այս գրութեամբ անմարդաբնակ լեռներում ինչպէս անտէր—անտիրական վեր վարեմ ու գնամ, կամ թէ մօրդ ինչ լուր ու տեղեկութիւն պիտի տանեմ, որ մշտապէս կարօտդ քաշելով անդադար լաց է լինում և համարեա գժուելու վրայ է: Խոր խօսքս, խնալէ մեզ, այդ տոչորող սիրուց ձեռք վեր առ, քեզ տանեմ մօրդ կուշտը, յոյս ունեմ որ նա ցաւիդ մի ճար ու ճարակ կը գտնի»:

Մաճնունը հօր այս խօսքերը լսելով, ասում է.—„Ով իմ կեանքի տէր ու տիրական հայրիկ, ինձ համար գիտեմ որ ձեր կեանքերը կերաք—կարճացրիք, ահազին կարողութիւն փչացրիք իմ ցաւին հնար գտնելու համար: Ձեր բոլոր գանձերը վատնեցիք այդ մասին. սակայն սէր ասած ախտն ու մոլութիւնը, գարձեալ ինձանից չի հեռանում. իսկ ես այս մոլութեանը կամովին անձնատուր եղած՝ ինքս ինձի ծերացնում ու փչացնում եմ: Գուցէ Աստծու կամքն ու հրամանն է այսպէս, որ Լէլլու սիրոյ շղթան ծալուէծալ փաթաթուել է շլնքիս, որից ազատուելու ոչ մի հնար չունիմ: Խնդրում եմ ուշադրութեան առնէք ասածներս ու չը ցաւիք ինձանից, որ սիրահարների բաժինը լացն է, նըանց ծիծաղը, արտասուքը: Նըանք այդ երկուսին վերջ տալ չեն կարող: Նոյնպէս չեն կարող փախչել ու ազատ մնալ սիրոյ գցած քարերի հարուածից: Ուրեմն խնայեցէք ինձ և թող տուէք որ ես ինքնազլուխ մնամ, իսկ դուք, Աստուած ձեզ հետ, միամիտ սրտով գնացէք ձեր գործին նայէք”, ասելով, այս երգն է երգում.—

Սիրոյ շղթան փաթաթուել է շնչիս,  
Նրանից ազատուել ինձի դժուար է,  
Օրըստօքէ սպառնում է իմ կեանքիս,  
Տուած խօսքից յետ գառնախ անհնար է:

Ոիրոյ ծարաւ մարդի յոյսն ու սփոփանք,  
Լացը ու արտասուլքն է միակ մխիթարանք,  
Սիրահար սրտերը ունին մի բաղձանք,  
Նպատակի հասնել... այդ էլ անկար է:

Փշոտ է ճամբէքը, անձուկ ու նեղ է,  
Սիրուհու նայուածքը՝ սիրելնին գեղ է,  
Մուրազները կառնին՝ թէ սէրն անմեղ է,  
Միթէ Լէլուս սիրտը ապառաժ քար է:

Քսան տարիս չը լրացած ծերացայ,  
Տուն, հայրենիք, ծնողներիս մոռացայ,  
Ամեն տեսակ ուրախ կեանքից յետ կացայ,  
Մաճնունիս առաջը մեծ բարձր սար է:

Խղճալի հայրը ալս խօսքերը լսելով, դարձեալ սկսում  
է լացն ու աղաչանքը: Մաճնունը հօր այդ դրութիւնը տես-  
նելով, երկուսը միասին ձէն ձէնի տուած միենոյն ժամա-  
նակ ողբում ու կոծում են: Վերջ իվերջոյ հայրը ինչ և  
իցէ կերպով Մաճնունին համոզում է ու հետը վեր առած  
վերադառնում են տուն:

Մայրը, մերձաւորներն ու բարեկամները հաւաքվում  
են Մաճնունի մօտ, նրան խրատում են, մեղադրում և վերջը  
հազար ու մի տեսակ համոզիչ խօսքերով սիրտն առնում —  
գըգվում ու սիրաշահում են:

Այդպէս լինելուց յետոյ, էլ ինչ օգուտ: Նրանց պատուի  
համար մի քանի օր լուս ու մունջ համբերում է ու մօտ-

ները մնում մխիթարում: Մի օր էլ յանկարծ սիրոյ հուրը  
դարձեալ նրա սրտի մէջ եռում ու բորբոքվում է: Ամեն  
ինչ ոտնահարած — բոլոր կազմած խորհուրդներն ու ծրա-  
գիրները տակն ու վրալ անելով, դարձեալ քաշվում գնում  
է լեռները, բորբոքուած սրտին բաւականութիւն տալու  
համար: Մի տեղ յարմար գտնելով իւր բնակութեան համար,  
մաքրում — յարգարում է ու այնուհետեւ Լէլու սիրոյ համար  
լեռներում ու անտառներում թափառաշրջիկ կեանք անց-  
կացնում:

Ողորմելի Մաճնունը լեռներում օրերն այս կերպ անց-  
կացրած միջոցին, Լէլին էլ միւս կողմից է օրի վրալ  
ալրում — տոչորվում: Թէպէտ իւր կեանքն էլ Մաճնունի  
համար է փչանում: Գիշեր ցերեկ նրա մասին մտածելով քիչ  
է մնում որ գժուի, բայց արաբական բռնազբօս կեանքի  
մէջ ինչ կարող էր անել վանդակում բռնուած ալդ խեղճ  
թռչնակը... ունեցած վառ սէրը երկիւղից՝ ծնողներից ծած-  
կում էր... Առանձին ժամանակ գտած միջոցին տապակուեւ  
լով մրմնջում էր. — «ախ, արդեօք խղճալի Մաճնունը իմ  
սիրոյ ցաւով բռնուած, լեռներում օրերը լացնով է անցկաց-  
նում, թէ լալազար ծաղկի նման բուսած տեղը բեեռած  
անշարժ է մնացել...».

Այսպէս մտածելով՝ սկսեց սրտամորմոք երգել. —

Սրտիս խորքում մխում է քոյ վառ սէրդ,  
Գիշեր ցերեկ, ախ, քաշելով հալուեցայ,  
Սիրտս տակնուվրայ արաւ քո անշէջ սէրդ,  
Ճկուն ոստի նման շուտով ծալուեցայ:

Քունը աշքերիցս վախել կորել է,  
Սէրդ իւր սլաքը սրտումս հորել է,  
Ուշ ու միտքս շատ վաղուց մոլորել է,  
Բայց մի կարծիք թէ ես իսկ սխալուեցայ:

Տապակում եմ, մըմնջումնեմ, խորվումնեմ,  
Խորշակահար ծաղկի նման թումումնեմ,  
Բոցավառ հնացի պէս բորբոքվումնեմ,  
Ա՛խ քաշելով մինչի այսօր այրուեցայ,

Վանդակի մէջ մի բանդարկուած թոշուն եմ,  
Ազատութիւնս կորած —ուրախ օր չունեմ,  
Հազիւ գեռ կենդանի —մի քիչ շնչումնեմ,  
Էկլիս յօժար կամքով սիրոյդ գերուեցայ:

Ժամանակ առ ժամանակ էլ կարօտալի աչքերով դէպի  
Նէճիթ լերան կողմը, այն ճանապարհին էր նայում, որտե-  
ղից Մաճնունը երբեմն գնացել անց էր կացել... Հողմը  
Փչած միջոցին, Մաճնունի սիրոյ հոտն առնելով աշխոլժը  
Կորցնում էր... Իսկ պատահական ճանապարհորդների ոմանց  
բերանից երբ լսում էր անբաղդ Մաճնունի իւր սիրոյ  
մասին յօրինած մելամաղձիկ երդերից, ինքն էլ նրանց հան-  
դէպ, զեղուն սրտից բղխած, իբրև պատասխան նրա ասած-  
ներին, նոր երգեր էր գրում ու ծածուկ գցում ճանա-  
պարհների վերայ, որ անցորդները գտնեն կարգան ու իմս-  
նան իրանց գրութիւնը... Ահա Էկլիս այդ տեսակ երգերից  
մի գեղեցիկ ու խանդավառ նմուշ.—

Լեռներից փչած հովերը,  
Սիրոյ անուշ հոտ բուրեցին,  
Պաշտելու վառած բովիրը,  
Սըտիս մէջ հուր բորբոքեցին:

Սէրը մեղրից շատ անուշ է,  
Սակայն ափսոս, տատակ փուշ է,  
Բայց կեանքի մէջ մի նմուշ է,  
Սիրահարներն այսպէս ասացին:

Սոխակն է վարդի սիրաբան,  
Նրան կտայ միշտ գովասան,  
Հազար երանի է նրան,  
Բանաստեղծներն այս կարդացին:

Ճշմարիտ սիրահարները,  
Զեն կտրի իրանց յոյսերը,  
Էկլիս, ողորմած է Տէրը,  
Թէհ սիրոս խոցոտեցին:

Ահա և Մաճնունի այդ տեսակ երգերից ևս մի նմուշ,  
որոնք ցոյց են տալիս նրանց սիրոյ մասին ունեցած բուռն  
հայեացքները.—

Ով բարերար, բարդ ցաւերիս,  
Մի կերպ օգնութիւն ցոյց տուր,  
Կամ հոգիս առ, և կամ թէ չէ,  
Անուշ սիրուհիս ցոյց տուր...  
Յակորի պէս իմ էլ դէմքիս —  
Տիրութիւնը փարատէ,  
Ինձ — Յովսէփիս մի լացըներ,  
Այլ իմ զեղանիս ցոյց տուր:

Անժամանակ սիրոյ գերի,  
Ու նահատակ ես դառայ,  
Գիշեր ցերեկ թափառելով,  
Գեռ ես փափազս շառայ,  
Տուն ու տեղից — հայրենիքից,  
Մինչ ծնողներից սառայ...  
Հաւատարիմ Տէրս դու ես,  
Ինձ ուղիղ ճամբայ ցոյց տուր:

Քու խեղճ ու տկար Մաճնունն եմ,  
Վերաս խղճա, ով զթած,  
Յուսահատիս ձեռք կառկառէ,  
Մի թողնիր սիրտս ցաւած,  
Բացի քեզնից ուրիշ մէկը—  
Հկայ մարդկանց ողորմած,  
Տկարների Տէր—Արարիշ,  
Մեծ ողորմութիւն ցոյց տուր:

Լէլին իւր օրտի գաղտնի խորհուրդն ու նպատակը ոչ  
ոքի չը յալտնելով, միշտ առանձին էր ման զալիս, իւր  
ցեղակից աղջիկները միմեանց հետ խնդում, ուրախանում ու  
խաղում—զուարածում էին. բայց ալդ տարաբաղդը բնաւ  
չէր մասնակցում նրանց ուրախութեանը...թէպէտ աղջիկները  
կասկածում էին, որ նա սիրահարութեան անձնատուր եղած  
սիտի լինի, բայց հաստատուն ոչինչ չը գիտէին:

Այդպէս մի տարի անց է կենում... Եւ որովհետև գա-  
րունն արդէն եկել էր. մի օր Լէլին իրանց բնակավայրի  
մեծամեծների աղջիկերանց հետ միասին տանից դուրս գալով  
գնում են մօտիկ վարդենաստանը զբօսնելու ու մի քիչ  
զուարածալու: Սակայն Լէլիու երեսը ամենևին ծիծաղ չի  
զալիս, ամենևին չի ուրախանում... «Այս գեղեցիկ վարդե-  
նաստանը, ասում է, մի հնոց, մի կատարեալ փշաբեր այգի,  
մի դժոխք է երեսում աչքիս իւր բոլոր պերճութեամբ...»:

Ընկերակից աղջիկները այս բանը նկատելով, մօտենում  
են նրան ու ասում.—«աղնիւ օրիորդ, ալս կուսական բազ-  
մութիւնը քեզ համար են հաւաքուած այստեղ, ինչո՞ւ  
սիրտ մի քիչ չես բաց անում ուրախանում, որ ալլ և ալլ  
ենթադրութեանց ու կարծիքների նիւթ ու առարկալ չը  
լինիս... խղճա քեզ մի քիչ ասում են ու լուսում:

«Այսօր սիրտս մի քիչ տխուր է, ինձ լաւ չեմ զգում...

արդեօք Մաճնունս հիմալ իմ սիրոյ՝ ձեռքից հալումաշ եղած  
որտեղանք է թափառաշրջիկ ման զալիս» ասում է ու ար-  
տասուքի կաթիլները անձրեկ նման հոսեցնում աչքերից:

Հենց ալդ միջոցին, ալգուց դուրս, երբ մի արար Լէլիու  
մասին Մաճնունի յօրինած երգերից երգելով անց էր կենում  
գնում իւր ճանապարհը. . Լէլին լսելով և ուշադրութիւն  
դարձնելով արարի երգի վերայ՝ սիրտը կրակով լցվում է և  
դարձեալ սկսում է մազկտալ ու լաց լինել: Բայց դու մի  
ասիլ, խորամանկ աղջկներից մէկը ծառի տակ ծածուկ նըս-  
տած լրտեսում էր, որպէսզի մի տեղեկութիւն առնի և գի-  
տենայ թէ, ալդ երգողը արդեօք ում սիրահարն է: Արարի  
երգած երգը ալս էր.—

Անկատար զործի ձեռնարկողը, ով սիրելի,  
Անդորրութիւն չի վայելի, ով սիրելի,  
Դեղեցկութիւնով որբան ինձի գրաւեցիր,  
Հոգիս թող քեզ մատաղ լինի, ով սիրելի:

Ես իսկ քեզ համար եմ այսքան թափառում ահա,  
Խնամք արա, ինձ մի չարչարի, ով սիրելի,  
Հրամայիր որ անձս ու հոգիս քեզ խոնարհի,  
Դէթ Մաճնունիս քեզնից մի վանի, ով սիրելի:

Դու արարմունքիս իսկ վկայ ես եղած,  
Կայ արդեօք մէկը ինձ նմանի, ով սիրելի,  
Թէ մի քիչ զութ չը տածես Մաճնունիս վերայ,  
Դիտեցիր մահուան դուռը կը հասնի, ով սիրելի:

Եղջիկներն այդ օրը Լէլիու Մաճնունին սիրահար լի-  
նելը ստոյդ տեղեկանալով, գնում բոլոր մանրամասնութիւն-  
ները պարզաբար ու մի առ մի նրա մօրը յալտնում են:  
Իսկ ողորմելի մայրը ալդ մանրամասնութիւնները լսելով,

մնում է ապշած ու տարակուսած։ Այնուհետև ալլ ևս ուրիշ հնար չկար, սկսում է աղջկան թախանձել, որ իրանց անուանը խնայէ ու ալդ գաղտնիքը ոչ ոքի չասէ, որովհետեւ, ասումէ, բերնէ բերան ընկնելով, աշխարհք կը տարածուի—խօսակցութեան նիւթ կը դառնալ, այն ժամանակ մենք ամօթապարտ կը մնանք» ասելով՝ պատուէրներ է տալիս։ Իսկ ընկերուհիներն էլ թէպէտ մի կողմից են զանազան խօսքերով խրատներ ու պատուէրներ տալիս, բայց ինչ օգուտ։ — «Սևին սապոն, խեին խրատն ինչ կանէ»։

Խեղճ Լէլին մօր ու ընկերուհիների խօսքերից ազդուելով, հետեւալ սրտամորմոք երգն է երգում։ —

Սիրահարի զըութիւնից անտեղակ,  
Ուրախանալ—զուարճանալ են ուզում,  
Օքերը անցնում են միշտ աննպատակ,  
Ցնծալ, կայտոել, պարել, խնդալ են ուզում։

Սիրտս գերի տուած, արդէն ծախած եմ,  
Ամեն տեսակ ցոփութիւնից փախ ծ եմ,  
Կիանքս վաղուց բարակ թելից կասած եմ,  
Ուխտս դժբել և ուրանալ են ուզում։

Նախատինք ու արհամարհանք, վատ խօսքեր,  
Կարծես յասուկ ինձի համար են պահեր,  
Լէլի, զգոյշ եղիք, վատ խօսք մի ասեր,  
Կամքիդ վերայ իսկ բոնանալ են ուզում։

Պատմում են որ արաբական Բանի—Ասատ կոչուած ցեղի մեծ բէգերից մէկը—Իպնի—Սէլամ անունով, անհուն կարողութեան տէր մի ազնուական երիտասարդ կար, որը մինոյն ժամանակ իշխում էր և մի քանի ուրիշ ցեղերի վերայ էլ։ Մի օր որսորդութիւնից առն վերադաշտ միջոցին,

պատահաբար ուղղակի գնում է Լէլու բնակարանի մօտերքը։ Այդ օրը հակառակի պէս լէլին էլ լրացած լուսնի նման իւր բնակարանից գուրս գալով, մի քանի աղջկերանց հետ գնացել էր իրանց վարդենաստանը ման գալու։ Իպնի—Սէլամը ճանապարհին նրանց պատահելով ու Լէլին նրա աչքին ընկնելով, իւր գեղեցկութեամբ, փալելու կազմուածքով և շենք ու շնորհքով նրա սիրտը այնպէս է գրաւում, որ նոյն ժամայն սիրահարվում է նրա վերաբ, կողմնակի մարդկերանցից ում աղջիկ լինելը տեղեկանալով, վերադառնում է իրանց տուն։ Բարեկամները միամտաբար Իպնի—Սէլամի մօտ այցելութեան գնալով, տեսնում են որ խիստ մելամաղձոտ ու տիսւր է։ Հետաքրքրուելով սկսում են պատճառն հարցնել։ Իսկ նա պատահած անցքը մի ըստ միոջէ հանգամանօրէն նրանց պատմում է։ Նրանք էլ բոլոր եղելութիւնը լսելով ու տեղեկանալով՝ ասում են։ — «Այստեղ տիսւր լինելու ոչ մի առիթ չկայ. թէ որ կուգես ու կը ցանկաս, տեսած գեղեցկուհիդ, հօրը ինչքան որ վճարելիք փող ու կարողութիւն է պէտք, մենք մեր սեփականութիւնից կը վճարենք ու այն աղջիկը կուզենք քեզ համար»։ Այս պատրաստականութիւնը բարեկամ ընկերների կողմից լսելով Իպնի—Սէլամը, շատ ուրախ ու գոհ է մնում։ Եւ նրանց ասածներին հաւանութիւն տալով՝ խօսք է տալիս այնպէս անելու։

Հետեւեալ օրը առաւտաեան Իպնի—Սէլամը իրանց ցեղի մեծամեծ մարդկերանցից մի քանիսին Լէլու ձեռքը խնդրելու համար, ուղարկում է նրա հօտ մօտ պատգամաւոր։

Սրանք մօտենալով Լէլու հօր բնակավայրին, ալդ ցեղի մեծամեծները ընդառաջ գուրս գալով ու դիմաւորելով նրանց, պատուով ու համակրանքով հրաւիրում են գէպի ցեղապետի տունը և մեծածախ խնջոյք պատրաստելով։ Կարգին հիւրառիրում են։

Հաւ ընդուննելութիւն ու հիւրասիրութիւն գտնելուց  
յետոյ, սրանք էլ պատշաճաւոր կերպով Խպնի—Սէլամի կող-  
մից տարած թանկագին ընծանելն են առաջարկում նրանց  
ու միենոյն ժամանակ քաղաքափարութեամբ յայտնում, որ  
իրանք եկել են Լէլու ձեռքը Խպնի—Սէլամի համար խնդրելու։

Լէլու հայրը այսպիսի առաջարկութիւն հիւրերի կող-  
մից լսելով—«Բարով հազար բարի էք եկել, ասում է, իմ  
գլխին, իմ երեսին։ Զէ թէ մի աղջիկ, այլ իմ կեանքն էլ  
որ ուզէք, ձեզանից չեմ խնալիլ։ Բայց ներողամիտ եղէք,  
որ ահա մի քանի օր է, ինչ ո՞ր աղջիկս մի քիչ տկար է ու  
տրտում։ Երբ փոքր ինչ կազդուրուի—առողջանալ, այն ժա-  
մանակ մենք մեր պատրաստութիւնը կը տեսնենք ու ձեզ  
լուր կտանք, որ կգաք ամուսնական դաշնագիրը—ըստ սո-  
վորութեան կը կնքենք ու վեր կառնէք կը տանիք»։ Խօսքը  
վերջացնելով, երկու կողմից էլ այլ և այլ խնդրուածքներ ու  
բարեմաղթութիւններ են անում։ Այս աւետեաց լուրը Խպնի  
—Սէլամին հասնելով, չափազանց ուրախանում է և գոհ  
մնում իւր վիճակից ու բաղդից։

Որովհետեւ Լէլու նշանագրութեան մասին եղած խօսքն  
ու խորհուրդը իրանից ծածուկ էր, ուստի երբոր լսում է,  
խելքը գլխից թռչում է. սկսում է ծածուկ լաց ու կոծ  
անել, և յուզուած սրտով այս սրտատոշոր երգը երգել։

Խնձ գերու պէս վաճառում են,  
Սիրելիս ձեռիցս խլում են,  
Արդարութիւն օրէնք չկայ,  
Պահանջներս արհամարհում են։

Մաքուր սէրս գայլին տուին,  
Խնձ վազրի ձեռը մատնեցին,  
Կարծես սիրոս փայտ ու քար է,  
Նրան ոչինչ չը հարցուցին։

Խեղճ սիրելիս արդեօք ուր է,  
Այս արարքը թէ որ լսէ,  
Այդ խեղճ սիրոյ նահատակը,  
Խնքն իրան ինչ պիտի ասէ։

2է, լացն ու կոծը հերիք չէ.  
Թշուառ Լէլի լաւ մտածէ,  
Մի վճռական մեծ քայլ արա,  
Բոնութեան զէմը բողոքէ։

Իսկ Մաճնունը իսպու անտեղեակ ամեն բանից, իւր  
սախկին սովորութեամբ սիրոյ գերի գաւած, լեռներումն է  
թափառաշրջում։

Այդ միջոցին արաբ բէգերից թէվիէլ անունով մի խիստ  
հարուստ ու անուանի բէգ, ժողովրդի ու մեծամեծ կալ-  
ուածքների տէր. միենոյն ժամանակ խիստ գեղեցիկ տղա-  
մարդ, մի օր զուարճանալու համար իւր ընակարանից դուրս  
է գալիս զբունելու։ Այդ միջոցին ականջին մի անուշ ձայն  
է հասնում, ձիու գլուխը շուռ է տալիս գէպի այն կողմն  
ու գնում տեսնում է, որ մի նորահաս գեղեցիկ երիտասարդ։  
անապատի մէջ կանգնած խիստ սրտաշարժ երգեր է երգում։  
Հետաքրքրուած նրա անցեալով, գլխից անցած արկածներին  
լաւ ծանօթանալուց յետու, խնդրում է շարունակել ընդհա-  
տուած երգեցողութիւնը։ Իբրև նմուշ ու համեղաճաշակ  
պատառ, ահա նրա երգած տխուր երգերից մինչ։

Սիրոյ և հեծութեան կերակուրն անկարիս եկաւ հասաւ,  
Այս զբութեան մէջ տխրութեան հացը տկարիս եկաւ հասաւ,  
Արգելիչ պատճառները չեն կարող փարատել ցաւերս,  
Բստորում կեանքի խաւարչարել թշուառիս եկաւ հասաւ,  
Վրիժառու թշնամու պէս ինձ վերեից գայր մի զցի,  
Ցնորամիտ վշտերն ու հոգսերը աղքատիս եկաւ հասաւ,

Արիւնս խմելու մի շտապիք, տակաւին մի քիչ համբերէ,  
Կեանըս զեռ չը ծաղկած մահը ապիկարիս եկաւ հասաւ:

Թէպէտ հոդ չէ եթէ լախտով ինձ անբոյժ վէրքեր պատճառես,  
Ժամանակին չասես սէրս հոգեհանիս եկաւ հասաւ...

Հանիլ հասակիդ մէջ Մաճնուն, միթէ զրկանքներ քիչ տեսար,  
Որ այժմուս էլ տառապելով, կեանըդ այս օրիս եկաւ հասաւ:

Ահա այդպէս երգում է հետն էլ լաց լինելով արտա-  
սուք թափում: Թէվֆէլը Մաճնունին այս գրութեան մէջ  
տեսնելով, տարակուսում է իւր նախկին լսածների վերայ ու  
նորից սկսում է հարցնել վտարանդի լինելու պատճառը: Երբ  
իմանում է թէ ինչու համար է այդպէս անում, նրան  
մեղադրելով ասում է. — «Եղբայր, մի աղջկայ սիրոյ համար, մի  
թէ կարելի է ալգապէս վայրենի կեանք վարել ու մշտապէս  
լեռներում թափառելս: Այդ վայրկենից մտնելով սիրահար  
մարդկերանց գրութեան մէջ, իսկոյն և եթ կեղծում է, որ  
իբր թէ քաղցածութիւն է զգում... «Այսօր այլ ևս որս  
անել չի կարելի, առում է իւր որսակիցներին, որովհետեւ  
ձիաները շատ դէս ու դէն արշաւելով բեզարեցան, իսկ  
մենք էլ լոգնեցինք. սեղան բաց արէք մի քիչ հաց ուտենք:  
Հացկերութի ժամանակ այնքան սրտաշահ ու փափուկ կեր-  
պով է վերաբերվում Մաճնունին, որ նա մնում է ապշած  
ու շուտարած: Մաճնունն անծանօթ իշխանագնի կողմից ալդ-  
քան սիրալիր ընդունելութիւն տեսնելով, սիրտը փղձկում է  
ու սկսում հետեւալ պատշաճաւոր ու գրաւիչ երգը երգել. —

Ինձ շափազանց յարգելով, իմ սիրտս շէն մի անի,  
Կամ աւեր զառած սիրտս, ինձ բարեշէն մի անի,  
Հաստատապէս տիսնում իմ արածդ ճիզ ու ջանքը,  
Հաւատարիմ սիրուհիս օտար ինձնէն մի անի:

Առակ է որ ասում են, «մեծին բարիք անելը —  
Զեռնտուչէ»... բայց թէ ինձ իմ պայմանէն մի անի,  
Կամ եթէ որ ցաւերին, ես դիմանալ չեմ կարող,  
Սիրոյ զերի զառածին, խնդրեմ խելքէն մի անի:

Կոկծալից Մաճնունիս յայտնի գինեմոլի պէս,  
Սիրած վարդի — վառ ծաղկի, ճոխ պարտիզէն մի անի,  
Թէ կուզես բարիք անել, գու մի օր առաջ արա,  
Խղճալի եմ, Լէյլի ջան, ջիւան կեանըէս մի անի:

Մաճնունը այս երգերը Թէվֆէլին ասելուց յետ, Թէվ-  
ֆէլը իւր կողմից Մաճնունին առաջարկում ու հարցնում է.  
— «Կարողութիւնով, թէ պատերազմով կամ ուժով կարելի  
է Լէյլուն քեզ համար ուղել — ձեռք բերել: Քեզ քոյ նպա-  
տակին հասցնելու համար, ես իմ ամեն բաւականութիւնից  
ձեռք կը վերցնեմ».

Մաճնունը Թէվֆէլից այսպիսի առաջարկութիւն լսելով,  
խնդրում է թէ, ինչու ինձ նման մի թշուառ օտարականի  
համար այդքան նեղութիւն էք յանձն առնում: Այս նպա-  
տակի համար թող ձեր մեծարգութեանը նեղութիւն չը  
լինի. և դուք բաւականութիւնից մի զրկուիք, թէ ինչ է,  
ինձ նման գլուխ կորցրած մէկը և չքնաղ Լէյլին իրար ինչ-  
պէս կամ ինչ ճանապարհով պիտի առնենք: Եթէ ուժով  
ձեռք բերէք, թէ մէկ և թէ միւս կողմին պէտքէ հպատա-  
կիմ ու դարձեալ գժի նման անորոշ ու տարտամ գրութեան  
մէջ մնամ: Այս խօսքերի վերայ դարձեալ կրկնում է. —

Կեղծուպատիր յարգելով, իմ սիրտս շէն մի անի,  
Կամ աւեր թողած սիրտս, ինձ բարեշէն մի անի,  
Թո վարմունքով քայրայած ու խարխալած իմ հողիս,  
Իբր նորողուած ամրոց — աստուածաշէն մի անի:

Սիրոյ մուլճը ձեռք առած, քայլալեցիր հիմունքս,  
Քեզ դէպի գութ շարժելու, չբաւեց իմ վարմունքս,  
Հետ նկատում զու արդեօք, օրէց օր աւերմունքս,  
Թէ այդքան է քո խիղդդ, ինձապատէն մի անի:

Երեսիս զոյնը թռաւ, ոտքերիս ոյժը գնաց,  
Հողիս հեռացաւ ինձնից, կենդանութիւն չմնաց,  
Մաճնուն, շուտ խելքի արի, ինչ ես մնացել քնած,  
Քեզ պէս դերիներ շատ կան, սիրուհիդ դէն մի անի,

Միւնոյն ժամանակ ինդրում է, որ ինձ ինալէք և  
թողէք առանձին ու ինքնազլուխ”:

Թէվֆէլը տեսնում է որ Մաճնունը չի ուզում նպա-  
տակի հասնել, այլ փախչում է իրանից: Ուստի մտածում է,  
ես սրանից կը ինդրեմ, որ աննպատակ ման զալուց ձեռք  
վերցնէ և վերջ տայ իւր խենթ ու խելառ արարմունքին ու  
մի քանի օր մեզ հետ կատարեալ մարդի նման ման գալ, որ  
գուցէ մի կերպ կարողանանք համոզել ու սիսալմունքն իրան  
հասկացնել: Այդպէս էլ անում է:

Մաճնունը Թէվֆէլի ախորժալուր առաջարկութիւնը  
լսելով, մի կերպ լուսադրուած երգելով ասում է: —

Թէ թշուառի ժամանակը վերջակէտին է հասել,  
Հողին միշտ խաղաղ կմնայ, պէտքէ ճշմարիտն ասել,  
Բայց սէրին գերի դառածը, անբաղդ կմնայ վերջը,  
Բաղդից հալածուած մարդիքը, երբ են օր-արև տեսել:

Երկիրը իմ անկողինն է, իսկ երկինքը վերմակս,  
Գագանները ընկերներս են և մարդիքը ներհակս,  
Վառ լապտերս արեգակն է, լացն ու կոծն աշխատանքս,  
Մեռած մարդին կենդանանալ, կեանքումը, ով է լսել,

Սէրը քաղցը է ամեն բանից, բայց ափսոս կարճատև է,  
Սէրը վայելել շիմացող մարդի երեսը սև է,  
Մաճնուն, չկարծես ամեն սէր քաշող քեզ նման խև է,  
Գնա միայնակ թափառիր, մինչ մարդիք շատ չեն խօսել:

Այս խօսքերն ասելուց յետ, Թէվֆէլի հետ միասին վե-  
րագառնում են դէպի քաղաք: Այնուհետև Մաճնունին տա-  
նում են բաղանիք, երկարած մազերը խուզում, կեղտերը  
լուանում մաքրում, նոր շորեր հագցնում ու կատարեալ  
մարդի կերպարանք մոցրած բերում են տուն: Այսպէս մի  
քանի օր մնում են այդտեղ: Ամեն օր Թէվֆէլի հետ մտնում  
են պարտէզը, զանազան բաների մասին խօսք ու զըոյց են  
անում: Մերթ ընդ մերթ էլ Լէլլու վրայ երգեր է յօրի-  
նում, որոնցից Թէվֆէլը խիստ էր ախորժում: Ահա նրա  
այգպիսի հոգեբանական երգերից մինը. —

Աշխարհումը մարդս տեղից տեղ շրջապայում է,  
Պարապ միջոցին սիրունու հետ ծածուկ կովում է,  
Գանգատուելու համար զիմում է աշխարքի արեին,  
Միթէ չի տայ բոլոր կեանքը, ում որ սրտով սիրում է:

Ամուր կերպով պահել եմ ուխտ ու պայմանս, ով սիրելի,  
Թշնամի շիմ, անհող կաց, սէրդ ինձ վայրենացնում է,  
Միրտս միշտ սզի մէջ է — ուրախութիւն չունի բնաւ,  
Ով Տէր, ինչ մեղք գործեցի, որ սէրս ինձ տանջում է:

Հոգու աշքով ամեն կողմից երևում է սիրելոյս պատկերը,  
Ապուշ կացած նայում եմ... բայց նա ինձ կախարդում է:  
Մաճնուն, թէ որ զու այգպէս երկար ժամանակ մնաս,  
Իմացիր որ բաղդը քեզ գիշեր ցերեկ միշտ ծաղրում է:

Այսպէս մի ժամանակ անցնելով, Թէվֆէլը իւր ուտել խմելու և հաճոյքի մէջ, Մաճնունին իսպառ մոռացութեան տալով, նրան անուշադիր է թողնում: Իսկ Մաճնունը երգերի մէջ իւր գոյութիւնը յալտնի անելով, խնդրում է Թէվֆէլից, որ իրան ազատ թոյլ տայ գարձեալ գնալ լեռները իւր սև օրն ու արեւ լաց ու կոծով անցկացնելու:

Այս խօսքերը լսելուն պէս, Թէվֆէլը իւր խոստումը միտ բերելով, բաւականին զօրք է հաւաքում ու դիմում է դէպի Լէյլու հօր բնակավայրը, նախապէս դեսպաններ ուղարկելով և իմացնելով, թէ գալիս են Լէյլուն Մաճնունին ու զելու համար: Եթէ կամովին չը պիտի տաք, լուր է ուղարկում, պատրաստ եղէք կռուելու:

Լէյլու հայրը յանկարծ այս յանդուգն պատգամը լսելով, կարծես կայծակնահար եղած զարկվում է ու ասում.—„Ես այնպէս խելագարին աղջիկ չեմ տայ, ինչ որ անելու են՝ թող անեն, մենք պատրաստ ենք:“

Թէվֆէլը այս համարձակ պատասխանն առնելով, զօրքն յառաջ է խաղացնում ու սկսում են պատերազմել. ուր երկու կողմից էլ բաւականին մարդիք են սպանվում ու վիրաւորվում: Այդ միջոցին Մաճնունը պատերազմսղներին հեռուից մտիկ տալով, խնդրուածք է անում.—„Ով Տէր, Դու Լէյլու զօրքերին ոյժ ու կարողութիւն տուր, որ ոտքի տակ չերթան ու ընկճուին“, ասելով՝ մորմոքած երգում է. —

Թշնամին սիրուհու եկաւ պաշարեց,  
Չեռքս ծալած՝ ես անտարբեր նստել եմ,  
Մի մարդ ինձի ունայն խօսքով կաշառեց,  
Բերանս բաց արած անհոգ նստել եմ:

Սիրուհու հոգին գլխիս ստւառնում է,  
Կարծես ուշքս արդ ինձանից թոնում է,

Խեղճ գլուխս պտուտ զալով զառնում է,  
Պարապ—անգործ ապուշ դառած նստել եմ:

Յոյսս դու ես, ով Տէր արարիչ Աստուած,  
Քեզ եմ զիմում ծնկաչոք—բազկատարած,  
Նուաճէ թշնամուն խեռ ու կատաղած,  
Քեզ միամիտ ապաւինած նստել եմ:

Նպատակս կատարէ—փափազս լից,  
Հաւատում եմ, Դու ինձ եղիք կարեկից,  
Ազատէ Մաճնունիս Դու այս փորձանքից,  
Յոյսս միայն վերադ զրած նստել եմ:

Այս խօսքերը լսողները զարմացմամբ ասում էին.—«Նաև այս գժին մտիկ տուէք. Ճ որ այս մարդիքը քեզ համար են պատերազմում ու անմեղ տեղը կոտորվում, իսկ դու հակառակն ես աղօթում» ասելով, սկսում են անպատուել: Բայց ընդհակառակը, Մաճնունի աղօթելու վրայ, Լէյլու զօրքը յաղթուղ է հանդիսանում, իսկ Թէվֆէլինը պարտութիւն կրում—յաղթվում է:

Թէվֆէլը այս անաջողութիւնը նկատելով, բարկութիւնը գլուխն է խփում ու ինքն իրան վիրաւորուած ասում.—«Մի այսպիսի չնչին ցեղի ձեռքով իմ անունս կոտրուի ու իմ հպատակ արապների մէջ այսուհետեւ ալլս չը կարողանամ իշխողի դեր կատարելս ասելով, պաշտպանողական դիրք քռնած, ամրանում է ու սկսում նոր ոյժեր հաւաքել ու նորից հակառակորդի դէմ պատերազմ մղել. այնպէս որ, այս անգամ ուժեղ դիմադրութեամբ, Լէյլու հօր զօրքին ուժասպառ է անում ու նրանց յաղթելով, առաջնորդներին կորագլուխ թողնում: Վերջին յաղթանակը տանելուց յետ, ամեն ոք ցըվում գնում են իրանց տները:

Թէպէտ Մաճնունի վարմունքն ու բռնած դիրքը Թէվ-  
ֆէլին յայտնել էին ու նրան խիստ գժուար էր գալիս և  
հոգսերի տակ գցում, բայց մօտը գտնուողները ուրիշ կերպ  
տեղեկութիւնով—հանգստացնում են ու սիրտը մի կերպ  
շահում, որ բարկութնւնից մի քիչ դադարում է:

Խաղաղութիւնը տիրելուց յետոյ, Մաճնունը սրանց  
տեսնելով, գալիս է մօտները, Թէվֆէլին խնդրում ու ան-  
բաւական կերպով ասում է.—„Ինձ նման մի խելագարի հա-  
մար թէկ բաւականին նեղութիւն կրեցէք, բայց իմ բաղ-  
ձանքս տակաւին իկատար չը հասաւ, Լեռներում անցկաց-  
րած ուրախ օրերս ու զուտրճութիւններս ձեզանով կորցրի  
ու ամեն բանի միանգամայն վերջ տուի: Նոյնպէս Լէլլու  
սիրոյ զեկը որ իմ ձեռքս էի կարծում, այն էլ ձեռքիցո  
թռաւ: Այսուհետեւ նրանց բոլոր ցեղը ինձ թշնամի դարձած  
արիւնս խմում են՝ ասելով, Թէվֆէլից վշտացած անբաւա-  
կան է մնում ու թողնում հեռանում է:

Թէվֆէլը Մաճնունի խօսքերից ու տմարդի վարմունքից  
թէպէտ վշտանում ու նեղանում է, բայց թքածը չը լիզելու  
և աւելի վլէժխնդիր լինելու համար, զօրեղ և կարողու-  
թիւն ու իշխանութիւն ունեցող իրան բոլոր կողմնակից ու  
հպատակ ցեղերին պատուէր է ուղարկում, որ մեծ զօրք  
հաւաքեն, բանակ կազմեն, մի անգամ ևս հակառակորդին  
իւր չափը ճանաչել տայ ու չը թողնի որ Մաճնունը նպա-  
տակի հասնի, որովհետեւ անարժան մարդ էր: Այս նպատա-  
կով կրկին անգամ անհամար զօրքով Լէլլու ցեղակիցների  
դէմ դուրս է գալիս պատերազմելու: Գնալու միջոցին ճա-  
նապարհին պատահելով Մաճնունին, յանդիմանական կերպով  
ասում է.—„Այ գիծ, այժմ էլ մենք մեծ զօրք ժողոված  
գնում ենք պատերազմելու, որ Լէլլուն քեզ համար ձեռք  
բերենք, բայց դու... խօսքը դեռ չաւարտած լուսմ է  
ու անցկենում գնում:

Լէլլու ցեղակիցները իրանց հակառակորդի մասին տե-  
ղեկութիւն առնելով, բաւականին զօրք գումարած, դուրս  
են գալիս նրա դէմ և գարձեալ սկսում միմեանց հանդէպ  
պատերազմ մձել: Իսկ Մաճնունը բանակի կեդրոնում նստած,  
գարձեալ իւր հին սովորութեան համեմատ, Աստուծուց  
խնդրում է, որ Լէլլու զօրքերը անպարտելի մնան, ու ձեռքը  
քարեր առած գցում է դէպի Թէվֆէլի զօրքի կողմը:

Այս արարմունքը Թէվֆէլի զօրքը նկատելով՝ ասում է.  
—«Եյ գիծ անշնորհք մարդ, մենք քեզ համար ենք պատե-  
րազմում, իսկ դու մեզ վերան ես հաչում ու քարեր արձա-  
կում. ապերախա վատասիրտու:

—Դուք ինչո՞ւ էք ուզում իմ սիրուհու հօր զօրքին կոտո-  
րել ու վնաս տալով յաղթանակ տանել, պատասխանում է  
Մաճնունը, այ անիրաւներ... Ես ինչպէս սրանց չը յարգեմ  
ու սրանց կողմը չը պաշտպանեմ, այդ հնարաւոր բան է  
միթէ, որ Լէլլուս հօր զօրքը յաղթուած տեսնեմ ու ես ձեռ-  
քերս ծալած գադար մնամ, ասում է ու եռանդագին երգում.—

Թշնամիքը եռանդագին կովում են,  
Յաղթանակը տանել կուզեն, իմացէք,  
Երկու կողմից դիակները փովում են,  
Մէկը միւսին ջնջել կուզեն, իմացէք:

Սէրն է կոտորածի յատուկ պատճառը,  
Նրան զոհել կուզեն ու քսել քարը,  
Ո՞վ կզտնի կանգուն պահելու ճարը,  
2արակամներս զոհել կուզեն, իմացէք:

Արգելք զիին միմեանց ազատ տեսնելու,  
Էլ չեն թողնում մէկ մէկու հետ խօսելու,  
Բայց տկաը են, չթողնել մեզ երգելու,  
Թէկ այդ էլ սանձել կուզեն, իմացէք:

Նախանձոտ մարդիքը թնդ երկրից կորչին,  
Ամբողջ սերունդներով բնաշինջ լինին,  
Որ մեղ այս օրերին բերին հասցըին,  
Դեռ Մաճնունիս խեղգել կուզեն, իմացէք:

Այս խօսքերը Մաճնունից լսելով, Թէվֆէլի զօրքը նրա  
արարմունքի վերալ մնում է ապշած ու շուարած:

Ինչ և իցէ սրանց մէջ կուիը բաւականին երկարելով,  
վերջը Թէվֆէլը հակառակորդից պահանջում է անձնատուր  
լինել և պատերազմը դադարեցնել:

Լէլու հօր ցեղակիցները տեսնելով, որ այլևս դիմադրելու կարողութիւն չկալ, անձնատուր են լինում: Նրանց  
միջի պատուաւոր ծերունիքը Լէլու հօր հետ միասին ներակալանում են Թէվֆէլին ու խնդրում: — „Մեծանուն սուլթան, այս էլ երկու նուագ է, որ մէջտեղը բոլորովին զուր՝  
բաւական թուով մարդիք են ոչնչանում: Թէ որ նպատակներդ մի աղջիկ ուզելն է, այդ ձեր հրամանն է, այս ըոպէիս  
էլ կարող ենք ներկալացնել ձեզ... սակայն դուք մի բանիմաց ու փորձառու մարդ էք, ոչ ոք մինչև հիմա ձեզանից  
մի փոքրիկ վնաս անդամ չի տեսել. մտածեցէք, թէ ինչպէս  
կարող եմ վստահանալ մի այդպիսի գժին աղջիկ տալ, ու  
մարդկանց վերաս ծիծաղեցնել. բայց եթէ դուք անպատճառ  
ցանկանում էք, որ ալդ գործը գլուխ դալ, ինչպէս ասացինք, հրամանը ձերն է և մենք հպատակում ենք ձեր բարձ-  
րագոյն վճռին ու հրամանին“:

Թէվֆէլը մտածելով տեսնում է որ, ասածները խիստ  
տեղին ու օրինաւոր են: Ուրիշներն էլ պէտքէ ինձ մեղա-  
դրեն, ինչն իրան մտածում է, որովհետեւ ում համար որ  
ջանք ու պատերազմ եմ անում, մի գիտ ու խելքից պակաս  
մարդ է, ինչպէս ներկան ցոյց է տալիս. գուցէ վերջը խօս-  
քից լետ կանգնի, որ շատ հաւանական է: Ամենից լաւը՝

սրանց իրանց կամքին թողնելն է: Յետոյ բոլորի ներկայու-  
թեամբ հանդիսաւոր կերպով աւելացնում է.— «Ալսուհետեւ  
ձեր լանդգնութիւնները ձեզ ներում եմ. ձեր խնդրուածք-  
ները ընդունելի եղան ինձ մօտ, ասելով՝ գոհութեամբ նրանց  
վերադարձնում է իրանց տեղերը»:

Այս բանը Մաճնունը լսելով, դարձեալ գնում է Թէվ-  
ֆէլի մօտ,— «ափսոս որ, ասում է, խօսքերիդ հաւատալով,  
այս էլ երկու անգամ է մօտներդ եմ գալիս, բայց դեռ մի  
գործ չը կատարած, սիրտս տակն ու վրայ անելով, ինձ  
գժուացրիք ու գցեցիք սարերը: Միթէ ձեր ինձ տուած հաս-  
տատուն խօսքն ու պայմանը այս էր»:

Թէվֆէլն հազիւ հազ այս խօսքերը Լէլու գեղեցկու-  
թեան ու պատուի համար լրութեամբ ու համբերութեամբ  
տանում է և վերջն աւելացնում: — „Կը տեսնես, որ մի օր  
Լէլուն քոյ ձեռքը կը յանձնեմ“:

Այս խօսքերը լսելուն պէս, Մաճնունը դարձեալ ուղ-  
ղակի դիմում է դէպի լեռները: Ետեից որքան էլ որ մար-  
դիք են ուղարկում, նրա հետքն անգամ չեն գտնում, որ  
վերադարձնեն:

Պատմում են որ, Թէվֆէլը զօրքը Լէլու բնակավալրի  
մօտից լետ քաշել—հեռացնելուց լետոյ, Լէլին երկրպագե-  
լով գոհութիւն է մատուցանում Աստծուն: — „Հիմա այլևս,  
ասում է, հայրս Թէվֆէլի հետ գլուխ չի դնէ—չի պատե-  
րազմի. ի հարկէ այսուհետեւ ինձ Մաճնունին կտայ ու եր-  
կուսիս մեր սպատակներին կը հասցնէ»:

Թէպէտ նախկին պատերազմի ժամանակ Լէլին երեսը  
գետնին քսելով խնդրել էր Աստծուծուց, որ իւր ցեղակիցները  
տկարանան—պարտութիւն կրեն ու Թէվֆէլի զօրքը լաղ-  
թող հանդիսաւայէ Սակայն ալդ խնդրուածքը Աստծու մօտ  
ընդունելի չէր եղել: Ընդհակառակը Թէվֆէլի զօրքն էր  
տկարացել—պարտութիւն կրել ու կորագլուխ եղած՝ լետ

դառել գնացել։ Այս բանը Լէլլու վրայ խիստ վատ էր ազդել՝ ու գրութիւնը վատանալով, օրերը տփուր ու տրտում էր անցկացնում։ Միանգամայն իւր ու Մաճնունի կոկոնափակ վարդերը գեռ չը բացուած, անիրաւ բաղդը նրանց համար շատ տեսնելով, դարձեալ թառամեցնում էր։ «Մեզ լացացնում էր, ասում է Լէլլուն, իսկ թշնամիներին խնդացնում»։ Այնուհետեւ սրտից մի խոր ախ քաշելով երգում է։

Օրս խաւարեցաւ, արևս մթնեց,  
Դրութիւնս փոխուաւ, ասէք, ինչ անեմ,  
Սիրականս ինձի արհամարհեց—փանեց,  
Կարծես թէ մոռացաւ, ասէք, ինչ անեմ։

Բաղդը ոտնահարեց առաջին օրից,  
Յուսակտուր եղայ հօրից ու մօրից,  
Ինչեր ասես շահցի բոլորից,  
Յև բաղդս հեռացաւ, ասէք, ինչ անեմ։

Ինչու են մէկ մէկու իդուր կոտորում,  
Երբ երկու անկեղծ սիրտ իրար են սիրում,  
Բոնութիւնով մեր սրտերին են տիրում,  
Բաղդը ինձ ուրացաւ, ասէք, ինչ անեմ։

Թէ երկնուց է մեզի սէրը պարզեած,  
Նպատակի մենք կըհասնենք անկասկած,  
Լէլլի, սիրականդ շատ է խոռված,  
Իւր խօսքին չկացաւ, ասէք, ինչ անեմ։

Մի առ ժամանակ յետոյ, Թէվֆէլի զօրքի կըկին անգամ հաւաքուել և իրանց ցեղի վերալ պատերազմի գալը լսելով, Լէլլին ուրախ սրտով դիմում է Աստուծուն և ցանկանում, որ իրանց կողմը պարտութիւն կըէ։—«Յոյս ունեմ

որ, ասում է, այս անգամ հալիս կը տկարանալ, մի աչք կուլայ՝ միւսը կը ծիծաղի, ուզէ չուզէ, ինձի իմ անբաղդ սիրական Մաճնունին պիտի տայս ասելով, աչքերը ծարուը է (սիւրմայ) քաշում և զուգուած ու զարդարուած ուրախութիւններ անում, բայց յետոյ տեղեկութիւն է առնում, որ հայրը Թէվֆէլի հետ պատերազմի գործը հաշտութեամբ ու խաղաղութեամբ է վերջացրել։ Այնուհետեւ այս բանից յոյսը կտրելով, սուզի ու հանգերձներ հագած, օրըստօրէ սկսում է սիրոյ կրակի բորբոքով սիրտը այրել ու խորովել և մնում է դառնաղէտ մտածմունքներով պաշարուած դրութեան մէջ օրերն անցկացնել։

Մաճնունը բաղդից հալածուելով ու Թէվֆէլի վարմունքից վշտանալով, դարձեալ դիմում է դէպի լեռները։ Լէլլու սիրոյ համար գիշեր ցերեկ թափառական պտտելով, ճանապարհին մի որսորդի պատահելով, տեսնում է որ երեք հատ եղջերուի ձագեր բռնած կապել է միմեանց. բայց այդ ձագերի սեռակ աչքերից, կարծես բանական մարդի նման, արտասուք էր վայր հոսում. այնպէս որ՝ տեսնող մարդի լերդն ու թոքը կտրատում էր։ Որսորդը մտածում է։—«Սրանց կենդադանի տեղ հասցնելը դժուար է, լաւն այն է. որ այստեղ մորթեմ ու շալակած տանեմ. գոնէ երկուսը կը ծախեմ, մէկն էլ ուտելու համար տուն կը հասցնեմ։»

Այդ միջոցին Մաճնունը նրան պատահելով ու եղջերուներին կալանաւորուած—արտասուալի աչքերով տեսնելով, իսկոյն իւր Լէլլին միտքն է ընկնում։ «Նիմա իմ սիրուհին էլ ծնողաց տան մէջ իմ կարօտը քաշելով, աչքերիցը այսպէս արտասուք է թափում» ասելով՝ ոկսում է լաց լինել ու հառաչելով երգել։—

Սոխակը պարտէզից թուաւ,  
Ալ վարդը մնաց սըգաւոր,

ոՌխակի սրտիկը մեռաւ,  
Երբ տեսաւ վարդին սկաւոր։

Մահաքեր խորշակը դիպաւ,  
Թէ սիրոյ թունաւոր նետը,  
Սստղկան բաժակը հրպաւ,  
Թմբեցուցիչ նեկտարն հետը։

Երջանիկ է անբան վարդը,  
Սոխակի պէս սիրահար ունի,  
Բայց ի՞նչ անէ անբաղդ մարդը,  
Երբ սիրահար սոխակ չունի։

Էհ, ինչ կուզես՝ ասա խօսի,  
Թշուառը միշտ էլ թշուառ է,  
Մաճնուն, իգուր մի բամբասի,  
Քո Լէյլին աստղից պայծառ է։

Որսորդը Մաճնունի վերալ մնում է զարմացած։ Վեր-  
ը Մաճնունը որսորդին աղաջում է, թէ ալս խղճուկ կեն-  
դանիներին ազատ թող՝ որ գնան. իսկ որսորդը նրան պատաս-  
խանում է թէ,— «գու մի խղճմտանքով մարդի ես նմա-  
նում... բայց ես սրանց որսալու ժամանակ բաւականին նե-  
զութիւն եմ կրել Ուրեմն սրանց պէտքէ մորթել, մի եր-  
կուսը ծախել, իսկ մէկն էլ տուն տանել ուտելու համար,  
որովհետև հէնց իմ օգուտն էլ այդպէս է պահանջում։

Մաճնունը ալս բանը որսորդից լսելով, նրան ասում  
է.— « ալ մարդ, ալսպէսի գեղեցիկ կենդանիներին ձեռքդ  
ինչպէս պիտի գնայ որ մորթես։»

Որսորդը նրան պատասխանում է.— „ալսպէս գեղեցիկ  
ժամանակը, սրանք մորթուելով պէտքէ ինձ օգուտ տան...  
Ալժմ եթէ ձեր պատուի համար սրանց ազատ թող տամ,

յետոյ իմ ընտանիքը ինձանից հաց ու կերակուր կուզեն, որ-  
տեղից տանեմ։

Մաճնունը նորից ալս խօսքերը որսորդից լսելով՝ ասում  
է որ, «բացի վերայիս հանդերձներից, մօտս էլ ուրիշ բան  
չունիմ. ահա առ սրանք քեզ լինին, միայն թէ այդ կենդանի-  
ներին ազատ բաց թող։»

Որսորդը տեսնում է որ Մաճնունի շորերը աւելի թանկ  
արժեն, քան թէ կենդանիների ծախելուց սպասած օգուտը,  
նոյն վայրկենին կենդանիների ոտքերն արձակում է ու բաց  
թողնում, սրանք իրանց ազատ ու արձակ տեսնելով, իսկոյն  
փախչում գնում անյալտանում են։

Սրանից մի քանի օր յետոյ, Մաճնունը գնալիս պատա-  
հում է մի այլ որսորդի, որ գարձեալ մի եղնիկի փոքրիկ ձագ էր  
կենդանոյն որսացել։ Մօտենալով գեղեցիկ անասունին, աչ-  
քերը համբուրում է ու առաջուան պէս Լէլլուն այդ կեն-  
դանոյն նմանացնելով, լաց լինելով աղաչում է որսորդին,  
որ ազատ բաց թողնի։ Իսկ որսորդը առաջինի նման պա-  
տասխանում է թէ «չեմ կարող»։

Մաճնունը նրան ասում է. «ալս գիշեր որ քեզ մօտ  
հիւր լինիմ, արապների ոովորութեան համաձայն, սրան չես  
մոլթի ու ինձ ուտացնի. ուրեմն ալնպէս համարէ, որ ինձ  
կերցրիր, սրան ինայէ ու բաց թող որ գնալ...։ Անցեալ  
օրը քեզ նման մի ուրիշ որսորդի էլ պատահեցալ. ինչ որ  
ունէի չունէի նրան տուի, երեք որս ձեռքից առնելով, ազատ  
բաց թողի. հէնց դրա համար էլ մնացի մերկ ու մօտս  
ոչինչ չունիմ որ քեզ տամ...։ Եթէ յօժար ես, հոգիս քեզ  
կտամ մորթէ, միայն թէ այդ կենդանին բաց թող»։

Վերջապէս ալսպէսի խղճահարող խօսքերով, Մաճնունը  
որսորդին համոզում է ու նրա կամքը հաճեցնում, որ  
ազատ բաց թողնի...։ Եղնիկին բաց թողնելուն պէս, գնում

գաշտի խոտերի մէջ անբայտանում է: Խոկ Մաճնունը նրա յետեկց մահկ տալիս, և լուս սիրոյ կրակը սիրաը լցուելով, բորբոքվում է ու հետեւեալ սրտաճմլիկ երգը երգում.—

Ինքն աշխարհիս թագուհին է,  
Ուժէս վեր է, ձեռք չի հասնի,  
Երկրին լոյս տուող լուսին է,  
Ուժէս վեր է, ձեռք չի հասնի:

Լոյս երեսը ինձ ինչ արաւ,  
Յաւ ու կոկիծ վերաս բերաւ,  
Չեռքէս խլեց հեռու տարաւ,  
Ուժէս վեր է, ձեռք չի հասնի:

Թշուառ կեանքս ոչնչացաւ,  
Օրս սուզ ու ցաւով անցաւ,  
Հիտեմ հոգսերս վերջացնաւ...  
Ուժէս վեր է, ձեռք չի հասնի:

Լեռներիս սրտակցիս ողջոյն,  
Որ ինձ խնայէ օրն իբուն,  
Մեղքի փոխարէն դառն թոյն...  
Ուժէս վեր է, ձեռք չի հասնի:

Այսպէս կրակուած ու բորբոքուած դրութեամբ գնալու  
միջոցին, արևի տաքութիւնից սաստիկ թուլանում է: Տես-  
նում է որ մի ծառի հովանու տակ մի շատրուան կայ, մէջը  
քաղցրահամ սառը ջրով լիքը: Նրանից բաւականին խմում  
է ու միւնոյն միջոցին նկատում, որ մի գեղեցիկ ագուաւ  
ծառի վերայ կանգնած է: Մաճնունը սրան տեսնելով, ասում  
է.—„Ե՛ւ դու իմ սիրուհու մազերի գոյնի ագուաւ, արգեօք  
բաղդը քեզ Բնչպէս է իրան ծառայ ու գերի շինել. դու

Էլ ինձ նման յաւիտենականութեան մէջ պէտք է նպատա-  
կի հասնիս... արգեօք արիւնոտ ժամանակը քոյ պայծառ  
առաւոտն էլ մթագնեց երեկոյ դարձուց... քոյ շքեղ հան-  
գերձներն էլ ալրեց մրկեց ու սե սուզի հանդերձների փո-  
խարկեց...: Իհարկէ քեզանում մի գաղտնիք կայ, բայց դու  
խորհրդապահ և բերանիցդ ամուր ու մաքուր ես. քեզանից  
ոչ մի գաղտնիք չի կարելի իմանալ... դու գուցէ միայն  
վշտացած մարդկերանց տխուր ու ծեծուած սրտերը կոփո-  
փես ու կը միիթարես ասելով՝ երգում է:—

Դու էլ ինձ պէս սպաւոր ես,  
Տիրատեսիլ անմեղ թուշուն,  
Բաղդիցը բողոքաւոր ես,  
Որ աշքիդ մօտ չի գալիս քուն:

Սըգի հանդերձներ ես հազել,  
Իմ թշուառ Լեյլուն նմանել,  
Բաղդն է արգեօք քեզ հարւածել,  
Որ միշտ դայում ես օրն իբուն:

Քո առաւոտն էլ մինեցաւ,  
Օը-արևդ խաւարեցաւ,  
Անբաղդ Մաճնունին մօտեցաւ,  
Դու էլ չունիս մի տեղ ու տուն:

Մաճնունը այսպիսի մենախօսութեան միջոցին, տեր-  
նում է որ մի հասակաւոր ծերունի, մի ուրիշ շղթայակապ  
ծերունու հետ միասին դէպի իրան են գալիս: Այս տարօրի-  
նակ բանը տեսնելով՝ անմիջապէս ծերունուց հարցնում է:—  
«սրա մեղքն Բնչ է, որ պարանոցը այսպէս շղթայել ես»:

Ծերունին պատասխանում է:— «Ես մի ձեռքից-ոտքից  
լնկած աղքատ մարդ եմ, ոչ գործ և ոչ ասլելու միջոց ու-

նիմ. այս ողորմելին նոյնպէս, ինձանից աւելի աղքատ ու քաղցած է... այսպէս շղթալած, իբրև գերի, տեղից տեղ ման ենք գալիս ու ողորմութիւն խնդրում. ինչ որ ձեռքներս է ընկնում, երկու հաւասար բաժին ենք անում, մինը ինձ եմ վեր առնում, միւսը տալիս եմ սրան, ու միասին եղբօր պէս ապրում ենք»:

Մաճնունը փոքր ինչ մտածելուց յետոյ, ծերից խնդրում է.— «Սրան խնայէ—ազատ արա, իսկ սրա փոխանակ ինձ շղթալած պահէ... իսկապէս շղթալակապ մնալու ես եմ արժանի, որ ահա քանի տարիներից հետէ սիրոյ ցաւով տապակուած, գերի եմ դառել ու հայրենիքից հետացած վտարանդի ման եմ գալիս... Սյո է իմ գրութիւնս, որ անկապ շղթալուած, սիրոս ալրուած, լերդս չորացած, առաջներիդ կանգնած եմ... կրկին ու կրկին խնդրում աղաչում եմ, այս ծերունու շղթան քանդէ ու ինձ կապէ, և գորա նման ուր որ ուզում ես ինձ ման ածէ»:

Մաճնունի այս պաղատական խօսքերը լսելով, այլ ևս առանց ժամանակ կորցնելու, ծերունու շղթան քանդում կապում է Մաճնունի պարանոցից ու սկսում է նրան այս-տեղ ու այնտեղ տանել պտտել:

Մի քանի ժամանակից յետոյ, մի օր էլ այս գրութեամբ գալիս հասնում են Լէլլու բնակարանի առաջը, Լէլլին Մաճ-նունի ձայնը լսելով... նրան մտիկ տուած միջոցին. . Մաճ-նունը բողոքելով աղերսարկու կերպով ասում է.— «ով իմ շքնալ ու հոգեհան սիրուհի, գրութեանս խղճա ու իմ վի ճակին կարեկցի, որ քոյ սէրդ ինձի ալսպէս շղթալակապ արած—կաշկանդուած ձեռքերով ու այրուած սրտով դուռդ է բերել... թէ որ Թէկֆէլի զօրքի ուժով մենք պիտի մի-մեանց մօտ երես առ երես գալինք, ահա ես իմ ոտքովս եմ եկի. թէ որ կը ցանկաս, ինձ սպանէ ոչնչացուր... մինչեւ անդամ պատրաստ եմ դոանդ կամովին մատաղ լինել... քոյ

առւրդ ինձ համար կենսատու ջրից էլ քաղցր է» աս<sup>ւ</sup>լով՝ կրակուած սրտով սիրուհուց խնդրուածք էր անում.. հրա-մայիր ինձ ինչ որ կամենաս, իմ գլխի տէր ու տիրական թագուհի» կրկնելով՝ սրտի բորբոքը մոլեգնութեան է հաս-նում..— «ով Տէր, օգնէ ինձ» ասելով՝ ձեռքերով ոտքերի ու պարանոցի շղթաները խորտակում վայր է թափում ու գարձեալ ուղղակի դիմում է դէպի լեռները..: Մի քիչ հե-ռանալուց յետոյ, բլրի գագաթին նստած սկսում է երգել.—

Հին ցաւերս նորոգուեցին—թազացան,  
Խղճալիս ուր գնամ, որ ջուրը ընկնեմ,  
Սպասելով խեղճ աշքերս բօզացան,  
Նպատակի դեռ չհասայ, ի՞նչ անեմ:

Ջղթայակապ սիրականիս մօտ եկայ,  
Որ փոքր ինչ իմ դրութեանս խղճայ,  
Միրտս նրան մատաղ լինել կցանկայ,  
Այսքան ծանը բեռը մենակ ոնց տանեմ:

Նրա տուած մահը ինձ համար կեանք է,  
Մի սոսկ խօսքը չարքաշ կեանքիս վրկանք է,  
Երեսիս մտիկ տալն ինձ սփոփանք է,  
Բայց չարակամներից երբ վրէժ հանեմ:

Միայն զու ինձ սիրէ. էլ բան չեմ ուզում,  
Իմ անուշիկ Լէլլի, ես այս եմ խնդրում,  
Մաճնունդ է ծնկաչոր քեղի աղերսում,  
Խոցուած սրտիդ բալասան պիտի ցանեմ:

Իսկ հետի գտնուած ծերունին լացակրկնած յետեկց բա-ցագանչում է.— «այ Աստծու երեսից ընկած մարդ. ես դեռ ես այս շղթալի գինն էլ չեմ վճարել... քեզ հետ ընկերա-

յած միջոցիս, դեռ մի շղթալի գին էլ չեմ աշխատել... ալք ծերութեան վերջին օրերիս մէջ դու ինչպէս ինձ պարտական թողիր ու զնացիր» ասելով, սկսում է գառնապէս բողոքել:

«Մի լաց լինիր, ձեռք վեր առ... եղածն արդէն եղած է... նա մի անբաղդ և յուսահատ սիրահար էր. չը կարենալով իրան զսպել, այդպէս արաւ ու հեռացաւ» ասում է Լէլին ու ծերունուն շղթալի գինը վճարելով և սիրտը շահելով ճանապարհ է գցում:

Ծերունին Լէլլուց իւր բաւականութիւնն ստանալուց յետոյ, նրան օրհնանքներ կարդալով հեռանում է:

Որովհետեւ Լէլին այդ միջոցներին լու հռչակ ու համբաւ էր ստացել իւր գեղեցկութեամբ արաբական բոլոր ցեղերի մէջ, այնպէս որ, ամեն ցեղի մարդիք ուզում էին նրան ձեռքներն առնել ու վարդի նման հոտոտել Մանաւանդ նրանցից ոմանց էլ շլացնում էր Լէլլու հօր ամբաւ կարողութիւնը, որին ապագալ ժառանգ էին ուզում դառնալ շատերը.

Այս բանը լսելով Իպնի—Սէլամ անունով երիտասարդ իշխանազնը, խելքը գլխից թռչում է—«Իմ նշանածն է Լէլին, ասում է. այդ մասին վաղուց խօսել վերջացրել ու պայմանաւորել ենք. բանը այսպէս թուլ թողնել ու յետաձգել չի լինի. յետոյ կարող է ձեռքիցս դուրս գալ» մտածելով, մի քանի թանկագին ընծաներ է պատրաստում ու բանագէտ մարդկանց ձեռքով ուղարկում Լէլլու հօր մօտ, որ իրանց ունեցած խօսքն ու պայմանը յիշեցնեն նրան:

Դնում են պատգամաւորները: Լէլլու ծնողքը նրանց լաւ ընդունելութիւն ցոյց տալուց ու հիւրասիրելուց յետոյ, հիւրերն սկսում են այսպէս խօսք բաց անել.—«Գերազնիւ Տէր, մեր նախկին խօսակցութեան միջոցին, Իպնի—Սէլամին իբրև որդի ընդունեցիք և խօսք տուիք յարմար առիթին ձեր դստեր հետ ամուսնական դաշն կռելու: Ուստի

այժմ—մեր գրած պայմանին համաձայն—եկել ենք ալդ գաշինքը վերջնականապէս կնքելու և պայմանները որոշելու: Ծածուկ չէ ձեր մեծարգութիւնից, որ բարի գործերի համար, մէջտեղից չարութիւնները անպակաս են և իրանց չափից դուրս ոտնձգութիւն անողներն էլ բազմաթիւ: Մեզ որքան յայտնի է, գործը պղտորելու համար, մէջտեղը միքանի անբարեմիտ մարդիք են սունկի նման բուսել: Ուրեմն ամենից լաւն ալն է, որ առաջուց արժան տեսած ու խոստացած ուխտերդ և գաշինքներդ վճռապէս ի կատար ածէք: Երկուսին միմեանց հետ ամուսնական անքակտելի կապով կապենք՝ ամրապնդենք, որպէսզի ամեն տեսակ երկար ու կարճ խօսք մէջտեղից վերանալ. և երկու կողմդ էլ մի փոքր աղատ շունչ քաշելով հանգստանաք:

Երկու կողմից մի քանի խօսքեր փոխանակելուց յետոյ, Լէլլու հայրն իսկոյն հազար սոսկի բաժինքով իւր դստերը Իպնի—Սէլամի հետ դաշինք է կռում: Նորանոր խոստումներ անում և օրհնում է նրանց ամուսնութիւնը:

Լէլլին լսելով որ հայրը Իպնի—Սէլամի հետ հաստատուն դաշինք է կռել իւր ամուսնութեան համար.—«Ախ, անզութ հայր, ինչպէս անիրաւաբար զրէժխնդիր եղար ու, տեղեակ լինելով հանգերձ, ինձ տուիք մի վայրենի մարդի.. իսկ սիրոյ զոհ իմ Մանունից ինձ ուզում ես օտարացնել» ասելով, սկսում է գառնապէս սուգ ու շիւան անել, և կոկծագին ու սրտամորմոք կերպով երգել.—

Վարդը արմատից խլեցին,  
Օտար հողի մէջ տնկեցին,  
Սոխակին վիրաւորեցին,  
Այգեպանը այս հնց տանի:  
Նորահաս կոկոնը կիսրաց—  
Թողին արևի դէմ չորցած,

Սոխակն անում է լացութաց,  
Այգեպանը այս ո՞նց տանի:

Վարդը տուին աւանակին,  
Վիրաւոր թողին սոխակին,  
Հացն արին շների բաժին,  
Այգեպանը այս ո՞նց տանի:

Սոխակի փոխարէն ազռաւ,  
Վարդի ծառին եկաւ կանգնաւ,  
Սիրահարի աշքը տեսաւ,  
Այգեպանը այս ո՞նց տանի:

Լէլիի, սիրտդ խոր խոցուեցաւ,  
Բայց հայրդ այսպէս կամեցաւ,  
Թէպէտ այսպէս վիճակուեցաւ,  
Բայց այգեպանն այս ո՞նց տանի:

Հարսանիքի օրը իրանց ցեղի մէջ գտնուած պատուտոր  
տիկիններն ու օրիորդները գալիս են Լէլլու մօտ նրա ամուս-  
նութիւնը շնորհաւորելու ու բարեմաղթութիւններ անելու:  
Խսկ Լէլլին մտքումն անիծելով ասում է. — «Լեզուներդ չորա-  
նայ ու պապտնձուի», և սկսում է յակամալից պարողներին  
ու կաքաւողներին մտիկ տալ: Այսպէս մի քանի օր շքեղ  
Հարսանիք են անում: Հարսանիքը վերջանալուց յետոյ, Լէլ-  
լին սոկու ու ակնեղէնների մէջ կորած, մի քանի նաժիշտ-  
ների հետ միասին, նստացնում են արծաթապատ պատզա-  
րակի վերալ և ուղարկում Իպնի — Սէլամի տունը:

Երբ աւետաբերները Լէլլու գնալն ու տան մօտենալը  
աւետում են, Իպնի — Սէլամը այդ մասին խիստ ուրախ է  
լինում ու աւետիք բերողների խօսքերին հաւատալով, նրանց  
առատօրէն վարձատրում է: Խսկ Լէլլին Իպնի — Սէլամի դու-

ռը հասած միջոցին, շատ մարգարիտ ու ոսկի է սփռում  
հանդիսատեսների վերալ, որ իսկոյն միմեանց ձեռքից յա-  
փշտակում են: Այսուհետև խնջոյքներ են կազմում, ուրա-  
խութիւններ անում ու նոր զոյգերի արևշատութեան հա-  
մար ջերմաջերմ բարեմաղթում:

Հարսանեկան հանդէսները վերջանալուց յետոյ, երբ  
Իպնի-Սէլամը մտնում է Լէլլու առանձնասենեակը և նրա  
կերպարանքն ու դրութիւնը նկատում է, քիչ է մնում ու-  
րախութիւնից խելքը գլխից գնայ և ուշաթափ լինի: Այն-  
տեղ գտնուած նաժիշտները այս բանը նկատելով, երեսին  
վարդաջուր են սրսկում և հազիւ կարողանում են խելքը  
գլուխը բերել նստացնել:

Հանգստանալուց և խելքը գլուխը գալուց յետոյ, երբ  
մօտենում է Լէլլուն և ուզում է մի քիչ հանաքներ անել,  
Լէլլին բարկանում ու կատաղում է: 2է թէ իրան հեա հա-  
նաքներ անել չի սիրում, այլ և դիպչում է նրա արժանա-  
պատութեանը և չի էլ ուզում հետը քաղաքավարի վարուել  
ու խօսել:

Լէլլու ալսպիսի վարմունքը Իպնի-Սէլամի վերալ խիստ  
վատ ազդելով՝ համարեա նրան արբեցնում ու թմրեցնում է:  
„Արգեօք Լէլլին սպասաւորներիցս ինչ պակասութիւն է տե-  
սել, մտածում է, որ ես նրա կողմից ալօպիսի անպատճու-  
թեան ու սառը վարմունքի արժանացալ“:

Լէլլին նրա տրամադրութիւնն հասկանալով, պատաս-  
խանում է. — «Քեզ այն յանցանքն էլ բաւական է, որ դու  
իմ վաղուց ուրիշի հետ ունեցած սիրոյս ձեռք մեկնեցիր:  
Ես իմ նպատակիս ու բաղձանքիս չը հասնելուց յետոյ, մի  
փոր հացի, կամ թէ քոյ ալդչափ գնահատութեան համար,  
քեզ երբէք չեմ հնազանդի ու հպատակի: Թէ որ կարողա-  
նամ մի հնար գտնել այս դրութիւնից դուրս գալու, գոնէ  
ինձ թունաւորելով կոչնչացնեմ ու կազատիմ“, ասելով, շա-  
րաչար երդումներ է անում:

Իպնի-Սէլամը Լէյլու բարկութեան հուրը տեսնելով ու տուած երդումները լսելով, երկիւղից ու կասկածանքից խեղճանում է։ Հազիւ թէ շեշտակի կարողանում է ոտքից գլուխ նրա տեսքին մակ տալ։ Տեսնում է, որ սա բերան տանելու պատառ չէ, ուստի լուսում է ու այս մասին ոչ ոքի խորհուրդ չի տալիս կամ հարցնում։ „Դեռ պէտք է համբերել ու սպասել, մտածում է. որովհետեւ ձեռքիս տակ միջոց ու կարողութիւն շատ ունիմ“ ասելով, յետ է քաշվում։

Իսկ Լէյլին օր օրի վրայ ախուվախը շատացնելով ու բորբոքուելով՝ սրտնեղութիւնից ալրվում—տոչորվում է։ Մանաւանդ երբ Մաճնունի գժուածի պէս սարերը ման գալը յալտնի է լինում ու ինքը մանրամասնաբար լսում է։ Ամօթն ու պատկառանքը մի կողմ դրած, յայտնապէս հրապարակ է գալիս ու ամեն օր Մաճնունի պտըտած կողմից փչած հողմերին երեւակայութեամբ հարցնում է. — «Արդեօք իմ սիրական Մաճնունը կենդանի է, արգեօք իմ այժմեան դրութիւնից ու կրած վշտերից և ցաւերից որևէ տեղեկութիւն ունի» ասելով, սկսում է ինքն իրան սրտապերել, յոյսերտալ, ու աշխուժով երգել. —

Իմ սիրելոյն ինձնից հեռու վանելով,  
Օտարի գիրկն ինձի արժանի տեսան,  
Անրնական ճանապարհով տանելով,  
Հսիրած մարդն է տառում են քո փեսան։

Ես երդուել եմ, Մաճնունի հետ ուխտ դրել,  
Մինչի վախճան նրա հետ սիրով ապրել.  
Մեզ երկուսիս այս Աստուած էր կամհցել,  
Թող ինչ կուզեն մեր մասին ասեն-խօսան,  
Թէ բոնութիւն զործ զնեն իմ կամքի դէմ,  
Թող գիտենան՝ որ ես էլ թոյն կընդունեմ.

Ակամայ սիրելուց—լաւ է որ մեռնեմ,  
Այն ժամանակ գոնէ շատերն կափսոսան։  
Ես նրանն եմ, նա իմս է, թող զիտնան,  
Թէ բարեկամ, թէ շարակամ իմանան,  
Լէյլի, զուցէ վերադ շատերը խնդան,  
Բայց ինչ կուզեն՝ թող բարբանչեն—քսփըսան։

Իսկ թշուառ Իպնի-Սէլամը այս դրութիւնը տեսնելով, դեռ ևս ակամայից մի կերպ համբերում է. բայց Լէյլուն սաստիկ սիրահարուած լինելով, թէև ամեն բան տանում է. միայն մի կողմից էլ բարեկամներից խիստ է ամաչում, որ պիտի ասէին թէ, մի աղջկայ սիրոյն ալնքան տարուած է ու անձնատուր եղած, որ նրա հասցրած ծանր ու անսաելի նեղութիւններն ու չարչարանքները յօժարակամ տանում է առանց ամաչելու։ Ինչու արդեօք այդքան նեղութիւնով ձեռք բերած մի աղջկայ սիրուց ձեռք չի վեր առնում։ Մի ուրիշ կողմից էլ մտածում է թէ, Լէյլին որ մի վալրենացած մարդի համար ալդքան ախուվախ և հոգս է քաշում, դրան համբերել ու տանել կարելի՞ է արդեօք։ Այսպէս էին մտածում նաև նրա բարեկամներն ու վճռաբար խորհուրդ տալիս, որ նորատի ու գեղեցիկ կնոջը ապահարզան տայ և ուղարկէ հօր տունը. սակալն նրանք մանրամասն եղելութիւնից տեղեկութիւն չունէին։

Երկու նոր ամուսինները այսպէս օտարացած էին օրերն անցկացնում և առանց միմեանց մօտ գնալու, հեռուից էին իրար հետ խօսում ու բարեկում։ Իսկ Մաճնունը սրանց դրութիւն մասին ոչինչ չը գիտէր, այլ սարերը ման գալով լաց էր լինում ու թափառում էր։

Մի օր էլ Իպնի-Սէլամի բնակավայրը մի արապ, կարեւոր գործի համար գնացած միջոցին. ճանապարհի մօտ կողմանակի կերպով լսում ու ականջին է հասնում Մաճնունի

Ճայնը: Մօտենալով տեսնում է, որ խղճալին կանգնել է ու  
լաց լինելով Լէլլու համար հետեւեալ սրտակոտոր ու տխուր  
երգն է երգում:—

Սիրոյդ քերի դառած, մատաղ օրերս,  
Ախուվախով անցկացրի սիրուհի,  
Գնաց, էլ չի դառնալ չքնաղ օրերս,  
Կեանքս թշուառ անցկացրի սիրուհի:

Անգութներ կան, բայց դու նրանց պէս չէիր,  
Ինչու ինձի այսպէս արիր տարագիր,  
Գժուածի պէս զցեցիր երկրէ երկիր,  
Օրս խաւար անցկացրի սիրուհի:

Եթէ կուզես՝ կեանքս քեզ մատաղ բերեմ,  
Ուղիղ սրտով գամ ոտքերդ համբուրեմ,  
Միայն ասա «Մաճնուն քեզի կը սիրեմ»,  
Ո՞հ, հերիք է... անցկացրի սիրուհի:

Երգն աւարտելուց լետոյ, անծանօթ մարդը մօտենալով  
նրան ասում է:— „Ա՛լ խղճալի Մաճնուն, երկար տարիներից  
ի վեր սիրու ճամբում կեանք մաշեցիր ու փշացրիր, սիրու  
համար լեռներում թափառեցար, որ ինչ է մի անհաւատա-  
քիմ սիրուհու սիրտը գրաւես դէպի քեզ: Բայց մինչև օրս  
նպատակիդ չը հասար—խորհուրդներդ կատարելապէս մնա-  
ցին անկատար: Մարդը այդպէս ապրելուց, մեռնելը հազար  
անգամ լաւ է: Երկար ժամանակ Լէլլին քեզ հետ ուխտ ու  
պալման դրեց, որ բացի քեզանից էլ ուրիշին սիրուհի չը  
դառնար: Ես քեզ կը պատկանիմ ասելով, սիրոյ հետ սիրտն  
ու հոգին քեզ գրաւական էր տալիս: Սակայն այդ հրապա-  
րակապէս ասած խօսքերն ու արած խոստումները բոլորը  
սուտ գուրս եկան: Նրա նպատակը հէնց կարծես թէ, քեզ

միայն սար ու քար գցելն ու հեռուից մտիկ տալն էր: Նրա  
հայրը իւր պատիւը պաշտպանելու համար, վեր առաւ նրան  
տուեց Խպնի-Սէլամին: Խիստ շքեղ հարսանիք արին և ալժմ  
երկուսը միասին ուրախ զուարժի ապրում են: Խոկ դու այս  
անցքերի ոչ մէկից՝ տեղեկութիւն չունենալով, մշտապէս  
լաց ու թաց անելով, գժուածի ու ապուշի նման այս ամայի  
լեռներում ու անապատներում թափառում ես: Քեզ պատա-  
հած վնասն ու դժբաղդութիւնը, խեղճ ողորմելի, աշխարհ-  
քում գեռ ոչ ոքի չի պատահել, որ ամբողջ կեանքը տարի-  
ներով լեռներում անցկացնէ վալրենու պէս»:

Թշուադական Մաճնունի համար երկինքը փուլ գար  
լաւ էր, քան թէ այս թունաւոր խօսքերը լսեց, սրանք նետի  
պէս հազար տեղից ցցուեցան վիրաւոր սրտում... Մի փոքր  
լետոյ ուշքը թուցնում է ու իրան գետնէ գետին խփում և  
աչքերից արիւն արտասուք թափելով՝ սկսում անհնարին  
լաց ու կոծ անել...: Ապա սթափուելով՝ սկսում է սրտամոր-  
մոք երգել.—

Անուշ լեզուից խաբուեցայ ու սիրտ տուի,  
Սիրականս դժբեց ուխտ ու պայմանին,  
Մի զեղեցկի համար պատահայ ցաւի,  
Որ չկացաւ իւր դաշինքի սահմանին:

Ինձ գրաւեց, սիրտս իւր մէջը առաւ,  
Կախարդեց ու թովեց, արիւնս սառաւ,  
Կեանքս թունաւորեց, դահիճս դառաւ,  
Երկուսիս զաղտնիքն յայտնի է ամենին:

Լեռներ թափառեցայ, դաշտեր շափեցի,  
Հացի փոխան վայրի բանջար լափեցի,  
Լէլլին թող պարծենայ, թէ քեզ խափեցի,  
Իւր տուած խոստումը՝ զիտէ պատանին:

Մաճնուն, որքան կուզես դու լաց ու ողբայ,  
Սիրուհիդ քեզ մոռցաւ, էլ չի ափսոսայ,  
Բայց դու մի ուրանայ, ճամբովդ գնայ,  
Թող քեզ շասեն չար արբանեակ սատանին:

Մաճնունի արարմունքը տեսնելով ալդ մարդը՝ թէպէտ  
և իւր ասածներից զզջում է... բայց հազիւ հազ կարողա-  
նում է սիրտ տալով մի քիչ միամտացնել... «Ես քեզ խաբե-  
ցի, ասում է, իմ յանցանքս կը ներես... ինդրում եմ ինձա-  
նից չը նեղանաս... նպատակս միալն քեզ փորձելն էր, որ  
տեսնեմ թէ ինչ կասես... ուզիդ հաւատայ՝ որ առանձին ոչ  
մի բան չկայ... թէպէտ Լէլլուն Իպնի Սէլամի հետ նշանա-  
դրել են, բայց բնաւ նրան իւր մօտ գալու չի թողնում...  
ճշմարիտն այս է, որ բացի քեզանից ուրիշ ոչոքի չի սիրում,  
մշտապէս քոյ հոգսդ քաշելով, քեզ վերայ մտածելով ու  
քոյ անունդ լիշելով է մնացել» ասելով՝ մի փոքր հանգս-  
տացնում է ու դադարեցնում:

Թէ և երկդիմի խօսելով անձանօթ մարդը իւր ստա-  
խօսութիւնը յայտնի է անում ու հասկացնում է, սակայն  
նախկին ասածներով էլ շատ կասկածների, հոգսերի ու մտած-  
մունքների տեղիք էր տուել տարաբաղդ Մաճնունին:

Այնու հետեւ սկսում է Մաճնունի գժութիւնը աւելանալ...  
նա ալդ բոլորը Լէլլու պատւի, նրան տեսնելու ու առնելու  
նպատակով էր անում ու իրան քարեքար տալիս լեռներում:

Սրտի սաստիկ կսկծից.— «արժան էր քեզ, ասում է  
Լէլլու հասցէին, որ ինձ մոռանալիր... այնքան դիւրահա-  
սատ լինէիր, որ խաբեբայ մարդկերանց խօսքով, մեր վա-  
զուց սրբագործուած սէրը ոտնատակ տալիր և ուրիշ գեր-  
կըն ընկնէիր... Եթէ ալդպէս էր, էլ ուր էիր ինձ հետ յա-  
փիտենական ուխտ ու գաշն գնում, որ միալն ինձ ես պատ-  
կանում և ոչ ուրիշին... Ահ, թող Աստուած ինձ այն օրը

չտայ, որ ես առանց քեզ դրախտն անգամ գնամ... թէ որ  
յանկարծ այդ բանը պատահեցաւ, այն ժամանակ, գիտեցիր,  
որ ինձ կը ոչնչացնեմ «ասելով՝ ուշ ու միտքը հետզհետէ  
կորցնում է ու սկսում զառամեալ անգէտ ծերի նման իւր  
սրտի ուզածն անգիտակցաբար ասել ու խօսել...— «Ես այն-  
պէս եմ հասկանում, աւելացնում է, որ ինձանից սէրդ ու  
յարգանքդ պակասացնելով և ուրիշների սուտ խօսքին հա-  
ւատալով, քեզ նուիրում ես օտար սրտերին... Ուրեմն մեր  
միմեանց տուած անսուտ խոստումներն յօդս ցնդեցանս ասե-  
լով՝ հետեւեալ տողերն է երգում.—

Սուտ խօսքերի հաւատալով ինձանից ձեռք վերցրիր,  
ձանապարհս մոլորցնելով, ինձ օդի մէջ թոցրիր:

Ճշմարիտ սիրոյ համար ոչնչացրի ցնծութիւնս,  
Լեռների զաղաթներին հաստատեցի բնակութիւնս:

Այս տողերն ասելով՝ դարձեալ բորբոքուած աւելացնում  
է.— «այժմ իմ կոտրուած սրտիս մէջ ինչու ալդ ցաւի սեր-  
մերը ցանեցիր... Անապատները մինչև անգամ անբաւարար  
ու նեղ անելով ինձ համար, անհաւատարիմ սիրուհի դար-  
ձար... Ես այսուհետեւ ևս անկեղծ սիրահարի նման հաւա-  
տարիմ կը մնամ իմ խօսքին ու խոստմանը և քեզ յաւիտեան  
չեմ մոռանայ՝ ասելով՝ սկսում է դառնապէս լաց լինելով  
աղիողորմ կերպով երգել.—

Հոգիս գեհենի մէջ այրեցիր թողիր,  
Հանգիստս խլելով արիր վայըենի,  
իմ կեանքս վառելով դարձուցիր մոխիր,  
Լեռները զցելով արիր վայըենի:

Քեզ էլ չի մնայ ալդ երջանկութիւնը,  
Կը ճաշակես կեանքի խիստ դառնութիւնը,

Աշքովդ կը տեսնես իմ թշուառութիւնը,  
Սուտ կոյր ձեանալով արիր վայրենի:

Լայն աշխարհում օրերս անցնում են տիսոր,  
Մրտումս ցցուած է հազար հատու սուր,  
Գիշեր ցերեկ այրըգումնմ առանց հուր,  
Ռւշը զրաւելով արիր վայրենի:

Ամեն օր շրջանը այսպէս չի մնայ,  
Տէրը ողորմած է մի կարդ կստանայ,  
Ուխտ իմ արել, քեզ բնաւ չեմ մոռանայ,  
Մաճնունիս խաբելով արիր վայրենի:

Այս ամեն անցքերից լետոյ, Մաճնունի հայրը որդու  
լեռներում թափառիլը տեսնելով... նրան տուն զերադարձնե-  
լու մի հնար գտնելու համար, բաւականին մեծ գումարներ  
ծախսելուց ու ոչ մի հնար չը գտնելուց լետոյ, մի անկիւն  
ընկած, Մաճնունի դրութնան մասին միշտ լաց լինելովէլ օրերն  
անցկացնում... Մի օր էլ ալս հոգսերի մէջ հիւանդանում է  
ու անկողնում պարկած, սկսում ծանը կերպով տըքտըքալ: Ուս  
դրութեան մէջ մի օր էլ մտածում է որ.—«կեանքս մաշ-  
գում է, ես մեռնելու վրայ եմ... մեռնելուց լետոյ կալքս ու  
կարողութիւնս ուրիշները պէտքէ զրաւեն ու իմ տեղս  
փոխարինող մէկը չը պիտի լինի, որ գոնէ տեղս դատարկ  
չը մնայ... Դոնէ օր և իցէ կերպով պէտքէ մի անգամ էլ  
ուժուկուց անեմ, գնամ որդուս մօտ խօսեմ ու կտակ անեմ,  
գուցէ թէ խելքի գալ ու վերադառնալ տուն» ասելով՝ տե-  
ղից վեր է կենում և հազիւ թէ հազար ու մի գժուարու-  
թեամբ հասնում է սարը ու մտնում ալն ալրի մէջ, ուր  
Մաճնունն էր գտնվում... Տեսնում է որ խեղճը ցամաքել,  
ոսկոր ու մորթ եղած, չոր կմախք է դառել... շատ լաց  
լինելուց, աչքերը փախել բնի մէջ կորել են... իսկ ինքը

Փոշիաթաթախ՝ գետնի վրայ պարկել քնել է: Որդուն ալս  
դրութեան մէջ տեսնելով, հօր սիրտը կտոր կտոր է լինում...  
աչքերից արիւն արտասուք թափելով, Մաճնունի գլուխը  
գետնից բարձրացնելով դնում է ծնկան վերայ ու սկսում  
կամաց կամաց մաժել ու մրմնջալով երգել.—

Խաւարէր աչքերիս լոյսը,  
Քեզ այս օրին չտեսնէի,  
Դու էիր իմ տան մեծ լոյսը,  
Գիշեր ցերեկ կը գրգուէի:

Կոտրած սրտիս մխիթարանք,  
Քեզ պարզեց ինձի Աստուած,  
Կարծում էի քեզ սփոփանք.  
Միշտ աղօթում բազկատարած:

Բազդի հարուածին պատահայ,  
Կորաւ իմ ուրախութիւնս,  
Ինձի պահած պատիժն առայ,  
Թուաւ զնաց ցնծութիւնս:

Անբաղդ հայրդ զլխիդ վերե,—  
Նստած կանէ, լաց—աղաղակ,  
Քեզ կը ցանկայ կեանք ու արե,  
Որ շատ տապրիս, անուշ զաւակ:

Մաճնունը այս շօշափմունքից զարթնելով, աչքերը բաց  
արած տեսնում է, որ մի մարդ իւր զլուխը մաժում է. բայց  
հայրը լինելը չը գիտէր:— „Խնդրեմ ասես, ասում է, ո՞վ ես  
դու, որ ինձ ալդ լաւութիւնն անում ես, կամ թէ ո՞րտես  
զից ես գալիս և ո՞ւր զնում: Խնայիր ինձ և հանգիստ թող,

քունս մի փախցնիր ու սիրուհուս մասին ունեցած երեա-  
կալութիւնս մի խանգարեր...»:

Հայրը անմիջապէս վրայ է բերում.— „Ով իմ անբաղդ  
որդի Ղայս, մի վախենար, օտար մարդ չէ, այլ քոյ տարա-  
բաղդ հայրդ է» ասելուն պէս, Մաճնունը աչքերը տրորելով  
մտիկ է տալիս հօր երեսին և նրան ճանաչելով, ոտքերն  
ընկած աղաչում է, որ խնայէ իրան: Խոկ հայրը նրան վեր  
բարձրացնելով երկու աչքերից համբուրում է ու սկսում են  
միմեանց գրկախառնած լաց լինել:

Մի քիչ դադարելուց յետոյ, հայրը Մաճնունի վերայ  
մտիկ տալով, տեսնում է որ համարեա բոլորովին մերկ է...  
հետը մի ձեռք պատրաստի շոր է տարած լինում. հազցնում  
է նրան ու խրատելով ասում.— „Ով իմ հոգւոյս հատոր սի-  
րական որդի, դու որ մարդ ես, անասնական կեանք վարելն  
ինչ է, որ միշտ նրանց հետ խառնուած, մարդկանցից փախ-  
չում ես: Կեանքդ որ փչացնում ես, փոխարէնն ինչ պիտի  
ստանաս: Կեանք ասած բանդ, ջրի նման հոսում գնում է.  
իսկ դու անտեղեակ ալդ բանից, քեզ ոչնչացնում ես: Քանի  
տարի է, որ օգնութիւն խնդրելով վայրենացած ման ես գա-  
լիս. բայց ով է քեզ մինչև այսօր մի օգնութիւն տուել:  
Արի որդի, խելքդ գլուխդ հաւաքիր, տանը մօտս կաց. գուցէ  
այնտեղ բաղձանքիդ հաօնես: Իմ մեռնելուց յետոյ, բացի  
քեզանից էլ ուրիշ ժառանգ չունիմ, որ կալքս ու կարողու-  
թիւնս կառավարէ: Իմ միակ ժառանգը դու ես, դու էլ որ  
ալժմ խօսք չես հասկանում, իմ մեռնելուց յետոյ արդեօք  
իմ տեղը ով կը փոխարինէ: Յալտնի է որ օտարները պէտք  
է տիրեն իմ ունեցածին և ինձ փոխարինելով տեղս նստեն:  
Իմ պապենական շէն օճաղը քանդել—աւերելը միթէ իրա-  
ռունք է: Գնանք միասին իմ տեղս նստիր, բոլոր կարողու-  
թիւնս քեզ կը յանձնեմ: Տես որդի, յետոյ գուցէ թէ զդշաս,  
բայց ուշ կը լինի: Արի ինձ մի զըկիր, կեանքիս ու կարո-

զութեանս խնայէ, ափսոս եմ» ասելով՝ սաստիկ թախանձում  
է գլուխը կորցրած որդուն:

Թշուառ հօր այս ազդու խօսքերն էլ չը կարողացան  
ազդել Մաճնունի սրտի վերայ. չը կարողացան սիրուց. հե-  
ռացնել—ձեռք վերցնել տալ:

Նոյն վայրկենին սիրուց բորբոքուելով ու մոլեզնելով,  
գժուածի նման,— „Ինձ իմ սիրուհուն ու նրա վերայ ունե-  
ցած սէրը մոռացնել պիտի տաք» ասելով՝ դարձեալ ընկնում  
է առաջուան խենէշ գրութեան մէջ և հազար ու մի տեսակ  
սպառնալիքներ տալիս: Խոկ մի փոքր յետոյ սթափուելով ու  
խելքը գլուխը բերելով.— „Ով իմ թանկագին հայր, ասում է,  
առածներդ բոլորը ուղիղ են. թէկ ես հոգւով կուզեմ ընդու-  
նել, բայց անիրաւ սէրը ինձ իրան ծառայ ու գերի է շինել:  
Ես էլ ալդ բանն յանձն առնելով ու ընդունելով, միանգա-  
մայն ալդ վիճակին հպատակել եմ: Սիրոյ ճանկն ընկնող  
մարդի համար, կայքն ու կարողութիւնը հողի հաւասար  
քոն է: Ամբողջ աշխարհի կարողութիւնը իւր սիրուհու մի  
բուռն հողն ու մոխիրը անգամ չարժէ. բայց և այնպէս, տգէտ-  
ների հետ սիրոյ մասին խօսք ու զրոյց անել չի կարելի:  
Քեզանից միակ խնդիրս այս է, սիրելի հայր, որ ինձ իմ  
կամքին թողնես ու իմ պակասութիւններին ներես: Հայրա-  
կան երախտիքդ հալալ անելով՝ թոյլ տուր, որ անարգել ես  
իմ նպատակի յետեկից գնամ ու նրա վախճանին հասնեմ: Փոյ  
կարողութիւնն էլ ու քոյ ցանկացած ուրախութիւնն էլ թալ  
ձեզ համար մնայ, ես չեմ ուզում. միայն թէ ինձ հանգիստ  
թողէք—մի խանգարէք: Թողէք որ ես իմ եղով տապակուիմ:  
Լու գիտակէք, որ ես իմ սիրուց ձեռք վերցնողը չեմ» ասե-  
լով՝ խօսքը լրացնում է ու երգում:

Ես սիրոյ գերին եմ հոգւով ու մարմնով,  
նրանից հեռանալ՝ բնաւ չեմ կարող,

— 68 —

Անձնատուր եմ եղել իմ յօժար կամքով,  
Խօսքիցս ետ դառնալ՝ բնաւ չեմ կարող:

Չեմ ցանկանում ոչ կայք—ոչ կարողութիւն,  
Պաշտամունքս է միայն սիրոյ սըբութիւն,  
Ամենայն ինչ ունի իւր մէջ դառնութիւն,  
Բայց, ախ, սիրուց հեռու մնալ չեմ կարող:

Սէրն է միայն ինձ վերայ թագաւորում,  
Կամքիս վերայ միմիայն նա է իշխում,  
Նրա համար եմ ես այսպէս թափառում,  
Արած ուխտս, ես ուրանալ չեմ կարող:

Թողէք հանգիստ մնամ, ինձ մի խանգարէք,  
Երբոր մեռայ՝ այս խնդիրս կատարէք,  
Մաճնունիս Լէլլու հետ միասին թաղէք,  
Ես նրանից բաժան մնալ չեմ կարող:

Ողորմելի հայրը որդուց այս վճռական խօսքերը լսելով,  
զգածուած ասում է.—„Հոգւոյս հատոր սիրական որդի, թէ-  
պէտ բոլոր առածներս առ ոչինչ համարեցիր, բայց և այն-  
պէտ դարձեալ ողջ կացիր ինձի համար, Սիրայն վերջին կտակս  
քեզ այս է, որ մեռնելուս ժամանակ գոնէ գաս երեսիս մի  
բոււը հող լցնես, վերաս լաս ու հոգւոյս համար աղօթելով  
ողորմի ասես»։ Խօսքն աւարտելուց լետոյ, որդու աչքերն ու  
երեսը համբուրում է և լաց լինելով դատարկաձեռն վերա-  
դառնում է տուն։

Տուն հասնելուց մի քանի օր լետոյ, աշխարքից հրա-  
ժարուելով, հոգին աւանդում է Հօր Աստուծոյ ձեռքը—  
մեռնում է։ Սակայն Մաճնունը հօր մահուան մասին բնաւ  
տեղեկութիւն չունէր, այլ Լէլլու անհաւատարիմ վարմունքը  
միտ բերելով և նրա տանջող սիրուց դրդուած, հետևեալ  
բողոքարկու երգն է երգում։

Ով սիրուն, դաշոյն առած դու առիւծի դէմ մի գնայ,  
Միտիս դրած վէրքերդ բաւ է ինձի, դէմ մի գնայ,  
Միրոյն հպատակ եղած մարդին դու միշտ խնամք արա,  
Իրը թշնամի մի լինի—նրան հակառակ մի գնայ։

Անձկալիդ ցաւից փրկէ, դեղձան մազերդ քող արա,  
Օրկի լոյսը ծածկէ, թող չը փայլի, աղօտ մնայ,  
Գլխիդ մազերի թուով—արածներդ հաշուի չի գայ,  
Հնդկացոց թագաւորի պալատի վերայ մի գնայ։

Արբեցուցիչ քոյ սէրդ հէզ Մաճնունիս հոգւոյն դաւ չէ,  
Քաղցրահամ օշարակդ ինձի խմելու դեռ բաւ չէ,  
Քեզի համար մեռնելս—իսկ զլխից անցնելս ցաւ չէ,  
Ռտից զլուխ քեզ մատաղ, դու ինձի ներհակ մի գնայ։

Մի ժամանակից լետոյ, որսորդի մէ կը պատահելով Մաճ-  
նունին,—ևայ անհոգ մարդ, ասում է, դու այս լեռներում  
երգելով Լէլլու համար լաց ու կոծ ես անում, իսկ ողբալի  
հայրդ քոյ ցաւով տապակուած, մեռաւ—հանդերձեալ կեանքը  
գնաց։ Բոլոր մարդիք նրան ափսոսում—ցաւում ու նրա մա-  
հուան վրալ սուգ են անում, իսկ դու միայն անհոգ թա-  
փառում ես սար ու ձոր. քեզ պէս որդին որ բնաւ չը լի-  
նէր, աւելի լաւ չէր”։

Մաճնունն այս խօսքերը—լսելով, մէկ ցաւն երկուս է  
գառնում. աչքերից արտասուք թափելով, սկսում է գլուխն  
ու կուրծքը ծեծելի Վերջապէս հարցնելով գալիս հօր գե-  
րեզմանը գտնում է. ուշաթափ ընկնելով նրա վերայ ինքն  
իրան սկսում է միայնակ լաց ու կոծ անելով դառնապէս  
ողբալ։—„Ով իմ վշտակոծ ու անբաղդ հայր, հեծեծալով  
ասում է, իմ կարօս քաշելով, հոգիդ աւանդեցիր առ Աս-  
տուած. ինձ թողիր անոք ու անօգնական. այսուհետև ես  
միայնակ ինչ պիտի անեմ։ Կենդանի ժամանակդ գանէ որ-

գիտական մի փոքրիկ ծառայութիւն անգամ չարի քեզ, որ այժմ խիդս մի քիչ հանգիստ լինէր ու այդ հոգսը գէթ չը ծանրանար սրտիս վերալ: Ափսոն, որ այժմ քեզ միայն յաւիտենական քնով հանգիստ ննջած եմ տեսնում: Խոկ ես տա, կաւին աստանդական, երերուն ու տարագիր պիտի մնամ աշխարհի երեսին» ասելով, հօր գերեզմանը համբուրում է և մի սրտամորմոք երգ երգելուց յետոյ, դիմում է դարձեալ գէպի լեռները:

Հօրս մօտը յանցապարտ եմ—մեղաւոր,  
Պարտքս չկատարած ես թառամում եմ,  
Ամեն կերպով ինձ գտնում եմ յանցաւոր,  
Պարտազանց լինելով ես մորմոքում եմ:

Ներէ իմ յանցանքս հայր իմ սիրասուն,  
Ու մի անիծեր քո անառակ որդուն,  
Այսուհետեւ միշտ պիտի լամ օրն ի բուն,  
Որովհետեւ ես յանցանքս զգում եմ:

Մնացի միայնակ—անտէր ու անոք,  
Այս մասին ում պիտի ես անեմ բողոք,  
Ինձի բաժին մնաց լաց ու կոծ մորմոք,  
Միտք անելով կացած տեղս գծվում եմ:

Միայն Լէլուս սէրը մնաց ինձ ընկեր,  
Նա պիտ լինի սրտիս անձրև բարեբեր,  
Մաճնունիս դիմացն է, թէ զօր—թէ գիշեր,  
Առանց քնի—ես բաց աշբով տեսնում եմ:

Այսպէս ճանապարհին գնացած միջոցին, տեսնում է մի մարդ, որ ձեռքին մի նամակ բռնած ունէր. որի պարզ հասցէն գրուած է լինում. „Գիրս Լէլու կողմէց, հասնի Մաճ-

նունին»: Մաճնունն այս բանը տեսնելով, համբերանքը չի տանում, խելացնորի նման վրայ պրծած, իսկոյն մարդի ձեռքից նամակը խելով, բաց է անում և մէջը գտնուած Լէլու պատկերը եղծում—ոչնչացնում է ու իրանը դրօշմում տեղը: Նամակաբերն այս խենթուխելառ արարմունքի վերայ զարմացած հարցնում է.—«Ա, գիտ, սիրուհուդ պատկերն ինչու եղծեցիր»:

—Ես սիրուհուս հետ անբաժան մէկ եմ եղած. ասում է, այսուհետեւ մեր մէջ իմ ու քոյ այլևս չկայ. հէնց դրա համար էլ նրա պատկերը եղծել—ոչնչացնել պէտք էր, բայց գու մի խօսք չը հասկացող ու անգէտ մարդ ես երկում. միայն ես ցանկանում եմ, որ միտքս ու նպատակս և արածս բանը մի փոքր ըմբռնես և նրանք առանց վերագիրի—անխարդախ կերպով ասես ու հասկացնես սիրուհուս. ալժմ լաւ հասկացած ասածներս ասելով, թողնում հեռանում է:

Այնուհետեւ մի ժամանակ լեռներում գազանների ու կենդանիների հետ է ապրում և ժամանակ անցկացնում: Այնպէս որ բոլոր գազաններն ու կենդանիք անպայման նրան հնագանդում ու հպատակում են: Ուր որ գնար, բոլորը նրա հետ միասին, վարժուած որսկան շների նման կը գնալին: Սրանց մէջ մի ամենասիրուն թռչուն կար, որ խիստ քաղցը երգել գիտէր: Մաճնունը այս թռչունին ալնքան էր սիրում, որ իւր կերած ամեն մի տեսակ կերակուրից, իւր ձեռքով մի պատառ էլ մշտապէս նրան էր տալիս: Բոլոր կենդանիքը նրա հետ ալնքան մտերմացած ու ընտանեցած էին, որ այլևս մօտից չէին հեռանում ու բաժանվում:

Միշտանկեալ կերպով պատմում են, որ թագաւորի մէկը, մարդկանց պատժելու համար, մի քանի հատ առիւծներ էր պահում, որ եթէ մէկին պատժել ու զենար, մերկացնէր ու գցէր նրանց առաջը որ պատառեն ուտեն:

Միկանոյն ժամանակ այդ թագաւորը մի խելացի ու շնոր-

Հալի երիտասարդ ծառալող է ունինում մօտը, որը շատ մեծ պատիւ ու յարգանք էր վայելում։ Ալդ երիտասարդը մի անգամ ինքն իրան մտածում է. — «Թէ որ մի օր ինձ պատժելու համար թագաւորը այս առիւծների առաջը գցէ, այն ժամանակ իմ դրութիւնը Բ'նչ կը լինի» ասելով, առիւծների հոգատար կերակրողին պարգևներ ու իրանց — առիւծներին էլ մի քանի գառներ է տալիս ու ինքը մօտները կանգնում նայում է, թէ ինչպէս են պատառոտում ու լափում։ Առիւծները կերակուրն ուտելուց յետոյ, մի մտերմական ու երախտագիտական հայեցք են ձգում նրա վերայ ու հանդարտ կերպով նայում են գէպի նա:

Ինչպէս որ արդէն գուշակել էր, ալնպէս էլ դուրս է գալիս։ Թագաւորը մի օր ալդ երիտասարդին, թէ ինչու համար՝ յայտնի չէ, պատժել է ուզում և հրամայում է նրան մերկացնել ու ձգել առիւծների առաջը։ Նրամանն անմիջապէս կատարվում է։ Բայց առիւծներն այս բանը նկատելով, առանց մի վնաս տալու, կամ նրա մազին անգամ դիպչելու, պոչերը գետնին են խփում ու շրթունքները քսում երիտասարդի ոտքերին։

Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ, իբր թէ ամեն քան վերջացած համարելով, թագաւորը հրամայում է թէ. — «Գնացէք նրա ոսկորները հաւաքեցէք ու տարէք մի տեղ անյալտացրէք, թող կորչի գնայ»։

Գնացողները գալիս թագաւորին պատմում են. — „Մեծագօր Տէր, ասում են, առիւծները երիտասարդի մի մազին անգամ չեն դիպել-վնասել, նա կենդանի նրանց մօտ նստած է»։

Այս անակնկալ ու անսովոր բանը լսելով, թագաւորը շատ է հետաքրքրվում ու հրամայում է որ բերեն ներկայացնեն իրան։

Ալդ հրամանն էլ իսկոյն կատարվում է։

Դունից ներս մտնելուն պէս, երիտասարդը խոնարհ

Երկրպագութիւն անելով պատրաստի կանգնում է։

Թագաւորը երիտասարդին տեսնելուն պէս, ոտքից գլուխ չափելով, հարցնում է. — «Կախարդութիւն արիր, թէ որևէ աղօթք կարդացիր, որ առիւծները քեզ չը վնասեցին»։

Իսկ երիտասարդը, սկզբից մինչև վերջը, բոլոր եղելութիւնը մանրամասնօրէն ուղիղ պատմում ու բացորոշ խոստովանում է թագաւորին։

Այս համառօտ պատմութիւնից երևում է, որ պատառող գաղաններն անգամ իրանց տեղին երախտագէտ լինել ու մտերմանալ գիտեն, որ իրանց բարերարին չեն մոռանում ու վնասում։

Սյս օրինակ էլ լեռներում այն գաղանները Մաճնունի կշտից չեին հեռանում։ Կարծես նրանց վերայ սիրահարուած ու մտերմացած, լաց լինելով հետները ման էր գալիս։

Մի գիշեր էլ Մաճնունը խնդրուածք է անում. — «Ով Տէր Աստուած, դու իմ տառապեալ սրտիս մէջ մի կարծիք կամ յայտնութիւն գցէ, որ ես իմանամ թէ իմ ապագան Բ'նչ պիտի լինի» ասելով, քնում է ու երագում տեսնում, որ իբր թէ գետնից մի ծառ բուսաւ և այս ու այն կողմ բազմաթիւ ճղներ արձակեց ու մի գեղեցիկ և նաշխուն թռչուն էլ եկաւ ալդ ծառի վերայ իջաւ, կտուցից մի անգին քար վալր գցեց ու թռաւ գնաց։

Մաճնունը քնից զարթելով՝ «Աստուծով տեսած երազս քարի է» ասելով՝ շատ ուրախ է լինում և սկսում է սիրուհու կողմից փչած հողմերին հետեւալ տողերն ասել. —

Թէ սիրուհու կողմիցն ես վիշում զեփիւո քաղցրաշունչ, Ախորժալուր մի համբաւ բեր հաղորդիր նրանից, Քերածիդ փոխադարձը տասնապատ յաւելուածով, Հողլոյս հատոր սիրուհուս տար նուիրէ ինձանից։

Հքնազագեղ սիրուհիս, զեփիւռ, արդիօք ուրախ է,  
Թէ նրա էլ օրերը իմիս պէս ախ ու վախ է,  
Մի գուցէ սրտի խորքից դուրս թռած խօսքը ախ է,  
Դէժ միայն մի խօսք ասա, զեփիւռ. նրա կողմանից:

Ախ, զու ոչինչ չես ասում, իմ սիրտը կտրատում ես,  
Դեռ օրհասը չը հասած, ինձ սև ծովը նետում ես,  
Լուռ մնալով կարծես թէ՝ ինձի դատափետում ես,  
Մաճնունիս խղճա, զեփիւռ, մի բան ասա իրանից:

Այս խօսքերն ասած—չասած, նկատում է որ հանդէ-  
պից մի ձիւոր է գալիս, բայց եկողը մի լուսաւոր մարդ-  
էր երևում:— „Արդեօք այս մարդից մի բարի համբաւ կարո՞ղ  
եմ լսելք ինքն իրան մտածում է Մաճնունն ու մօտենալով  
եկողին, «ով արագահաս սուրբ Սարգիս, ասում է, ինչպէս  
որ ուրիշ նեղեաներին անսպասելի կերպով օգնութեան ետ  
հասնում, այս նեղ գրութեան մէջ ինձ էլ հասիր ու այն  
չքնաղ կոլսից մի բարի լուր տուր” ասելուն պէս, այդ լու-  
սաթաթախ մարդը ձիուց վեր է գալիս ու մօտենալով Մաճ-  
նունին ասում է:— Այս ինչ տեղը տեսալ, որ մի բարձրա-  
հասակ գեղեցկու հի կանգնած լաց էր լինում: Աղջիկս, հար-  
ցրի, ինչու ես լաց լինում, ասա տեսնեմ պատճառն ինչ է»:  
Նոյն ժաման իմ հարցին պատասխանեց:— „Գուցէ լսած  
լինիս հայր, ասաց նա, Մաճնունի սիրահար Լէլի որ ասում  
են, այդ տարաբաղդ արարածը ես եմ: Մի կողմից իպնի—  
Սէլամի և միւս կողմից հօրս ձեռքից անտանելի տառա-  
պանքներ կրելով, մնացել եմ հոգս ու ցաւերի մէջ և չեմ  
կարող մի գեղ ու ճար գտնել ազատուելու»: Այսքանն լսե-  
լուց յետոյ, Մաճնունն աւելացրեց և հետեւալ տողերը:—  
Բացի ցաւից—արտասուքից՝ այլ ընկեր չգտնուաւ,  
Եւ բացի լուռ համբերանքից, զեղ ու ճար չգտնուաւ,

Որքան լացի ու ողբացի, ոչ մի օգուտ չտեսայ,  
Իմ բիւրաւոր ծով ցաւերին, ախ, հնար չգտնուաւ:

Բաղզս մի անզամ ծովն ընկաւ, հնար չկայ դուրս գալու,  
Միայն մի մաշուած կեանք ունիմ խղճալի Լէլուս տալու,  
Անցուցած օրերը ասես, լալու են ու ողբալու,  
Ինձ այս կրակից ազատող ոչ մի ճար չգտնուաւ:

Ամբողջ գիշեր աչքս երկինք զցած աստղերն եմ դիտում,  
Խոկ ցերեկը ինչ եմ անում, ես ինքըս էլ չեմ գիտում,  
Մինչեւ անզամ քո արածին, դարձեալ զու չես հաւատում,  
Անրախտ Մաճնուն, քո ցաւերիդ, մի հնար չգտնուաւ:

Յետոյ ծերը աւելացրեց, որ Լէլին բողոքում էր,  
իբր թէ զու գեռ ևս սրտիդ ուզած տեղերը ազատ ման ես  
գալիս, «իսկ ես, ասում էր խղճալին, մի տեղ գնալու համար  
կապվում մնում եմ, որովհետեւ ծնողացս անէծքց վախենում  
եմ»: Սակայն քեզ համար դարձեալ ախ քաշելով կրկնում  
էր—«արդեօք այն ողորմելին այժմ ինչ գրութեան մէջ է»:

«Նրա գրութիւնն այն է, պատասխանեցի ես, որ լեռ-  
ներում գազանների հետ ման գալով, երբեմնապէս քոյ սի-  
րոյդ համար երգ երգելով ու լաց լինելով է թափառում»:  
Այս խօսքերս լսելուն պէս, մի խոր ախ քաշեց և ուշաթափ-  
եղաւ: Քիչ յետոյ խելքը գլուխը գալով:— «Ինձ իմ սիրակա-  
նից, եթէ գիտես, ստոյդ տեղեկութիւններ հաղորդիր» ասաց:  
Ապա դառնալով ինձ:— „Արդեօք մի նամակ որ գրեմ, տա-  
նես կը հասցնես նրան»:

„Գլխիս վերայ ասացի»: Խոկ նա նամակը պատրաստելով  
լանձնեց ինձ: ևս էլ նամակը նրանից ստանալով, ահաւա-  
սիկ աճապարանօք հասալ ախտեղ, որ նամակը քեզ լանձ-  
նեմա ասելով, նամակը ծոցից հանում ու տալիս է Մաճնու-

Նին: Իսկ Մաճնունը սիրուհու նամակը ձեռին, հետևեալ  
խանդավառ տողերն է ասում.—

Ազատ խօսիք, ով զու նամակ,  
Սիրուհու մօտիցն ես գալիս,  
Դեռ շրացած քո կնիքդ...  
Վարդենաստանիցն ես գալիս:

Ծոցումդ ինչ կայ ծըարած,  
Արգեօք մէջդ սէ՞ր է պահած,  
Թէ սիրուհիս զեռ քարացած...  
Շամ, ում մօտիցն ես գալիս:

Երգէ, խղճուկ Մաճնուն, երգէ,  
Սրտիդ մէջը լիրը վէրք է,  
Սիրոյ պտուղն անուշ բերք է,  
Ախ, որ անկիւնիցն ես գալիս:

Այս խօսքերն ասելուց յետ, նամակը բաց անելով կարդում է, որ հետևեալ բովանդակութիւնն ունէր: — „Նախ Աստծուն եմ փառք և գոհութիւն մատուցանում. և ապաք նուիրում վերջին յուսահատական ողջոյնս և օրտեռանդն բարեմաղթութիւնս: Լսեցի որ առաջուան պէս դարձեալ լեռներումն ես շրջագալում ու ամեն բանի վերահասու լինում, ինչ որ մեր սիրոյն կը վերաբերի...: Ախ, եթէ իմ ձեռքից գար, ես էլ քեզ նման լեռներում կը թափառէի. բայց ինչ օգուտ, որ անկարող եմ...: Թէ որ իմ դրութիւնից կը հարցանես, մշտապէս սէրդ սրտիս մէջ ընկած, որդի նման կրծում է ու ինձ տակնուգրալ է անում...: Հայրս թէ և մի խաբէական ճանապարհով ինձ Իպնի-Սէլամին տուեց, բայց գեռ ևս ամենեին նրան ինձ մօտ չեմ թողել... Թէ պէտ ալսպէս ապրելը կեանք չէ, այլ սև օրեր, որ կամաց

կամաց պիտի անցկացնենք: Մօտ օրերս հօրդ ցաւալի մահը լսեցի, որի համար սեեր հագած սուգ եմ պահում: Թող Ալլահը քեզ երկար կեանք տալ և վշտացած որտիդ համբերութիւն պարգևէ, որովհետեւ բացի համբերութիւնը. Էլ ուրիշ ոչ մի հնար չունինք: Աստուծուց մշտապէս խընդրուածքս այս է, որ մեր այսքան տարուան քաշած ցաւերից ու հոգսերից ալսուհետեւ ազատ ու ապահով պահէ և միմեանց տեսութեան արժանացնէ, որպէսզի բաղդաւորների նման մի քիչ ուրախ օրեր էլ մենք անցկացնենք: Ինչ որ ախուվախ արինք բաւակտն է...“:

Մաճնունը նամակը կարդալուց յետոյ, նամակաբերի ձեռքը համբուրելով ինդրում է.— „Ինձ կը պարտաւորես և մեծ լաւութիւն արած կը լինես, ասում է, թէ որ ունիս գրիշ, մելան ու մի թերթ թուղթ շնորհես, որ ես այս բերածդ նամակի պատասխանը գրեմ: Նոյն վայրկենին անծանօթը Մաճնունի բոլոր խնդրածները տալիս է, Իսկ Մաճնունը նստում վայրկենապէս գրում ու յանձնում է նրան: Նամակը ստանալուն պէս, անծանօթը իսկոյն ճամբար է ընկնում և նամակը բերում տալիս Լէլլուն: Լէլլին նամակն հէնց ստանում է թէ չէ, իսկոյն պաշում դնում է ճակատին ու քսում երեսին և ապա բաց անելով կարդում, որ հետևեալ մտքերն էր բովանդակում իւր մէջ: — „Նախ գոհութիւն տիեզերքի ստեղծող Արարշին, ով իմ սրտի սիրական դրախտի պարտիզի վարդ ու յասմիկ Լէլլի: Վիրաւոր սրտիս գեղ ու գարման անելը... ինձ օտարի տեղ դնելով... կարծես թէ զլացար: Բարերար Տէրը թող թանկագին կեանքդ նորոգելով երկար անէ ու նոր ծաղկած շուշանի նման եղեմի պարտիզում վառ պահէ: Թէ որ իմ դրութիւնից տեղեկանալ կուզես, հազար բերան փառք անմահ Արարշին, որ գեռ ևս մեր միմեանց հետ ունեցած սէրը օր աւուր վըալ աւելացնում է իմ մէջ...: Այս էլ գիտցիր, որ օրերս մշտապէս

դազանների հետ անցկացնելով, առաջուանից աւելի հոգսերի մէջ ու անհանգիստ եմ և գլուխս քարերին խփելով մտածութեան ծովի մէջ եմ ընկղմուած... բայց թող Տէրը քեզ ուրախ ու զուարթ պահպանէ մինչեւ ի կատարած աշխարհի՝ գրելով՝ նամակն աւարտում է:

Այդ ուրախ ու տիսուր տրամադրութեան տակ, գրում է հետեւեալ երգը.—

Սիրուհուցս նամակ առայ,  
Ցնծայ սիրոտ իմ, էր տիսուր ես,  
Թէև փափադ—կարօտ չառայ,  
Դու միթէ ցաւի աղբիւր ես:

Օրերս անցնում գնում են,  
Աչքերս նրան որոնում են,  
Կենդանիքն անզամ քնում են,  
Բայց ինձ ասում են թէ ուր ես,

Արդեօք ո՞ր մէկ ցաւս ողբամ,  
Կամ ո՞ր մէկ հոգսիս վերայ լամ,  
Թափառումնմ ես յարաժամ,  
Դու ինձ ասում են թէ կոյը ես:

Քեզի այդպէս է վիճակուել,  
Մաճնուն, զլիսիդ բաղդն է ծեծել,  
Դժութիւնդ ով է տեսել...  
Բայց ասում են թուք ու մուր ես:

Պատմում են որ Մաճնունի քեռին (մօրեղբալը) Սէլիմ անունով մի զառամեալ ծերունի ու խղճի տէր մարդ է եղել:  
Որքան էլ որ Մաճնունին այդ գրութիւնից ազատելու համար զանազան միջոցների է ձեռնարկում, այնու ամենալիւ

չի աշողվում մի հնար գտնելու: Վերջապէս այս ու այն կողմ ընկնելով, գնում լեռները Մաճնունին գտնում է, նրան հաց—կերակուր և հանգերձներ է տալիս...: Մի օր էլ որոնած միջոցին, տեսնում է որ Մաճնունը լերան ստորոտում մի շուաք տեղ նստած է...: Քեռին նրա արդ գրութիւնից երկմտելով՝ սկսում է բարձրածալն աղաղակել: Մաճնունը այս ձայնից սթափւելով ու քեռուն ճանաչելով, տեղից վեր է կենում գնում է առաջ և ձեռքից բռնած բերում նստացնում է մօտն ու սկսում են խօսել: Այնուհետև քեռի Սէլիմը կարծիքից դուրս գալով ու միամտուելով, հետը տարած հանգերձները առաջարկում է հագնելու:— «Պատուիդ համար թէև կը հագնեմ, ասում է Մաճնունը, բայց գիտցիր որ սիրոյ կրակից բորբոքուելով, գարձեալ կը պատառոտեմ ու կտոր կտոր կանեմ»:

Քեռի Սէլիմն այդ խօսքերն իմանալով, շատ խնդրում աղաչում է, որ իր ծերութեանը խնայէ ու ալդպիսի բան չանէ:

Մաճնունը այս խնդրուածքից խեղճանալով, զիջանում է քեռու խնդիրքին: Խոկ քեռին իւր տարած պաշարեղենից մի քանի տեսակ խմորեղէն գնում է նրա առաջը, որ ուտէ. բայց Մաճնունը խմորեղէնների մի մասը տալիս է գազաններին: Քեռի Սէլիմը նրա այս վարմունքը նկատելով՝ մնում է ապշած ու զարմացած և հարցնում է:— «Հիմա դու բնչ պէտք է ուտես»:

«Լէլլու կողմից փչած քամուց զատ, ինձ ուրիշ ոչ մի ուտելիք պէտք չէ» պատասխանում է Մաճնունը:

Այդ միջոցին սրտի սաստիկ վշտից ու վրդովմունքից յուզուած, զառանցելով այս երգն է երգում:—

Ինձ կերակուր հարկաւոր չէ,  
Օդն ու ջուրն է իմ բաժինս,  
Մարդկանցից բարիք չը տեսայ,  
Թուք ու մուրն է իմ բաժինս:

Սրտերը սաստիկ քարացած,  
Կարծես քար ու երկաթ դարձած,  
Ճաւերն իմ սրտիս են բարձած,  
Այրող հուրն է իմ բաժինս:

Սիրուհիս ինձ մոռացել է,  
Ել չի լսում, քառացել է,  
Հոգսերս խիստ բազմացել է,  
Հատու սուրն է իմ բաժինս:

Անբաղդ Մաճնուն, լաց ու ողբայ,  
Մինչև Աստուած վերադ խղճայ,  
Մի օր քեզ սև հողին պահ տայ...  
Տիսուր լուրն է իմ բաժինս:

Քեռի Սէլիմը այս խօսքերից դարձեալ ապշած է մնում.  
և այնուհետեւ սկսում է նրա քմքին յարմար հաճոյախօսութիւններ անել...:— «Աշխարհում, բացի իւր վիճակից գոհ լինելուց՝ ուրիշ լաւ բան չկար ասում է ու տիրամած ողբում... Եւ ապա դառնալով դէպի Մաճնունը, սկսում է հետեալ պատմութիւնն անել:— «Ճամանակով որսորդութեան սիրահար մի թագաւոր է լինում: Օրուալ մէկը լեռներում ման եկած միջոցին, տեսնում է որ մի ճգնաւոր ալրի դասանը նստած է: Իւր որսակիցներից մէկին հրամայում է, թէ գնա տես ո՞վ է այդ մարդը և ինչու համար է այդտեղ նստել: Գնացողը մօտենալով նրան հարցնում է.— „ալ մարդ, դու այս լեռներում ինչ գործ ունիս, կամ թէ ում ես սպասում:“

«Մենք աշխարհից հեռացած ու ձեռք վերցրած մարդիք ենք, որ գիշեր ցերեկ աղօթելով ենք զբաղւում...: Օրական մի քիչ խոտ կամ թարմ բոլորի արմատներով ենք կերակրում»:

Գնացող մարդը ճգնաւորի խօսքի վրայ մնում է զարմացած և վերջը դիմելով նրան ասում է.— «Պատուական հայր, այն հեռուից երեացող դիցազնը, որին տեսնում ես, նա մեր թագաւորն է, արի գնանք նրա մօտ:

Ճգնաւորը ժպտալով պատասխանում է.— «Ես ալդպիսի մարդկերանց հետ ինչ գործ ունիմ... Ուզիղ է, թէս մեր այս կերածը ձեզ խոտ է թւում, բայց մեզ համար մեղը ու խորիսի է... թէ որ զիջանես ու մի պատառ ուտես, այնուհետեւ ալլես համից չես կշտանալ»:

Գնացող մարդն այս խօսքերը ճգնաւորից լսելով, վերագառնում է թագաւորի մօտ և իւր ամեն տեսածն ու լսածը մի առ մի պատմում է նրան:

Լուլուց յետոյ, թագաւորը առաջ գնալով, մօտենում է ճգնաւորին, ձեռքը համբուրում է և օրհնութիւնն առնելով, թողնում այնտեղից հեռանում է:

Քեռի Սէլիմը հրբ իւր պատմութիւնն աւարտում է, Մաճնունը նրա պատմութիւնից դժգոհ է մնում... վերջը հագի շորերն հանելով շպրտում է մի կողմ ու ախ քաշելով սկսում է լաց լինել և ասել:— «արդեօք մալրս հիմայ կարօտս քաշելով ինչ դրութեան մէջ է. բաւական ժամանակ է որ ես նրան չեմ տեսել»:

Քեռի Սէլիմն այս խօսքը նրանից լսելուն պէս, առանց ժամանակ կորցնելու, գնում է մօրը նստացնում մի արագաքալ ուղտի վերայ ու բերում Մաճնունի մօտ:

Մալրը Մաճնունին այս դրութեան մէջ տեսնելով, փաթաթւում են միմեանց ու լաց լինում...: Վերջը մալրը խնդրելով ասում է.— «աւի որդի, քեզ տանեմ ու հօրդ տեղը նստացնեմ, մեր կալուածքները կառավարէ, որ օտարները չը տիրեն»: Օակայն ալդ խօսքերը թէ քարին աօած թէ Մաճնունին՝ մի և նոյն էր:

Մօր տեսութիւնից երկար ժամանակ զրկուած լինելով,  
յանկարծ սիրտը փղձկում է, և կրկին ու կրկին նորա ձեռքե-  
րըն ու ստինքները համբուրելով թողութիւն է խնդրում ու  
լաց լինելով երգում է.—

Սիրոյ համը շառած, ես գերի զառայ,  
Մայրիկ ներէ որդուդ ծանր յանցանքը,  
Սիրոյ լծի տակը, էփայ ու վառայ  
Մայրիկ ներէ որդուդ ծանր յանցանքը:

Ինձ պէս շատերն են այդ ցաւով բոնուած,  
Տառապում են խեղճ ու մոլոր զուարած,  
Թող հոգսերս բաշէ, բարերարն Աստուած,  
Մայրիկ ներէ որդուդ ծանր յանցանքը:

Դահարն ու Զօհրան էլ մեզ նման էին,  
Նրանց սիրտն էլ սիրոյ կրակով կայլէին,  
Բայց ասա թէ, խեղճերը ինչ անէին,  
Մայրիկ ներէ որդուդ ծանր յանցանքը:

Խեղճ Մաճնունդ զիշեր ցերեկ քուն չունի,  
Բնաւեր թռչուն է, ախ, մի բուն չունի,  
Յոյսը կտրած, սրտին մի թոյլ սուն չունի,  
Մայրիկ ներէ որդուդ ծանր յանցանքը:

Մալը տեսնելով որ իւր խնդրուածքը որդու կողմից  
անլսելի մնաց... լաց լինելով վերագառնում է տուն: Բայց  
այն օրից շատ չի անցնում, որդու կարօտը քաշելով տկա-  
րանում է ու մի քանի օրից յետոյ մեռնում:

Որովհետեւ Լէլին իւր վարմունքով Խպնի-Սէլամի աչքից  
ու երեսից ընկած, նրա մօտ համարեա իւր նշանակութիւնը  
կորցրել էր... մշտապէս Մաճնունի հոգսը քաշելով էր  
զբաղուած. ալնալէս որ՝ տանից դուրս գալ ու մի տեղ գնալը

Իւր համար մի յանցանք էր համարւում...: Միւնոյն ժա-  
մանակ սիրոյ կրակի մէջ շաղախուած, քաշվում էր մի կողմ  
ու երկնքի երեսին բագ քցած լուսնի նման շուրջը ճառաւ  
գալթներ էր արձակում. Մի ախ քաշելիս, խղճալու հիւ-  
ծուած ու շատ լաց լինելուց խաւարած աչքերից արտասուքի  
ջերմ ու վճիտ կաթիւները, մարգարիտի հատիկների նման  
էին վայր գլուրվում... իսկ սիրտը սաստիկ ուռչելուց, դուրս  
ընկնել լեռնաձև կերպարանք էր ստացել...: Մի խօսքով  
տարաբաղդ Լէլին լուսնի նման աղօտ ցոլմունքներ ու  
արեգակի նման սիրոյ բարկ ճառագալթներ էր դուրս արձա-  
կում ալրուած սրտի խորքերից:

Գերջ իվերջոյ մի գիշեր էլ համբերութիւնից դուրս  
գալով, ամենից ծածուկ տանից դուրս է թռչում ու մինչեւ  
աչքը կտրած տեղը գնում...: Ճանապարհին մի անծանօթի  
պատահելով հարցնումէ.-«Հայրիկ, Մաճնուն անունով մի  
սիրահար մարդ կայ, արգեօք նրան ճանաշում ես, կամ նրա  
գրութիւնից ու վիճակից մի որևէ տեղեկութիւն կարող ես  
ինձ տալ»:

«Այս, ասումէ անծանօթը. այս ինչ տեղը պատահեցի  
նրան, որ Լէլիու ցաւերով տանջուած, երգելով անհանգիստ  
ման էր գալիս»:

Այս տեղեկութիւնն առնելով՝ «այն քոյ ասած անբաղդ  
Լէլին ահաւասիկ ես եմ, որ նրանից աւելի սիրահար եմ ու  
տանջուած...: Դեռ ևս այս գիշեր մի կերպ ժամանակ գտայ  
ու առանց ոչ ոքի իմացնելու տանից դուրս եկայ հասայ այս  
տեղ...: Բայց քեզ մի խնդիր ունիմ հայրիկ, այն է, կը իրնդ-  
րեմ որ ձեր տեսած կտրիծին, եթէ կարելի է, շտապով գնաք  
քերէք այս ինչ տեղը և գալու մասին ինձ ծածուկ տեղե-  
կութիւն հաղորդէք» ասելով՝ մի քանի ընտիր մարգարիտներ  
քուուը սեղմելով, անծանօթին վարձատրում ու սիրտը շահումէ:

Անձանօթ մարդն ալդտեղից ճանապարհ ընկնելով,  
գալիս Մաճնունին գտնումէ և աւետիք տալով, Լէլլու ասած-  
ները նրան հազորդում ու առաջնորդումէ Լէլլու մօտ:

Ոյս լուրն առնելուն պէս, Մաճնունը ալդ մարդի հետ  
ճանապարհ ընկնելով գալիս հասնումէ Լէլլու բնակարանի  
մօտերքն ու սկսում ծածուկ շրջագալիել և իւր գալու մասին  
Լէլլուն մի կերպ լուր է հասցնում:

Լէլլին այս մասին իրիստ ուրախացած, վեր է կենում ծա-  
ծուկ գալիս է ու իրանց բնակավայրից բաւականին հեռու մի  
տեղ անհամբեր սպասում:

Մաճնունի ծերունի առաջնորդը հեռուից Լէլլուն տեսա-  
ծին պէս, գալիս է նրա մօտ ու ասում... « որովհետեւ Մաճ-  
նունը երկար ժամանակ կարօտդ քաշելով քեզ համար հալ-  
ուելմաշուել է, այդ պատճառով պէտքէ որ դու գնաս նրա  
մօտ... »: Այս ասելով՝ Լէլլու ձեռքից բռնած տանում յանձ-  
նում է Մաճնունին:

Մաճնունը իւր սիրուհուն յանկարծ տեսնելով, գինով-  
ցած մարդի նման արբում է... Եւ յետոյ խելքը գլուխը գա-  
լով. սիրահարներին յատուկ կորովութեամբ, սկսում է սրտա-  
շալժ կերպով երգել. —

Չեռք վերցնել չի լինի, սիրոյ անմահ բաժակից,  
Սիրահարը այրուելը սորվում է թիթեռնակից,  
Մշտապէս սիրականը կեանք կուտայ տարփածուին,  
Հողին անգամ խնայել չի լինի սիրականից:

Տուգանքս շիտեմ ինչ է, վճարեմ, ով աննման,  
Քեզ համար սոխակի պէս երգեր երգեմ պատուական,  
Քոյ արարներդ այսօր խօսում են հազար բերան,  
Քեզ տեսնելու փափաղով, նայում են ամեն տեղից:  
Հոգուով ու սրտով լինիմ ես քեզ ստրուկ ու գերի,  
Արդար բողոքս լսէ, մի թողուր իղձո թերի,

Բաղդածեծ եմ, խնայիր, հողը գլխիս մի բերի,  
Մտերմութիւնդ մի կտրի թշուառական Մաճնունից:

Լէլլին այս երգը լսելուն պէս, սկսում է լաց լինել:  
Իսկ Մաճնունը նրա լացը տեսնելով, չի կարողանում տա-  
նել. ինքն էլ է սկսում լաց լինել և ձեռքից բռնած առնում  
տանում է դէպի մի կողմ... բալց բաւականին ժամանակ  
անցնելուց յետ, ասում են, Լէլլին դարձեալ վերադառնում  
յետ է գալիս տուն:

Պատմում են որ Զէլտ անունով մի երիտասարդ է լի-  
նում, որը իւր հօրեղբօր աղջկայ վերայ սիրահարվում է։  
Խնչքան մարդիք էլ որ միջամտում են գործին ու գնում  
հօրեղբօրը խնդրում, խօսում ու հասկացնում են բանի էռւ-  
թիւնը, դարձեալ չի համաձայնում տալ. որովհետեւ խեղճ  
երիտասարդը աղքատ է լինում... Յոյսը ամեն կողմից կտրած  
խղճալի Զէլտը, սիրոյ հուրը սրտի մէջ բորբոքուելով՝ Մաճ-  
նունի օրին էր ընկել. Այնպէս որ, երբ մարդիք Մաճնունի  
դրութեան մասին խօսք էին բաց անում ու խօսում, յետեւից  
էլ անշուշտ Զէլտին էին մտաբերում ու լիշում:

Այդ միջոցներին Զէլտի հօրեղբայրը աղջկը մի հարուստ  
մարդի տալով, նրա սիրու սիրոյ անշէջ կրակով ալրում է  
ու թողնում բաղդի ձեռքը խաղալիք:

Այս բանը Զէլտը լսելով, կոծում—ողբում է ու Մաճ-  
նունի նման սիրոյ երգեր յօրինելով ու երգելով ման է գա-  
լիս: Ահաւասիկ նրա յօրինած սրտաճճիկ երգերից մէկը. —

Գարունն եկաւ, ով նազելի, ճեմելու ժամանակն է արդ,  
Պարտիզում սոխակն է երգում, լսելու ժամանակն է արդ,  
Խնչոյքներ պատրաստվում են, որ շէն սրտերն ուրախանան,  
Երդ ու նուագ ինչո՞ւ է պէտք, ուտելու ժամանակն է արդ:

Նազելով նկ նոճահասակ, կեանքս քեզ մատաղ լինի,  
Առաւօտեան թարմ հայեացքով նայելու ժամանակն է արդ,  
Ես օրն իբուն քեզի համար լաց—կոծով թափառումնմ,  
Առատասիրտ և գթառատ լինելու ժամանակն է արդ:

Զգոյշ կաց խղճուկ Զէլտին որ և է զրկանք չտաս,  
Խնամելու, պահպանելու, սիրելու ժամանակն է արդ,  
Թէ ինձ մի բարիք անել դու կուզես շուտ շտապիք,  
Քանդի հիմա յարգելու վայրկեանն—ժամանակն է արդ:

Մի օր էլ մի քանի տիկնալք Լէլլու մօտը գալով խիստ  
ախորժանօք Զէլտի յօրինած երգերից մի քանիսը երգում են  
Լէլլին հետաքրքրութեամբ լսելուց յետոյ հարցնում է.  
— „Ի՞նչպիսի մարդ է արդեօր ձեր ալդ ասած երիտասարդը»:

Տիկինները նրա մասին գիտեցածները մի առ մի խիստ  
յաւելուածներով պատմում են:

Անհամբեր Լէլլին նրան շուտ տեսնելու համար, շտա-  
պօք մարդ է ուղարկում, որ գնան Զէլտին կանչեն.

Մի փոքր յետոյ գալիս է Զէլտը:

Լէլլին սրտատրոփ հէնց նրան (Զէլտին) իրան է պատ-  
մել տալիս իւր գլխից անցկացած արկածները:

Զէլտն էլ առանց ծածկելու մի առ մի պատմում է այն  
բոլոր դէպքերը, ինչ օր իւր գլխից անցել էին: Իսկ Լէլլին  
լաց լինելով հետաքրքրութեամբ լսում էր: Միևնոյն ժա-  
մանակ Լէլլին Զէլտի բորբոքուիլը տեսնելով, նբան ափսո-  
սում է ու պատմութիւնը կարճել տալով լուցնում: Բայց  
բանն ալսպէս է յարմարցնում, որ ալնուհետեւ Զէլտը Լէլլու  
և Մաճնունի մէջ խօսք տանող բերող, կամ ալսպէս ասած,  
մէկից միւսին լուրեր հաղորդող է դառնում:

Մի օր էլ Զէլտը Մաճնունի մօտ գնալով ու նրան մե-  
ղադրելով ասում է: — «Ով Մաճնուն, թէ օր իսկապէս սիրոյ

անգին ակը գնել—առնել կուզես, արի մտիր շէնը—ձեր  
բնակավալը, քեզ կարգին պահէ ու քաղաքավարի եղիր.  
թէ որ չէ, ալսպէս անասունների հետ սարերում ու ձորե-  
րում աննպատակ թափառելուց ինչ օգուտ... Տէր ողորմեա.  
ալսպէս բան, ինչ որ դու ես անում, աշխարհքի երեսին ով  
է տեսել ու լսել: Ես էլ սիրահար եմ, բայց մարդի պէս  
հագնում, կապում, ուտում, խմում և մարդկանց հետ նխստ  
ու կաց եմ անում... Սակայն սէրս ոչ միայն չի պակասում,  
այլ հետզհետէ դեռ ևս աւելանում է... Խելք ճարիր քեզ,  
սիրելիս, ալդպէս անելով, գիտեցիր օր ոչ մի նպատակի չես  
հասնիլ և մուրագաչոր կը մնաս» ասելով՝ Մաճնունի սրտին  
բաւականին մեծ խարան է դնում:

Մաճնունը Զէլտի այս գատավիռը լսելուց յետոյ,  
պատմախանում է: — «Ով Զէլտ, ինձ բաւականին հարուա-  
ծեցիր... թէպէտ դու ինձ ալդպիսի ծանը խօսքեր ասող մարդ  
չես... բայց գիտես թէ ինչու համար եմ ներում քեզ...  
թէ օր դու ինձ սիրուհուց օր և իցէ տեղեկութիւն ես բերել,  
թէ ալդ դու ինձ սիրուհուց օր և իցէ տեղեկութիւն ես բերել,  
թէ ինձ սիրուհուց օր և իցէ տեղեկութիւն ես բերել,  
թէ ինձ սիրուհուց օր և իցէ տեղեկութիւն ես բերել,  
համար ես եկել, ինձնից ձեռք վերցրու հեռու գնայ... որովհե-  
տեւ ալդ քոյ հասկանալու բանը չէ: Ուտող խմող մարդը սիրա-  
հար լինել չի կարող... նրա ունեցածը ոչ թէ սէր, այլ  
հար լինել չի կարող... Զեր ասածը միայն այն առասպելեալ թըռ-  
չունի համար է, որ թեների հովանին ում երեսին օր տարա-  
ծեց, նա բաղդաւոր կը լինի և նպատակի կը հասնի... Կամ  
թէ աշխարհային սիրուց ձեռք վերցրած, հարբած մար ի  
նման կը դառնալ ու մինչ յաւիտեան—ալդպիսի երեսիթ—  
երազի մէջն էլ չի տեսնի»: Ահա ալսպիսի խօսքերով է  
Մաճնունը իւր դժգոհութիւնն յայտնում Զէլտին:

Մաճնունը խօսքն աւարտելուց յետոյ, Զէլտը տեղից  
գեր կենալով գալիս է Լէլլու մօտ ու բոլոր լսածը մի առ մի  
պատմում է նրան:

Պատմում են որ Լէլին բաւական ժամանակ Իպնի—Սէլամի հետ նշանագրուած մնալուց յետով... թէն. ամուս-նական դաշինք էլ կռեցին, սակայն ոչ մի ընտանեկան յարաբերութիւն չունեցան միմեանց հետ։ Մի օր Իպնի-Սէլամը հիւանդանում է. բայց որքան զեղ ու դեղրանք են անում, բժշկելու ոչ մի հնար չեն գտնում. վերջապէս մեռնում է Բարեկամներն հաւաքվում են և սկսում լաց ու կոծ անել։ Լէլին նոյնպէս կեղծելով, ասում են, հերարձակ սկսում է Իպնի-Սէլամի դիակի շուրջը աղիողորմ ճշալ, աղաղակ բարձրացնել և սգալ ու ողբալ. բայց նպատակը միայն Մաճնունն է լինում, նրա համար է սգում։

Կարճ խօսքով ասենք. այլ և այլ արարողութիւններ կատարելուց յետով մեծ ու շքեղ հանդիսով՝ Իպնի-Սէլամին տանում թաղում են։ Իսկ թաղմանից յետոյ, արապական սովորութեան համաձայն, մի տիկին մեռածի՝ երկուսն էլ նրա աներանց տան կողմից, վարագոլրի յետեռում ծածկուած ողբերգներ պիտի ասեն ու ներկայ եղողներին զբաղեցնեն... Այս արարողութիւնը Լէլուն վիճակուելով՝ թէն Իպնի-Սէլամի անունն է տալիս, բայց իսկապէս Մաճնունի համար է սուգ ու շիւան անելով ողբում։

Զէյտը Իպնի-Սէլամի մահը լսելով, ուրախացած գնում է Մաճնունի մօտ ու աւետիք տալով ասում.—«Ով եղբայր, Աստծուն շատ փառք, որ յուսոյ վարդենաստանում, այսինքն քոյ և Լէլու մէջ բուսած փուշը, այն է, Իպնի-Սէլամը մեռաւ—չորացաւ ու մէջտեղից վերացաւ։ Ուրեմն նրա կողմից գու ողջ կացիր ու գործիդ նայէ, որ սիրուհիդ շուտով քեզ պիտի յանձնեն։»

Բայց Մաճնունը այս լուրը լսելուն պէս, մի ճիչ է արձակում ու աղաղակ բարձրացնում... Երբեմն իբր թէ ուրախութիւնից հրճում է. և երբեմն էլ տիրում, թէ այսօր նրանն է, վաղն էլ ինձ կը հասնի կեանքի ալդ վաղճանը։

Եւ յեաոյ դառնալով Զէյտին.—«Ով իմ ցաւակից եղբայր, ասում է, երկար ժամանակ իմ նեղութիւնները կրեցիր ու ինձ բաւականութիւն տուիր.։ մի լուսով ու մի լայտնի պատճառի համար, ես քո կրած նեղութիւնը բնաւ չեմ մոռանալ։ Բայց այն լուրը, որ դու այսօր ինձ հաղորդեցիր, թէն ինձ համար իբր աւետիք, սակայն կասկածում եմ, որ իրողութիւն լինի։ Միայն ինչ էլ կուզէ թող լինի, այնուամենայնիւ ես էլ այն հանգուցեալի նման կեանքս ու հոգիս սիրուհուս համար զոհ կտամ...», ասում է ու հետևեալ երգը երգում։—

Մէկը այսօր ուրախ—զուարթ,  
Անում է խնջոյք կերուխում,  
Իսկ միւսն էլ—նրա պէս մարդ,  
Միշտ մնում է տիսուր—տրատում։

Ունայն աշխարհի փառքերը,  
Հարուստի ոսկէ կառքերը,  
Ճոխ—փարթամ զարդարանքները,  
Ափսոս, որ շուտ են փշանում։

Այսօրուայ բաղդաւոր մարդը,  
Տեսար, ընկաւ որոզայթը,  
Մաճնուն, պատրաստ է թակարթը,  
Ի՞նչ ես այլոց վերայ խնդում։

Զէյտը նրան ընդհատելով՝ իսկոյն վրայ է բերում.—«Այ եղբայր, դու կեանքդ սիրուհուդ համար այնքան զոհեցիր, որ քոյ արածներն ու քաշած զրկանքները, գեռ ևս ոչ մինչև այսօր չի արել...։ Քոյ արածներից այն մէկը բաւական է յիշել, որ դու Լէլու պատկերը նրա զրկած նամակի մէջ եղծելով ասել էիր թէ, ամեր մէջ իմ ու քոյ չկայ,

երկուսս մի հոգի ու մի մարմին ենք եղած։ Այսքան երկար ժամանակ սիրոյ ճամբին զոհ գնալդ ու նահատակ դառնալդ միթէ բաւական չէ, որ նորից ուզում ես մատադ լինել... Դեռ մի փոքր մտածիր, յետոյ ասածներիս գլխի կընկնես”։

Մաճնունը Զէլտի այս խօսքերից թէև խիստ բաւական է մնում, բայց Լէլլու սէրն ու կարօտը միտ բերելով ասում է. — „Արգեօք մի ժամ առաջ նրա դէմքն ու հասակը տեսնելու երբ պիտի արժանանամ”։

«Այժմ նրան տեսնելը մի քիչ դժուար է, ասում է Զէլտը, որովհետեւ տանից բնաւ դուրս չի գալիս։ Ես էլ բաւականին ժամանակ է, որ նրան չեմ տեսել։ Բայց ձեր թանկագին պատուի համար այսօր և եթ կը գնամ նրա մօտ ու մի կերպ նպատակդ կը հասկացնեմ նրան։ Իսկ նա էլ ինչ որ ասաւ կամ հրամալեց, անմիջապէս կդամ քեզ կը հաղորդեմ” ասնելով, իսկոյն ճանապարհ է ընկնում ու Լէլլու մօտ հասնելով, Մաճնունի դրութեան մասին տեղեկութիւն տալուց յետ, յալտնում է նաև, որ Մաճնունը կարօտդ քաշելով, խիստ է ցանկանում, որ մի անգամ էլ գոնէ քեզ տեսնի»։

«Ես էլ իրան տեսնել շատ եմ ցանկանում, ասում է Լէլլին, ժանաւանդ թէ աչքս միշտ կարօտով որսնում է նրա գեղատեսոիլ կերպարանքը տեսնելու, սակայն առ այժմ ոչ մի հնար չունիմ։ Միայն այս ինչ օրը աղքատներին իպնի — Սէլամի հօգու հացը պիտի տանք և ես վճռել եմ որ իմ ձեռքովը կերակուրները բաժանեմ... Թող այն օրը իբրև աղքատ, ձեռքը մի կաւէ աման առած՝ գալ բաժին տանելու, այն ժամանակ միմեանց կը տեսնենք”։

Զէլտն այս խօսքերը լսելուց յիտ, վերադառնում գախ է Մաճնունի մօտ ու բոլորը մի առ մի հաղորդում նրան։ Իսկ Մաճնունը լսելով այս բոլորը, քիչ է մնում ու քախութիւնից գժուի։

Ոլոշուած օրը Զէլտը գալիս է Մաճնունի մօտ ու

ասում. — «Եղբայր վեր կաց գնանք... բայց քեզ ալսպէս բուրովին մերկ գնալ չի կարելի... բերում է մի ոչխարի մորթ ու Մաճնունի ետևից ու առաջնեց սփածանելու (փէշտիմալ) նման բարակ պարանով կապում ամրացնում է ու մերկութիւնը կիսով չափ մի կերպ ծածկում... յետոյ գլուխն էլ մի կիսամաշ արտախուրակ (քիւլլահ) է գնում ու ինչպէս քառասուն տարուալ մի մուրացիկ աղքատ, վեր են կենում միասին գնում են։ Սակայն մի այնպիսի ժամանակ են հասնում այնտեղ, երբ Լէլլին թևերը վեր քշտած, կուրծքին մետաքսեալ գոգնոց կապած, մէջտեղը դրուած պղնձից շերեփով եկող աղքատի ամանը փլաւ էր լցնում ու ճամբար գցում։

Այդ միջոցին Զէլտը գէս ու դէն ընկնելով, պառնկը կոտրած մի կաւէ յանադ է ձեռք բերում ու Մաճնունին տալով ասում. — «Եղբայր, առ այս չանալն ու մարդկերանց միջից սեղմուելով առաջ անցիր և մօտենալով սիրուհուդ կարգին տես ու յետ արի»։

Մաճնունը չանալն ձեռքն առնելով, նրա ասածի պէս էլ անում է, բայց Լէլլուն տեսնելուն պէս, խելքը գլխից գնում է ու նուազելով քիչ է մնում որ վայր գլորի. միայն էլի մի կերպ ինքն իրան ժողովում է ու մի քիչ զրադ քաշուելով հանգստանում... Այդ դրաման պատահած միջոցին, Լէլլին առանց շփոթուելու, շերեփով խփում Մաճնունի ձեռքի չանալը կոտրում է։

Մաճնունը Լէլլու ալս վարմունքից չափազանց ուրախացած, սկսում է կանգնած տեղը խաղալ ու պարել. կարծելով թէ աշխարք իրան առւին, և փառք տալով Աստծուն, որ սիրուհին իրան չը մոռացած, ճանաչեց ու մարդի տեղ դնելով ալդպէս վարուեցաւ հետը։ Այնուհետև կողմնակի կերպով, բաւականին երկար ժամանակ, մտիկ է տալիս երեսին ու ինքն իրան մտածում. — «Արգեօք մի օր էլ դարձեալ

Կարժանանման տեսնելու ասելով, մի երգ է երգում ու  
թողնում այնտեղից հեռանում է:

Միրուհիս ինձ չէ մոռացել տակաւին,  
Արժանացայ սիրուն դէմքը տեսնելու,  
Նորոգուեցան—բորբոքուեցան ցաւերս հին,  
Մի օր կլնիմ հետը արժան խօսելու:

Անցած օրերն երջանիկ են—խնդապին,  
Իսկ ներկան էլ տխուր է ու ցաւազին,  
Միրուհիս թողել է ինձի լալազին,  
Գիտէ որ շատ բաներ ունիմ ասելու:

Մէրը շինեց ինձ չքաւոր—մուրացիկ,  
Բայց վերջապէս՝ տեսայ Լէլլուս գեղեցիկ,  
Մշխարհի մէջ մի հատիկ է, անուշիկ,  
Պէտքէ յաւերժհարսանց դասը դասելու:

Եյն օրը երբ կգայ, որ մենք միասին,  
Միմեանց հետ մտնենք ծաղկալից այգին,  
Իւր ձեռքով մի ծաղիկ նուիրէ Մաճնունին,  
Երբև սիրոյ նշան՝ ծոցը պահելու:

Այսուհետեւ Լէլլին երբ իւր պարտքը Խպնի—Մէլամի  
Տահուան առթիւ կատարած, նրա համար որոշուած սգի  
օրերը պահած վերջացրած է համարում, և ունեցած իրե-  
զէնները ուղաերի վերայ բարձած գնում էր հօր տունը:  
Մաճնունը անապատի մէջ հեռուից տեսնելով, շէնք ու  
շնորքից ճանաչում ու ինքն իրան մտածում է.—„Սա ան-  
պատճառ Լէլլին է, որ ունեցած չունեցածը ուղաերին բար-  
ձած, քաշվում գնում է հէրանց տունը: Արգեօք մի խընդ-  
բուածք որ անեմ, պիտի լսէ» ասելով՝ մօտենում է ու սկսում:

Վաղճանս մօտիկ է, օրերս հասած,  
Բայց երեսդ տեսնեմ, անուշ սիրելի,  
Քեզ նման հոգեհան ընաւ չեմ տեսած,  
Բայց երեսդ տեսնեմ, անուշ սիրելի:

Կամովին զոհ զառայ սիրուն պատկերիդ,  
Մատաղ լինիմ ես բոյ սև սև աշերիդ,  
Խօսք չունիմ ասելու աղեղ ունգերիդ,  
Բայց երեսդ տեսնեմ, անուշ սիրելի:

Անուշ քունս փախաւ, դարձայ վիրաւոր,  
Անդադար շրջումեմ, շուար ու մոլոր,  
Ընկերներս զազաններն են ահաւոր,  
Բայց երեսդ տեսնեմ, անուշ սիրելի:

Խղճալի Մաճնունիս գթա մի անգամ,  
Մի տանջիր նորանոր ցաւով ամէ ամ,  
Յաւերդ չեմ կարող տանել ամեն ժամ,  
Բայց երեսդ տեսնեմ, անուշ սիրելի:

Լէլլին պատգարակի միջից Մաճնունի ձալնը լսելով ու  
ճանաչելով, նրան կանչում է մօտն ու մի փոքր խօսելուց  
լետոյ, յուսադրում է... «Երբ ողջութեամբ իմ բնակավայրը  
հասայ, սիրելի Մաճնուն, այն ժամանակ Աստուծով մի օր  
քեզ կը հրաւիրեմ ինձ մօտ ու սրտիդ ուզածի պէս քեզ կը  
հիւսասիրեմ» ասելով՝ թողնում հեռանում է:

Պատմում են որ Մաճնունը Լէլլուն ալդքան մօտիկից  
տեսնելու ու նրա բերանից լիշեալ խօսքերը լսելուն պէս,  
շափազանց ուրախութիւնից ապշում է ու քարացածի նման  
կանգնած տեղը այնքան ժամանակ բնեռուած անշարժ մը-  
նում, որ այն կողմի թոշունները գալիս գլխի վերայ ըուն  
են գնում ու ձագեր հանում թուցնում...: Բացի այս՝ մինչեւ

անգամ ուրիշ ասողներ էլ կան, թէ Մաճնունը Լէլլու  
վերոլիշեալ յուսագրական խօսքերից այնքան հրապուրւում  
ու յափշտակում է, որ կանգնած տեղը քարի նման արձա-  
նացած՝ մնում է անշարժ... և այդ միջոցին ոտքի տակի  
եղեգը ամբողջ մարմնի միջից անցնելով՝ գագաթից դուրս է  
գալիս ու երկարում է... (Այսպէս թէ այնպէս, երկու ենթա-  
դրութիւններն էլ, ճշմարտութիւնից հեռու՝ զուտ առաս-  
պելներ են:)

Մաճնունի խոստում արած օրից բաւական ժամանակ  
անցնում է, բայց Լէլլին երբեմնապէս մտաբերում է և մի  
յարմար առիթ ու ժամանակ չի գտնում, որ Մաճնունին  
տուած խոստումը կատարէ-նըան հրաւիրէ մօտն ըւ հիւրա-  
սիրէ... Երբեմն էլ Զէլլու Լէլլու մօտ գալով, «բաւականին  
ժամանակ է որ, ասում է, Մաճնունին չեմ տեսել,  
դուցէ մի օր կը տեսնեմ...»: Մի կողմից էլ Մաճնունը  
սարերն ընկած, մի գիշեր Աստուծուց խնդրաւմ է թէ. «ով  
երկնքի ու երկրի Արարիչ Տէր, սիրոյ հոգսերի մէջ հետ-  
զհետէ դրութիւնս վատացաւ ու կեանքս փշացաւ... միակ  
խնդիրս Քեզանից այս է, որ կեանքիս վառած լուսափայլ  
ջահը դեռ ևս չը շիջած, բաց աչքով մէկ էլ արժանանամ  
չքնաղ սիրուհուս տեսնելու» ասելով՝ աչքերից հեղեղի նման  
արտասուք է թափում, ու այս սրտաճմլիկ երգը երգում:—

Կեանքս մօտ է իւր վաղճանին,  
Սիրուն Լէլլի, արի տեսնեմ,  
Պատրաստվումիմ խրախճանին,  
Արի քեզ բաց աչքով տեսնեմ:

Գեղեցիկ օրերըս թռան,  
Բաքախող սրտերըս սառան,  
Ջատերն իրանց մուրազն առան,  
Մի ուշանար, եկ որ տեսնեմ:

Արևս շուտ մայր կը մտնի,  
Այլես դու ինձ չես գտնի,  
Ով ուզում է թող ինձ փտնի,  
Ճուտ մօտ արի, որ քեզ տեսնեմ:

Արի Լէլլի, շուտով արի,  
Մաճնունին ցանկայ դու բարի,  
Հազիւ թէ ապրի մի տարի,  
Ախ, շուտ արի, մի քեզ տեսնեմ:

Հետևեալ առաւտար կանուխ, երբ պատրաստվում էր  
ճամբայ ընկնել դեպի Լէլլու բնակավայրը, յանկարծ Զէլլու  
յալունվում է այնտեղ ու Լէլլու կողմից ողջունելով Մաճ-  
նունին՝ ասում. «սիրուհիդ իւր ողջունի հետ միասին նաև  
միաժամանակ ներողութիւն է խնդրում, որ քեզ տեսնելուց ու  
քեզանից բաժանուելու օրից մինչև ցալմա, նա էլ քեզ նման  
անդադար սիրոյ կրակով լերդն ու թոքը այրում—խորովում  
է, ու քեզ իւր սրտի մէջ միշտ անմոռաց ունի: Հազիւ թէ  
այսօր խեղճը մի քիչ յարմար ու առանձին ժամանակ էր  
գտել, որ ինձ կանչեց և յատկապէս ուղարկեց՝ քեզ իւր մօտ  
հրաւիրելու. ուրեմն վեր կաց գնանք:

Մաճնունը չափազանց ուրախութիւնից և սիրուհու  
անունը լսելուց, նախ ինքն իրան կորցնում է... և ապա մի  
քիչ լետոյ կամաց կամաց ուշքը վերան գալով, իւր գազան-  
ների հետ միասին ճամբայ ընկուծ, Զէլլու առաջնորդութեամբ  
գնում է Լէլլու մօտ,

Բնակավայրին մօտեցած միջոցին, Զէյտն առաջ անցնե-  
լով՝ գնում է Լէլլուն աւետիք տալու: Իսկ Լէլլին այս լուրն  
առնելուն պէս՝ աճապարանոք իսկոյն դուրս է թռչում ու  
երբ Մաճնունին տեսնում է, քիչ է մնում գինեմոլ մարդի  
նման հարբի—ցնդի... բայց սթափուելով ու զգաստանալով,  
Մաճնունի ձեռքից բռնած, միասին գնում մտնում են տուն...

ԶԵՄՆ էլ մէջտեղը երկուսին ծառայութիւն է անում... Իսկ Մաճնունի հետ բերած վագբներն ու առիւծներն Լէլլու բնակարանը այնպէս են շրջապատում, որ թռչուններն անգամ չեն կարող այնտեղից թռչելով անվնաս անցկենալ:

Այսպէս Լէլլին ու Մաճնունը միատեղ գալով, պէտք էր որ անուշ անուշ խօսք ու զրոյց անէին. օակայն կարծես թէ այդ վայրկենին երկուսի էլ լեզուն բռնուած էր ու խօսքերը բերաններից աքցանով (քէլպէթին) պէտքէր գուրս քաշել... ապուշի նման միմեանց երեսի նալելով...: Վերջապէս Լէլլին այդ ընդհանուր լոռութիւնը խզելով ասում է. «ով իմ սըտով սիրած սիրական Մաճնուն, երկար ժամանակ է որ սիրոյ և կարօտի կրակով միմեանց համար հալվում մաշվումէնք: Մեր լաց ու կոծի ձայնը երկինք հասաւ...: Աչքերից թափած արցունքը գետ դառաւ ու մեզ ողողեց...: մի ժամ միմեանց տեսած միջոցին, հազար հոգու չափ մէկ մէկու վերայ տեսնչում ու փափագում էինք... փառք Աստուծոյ այժմ նպատակներիս հասանք, լուսերս փթթած վարդերով կը պսակուի...: Երկնքի սոխակների նման աղաղակ էինք բարձրացնում՝ ու թռութակների նման խօսում էինք, բայց մեր արդարացի ձայնն ու բոլոքը լսող չկար...: ոչ ոք մեզ և մեր կրակուած սիրոյ վերայ ուշագրութիւն չէր դարձնում, և գուցէ թէ, դեռ միշտ անգամ շատերն էլ մեզ մեղադրում ու դատապարտում էին...: Բայց այդ էլ շատ մեղադրելի չէ. ըստորում սիրոյ մասին տգէտներն ու լիմարները անշուշտ այդպիսի դատաստան ու վճիռ պիտի կտրէին...: Միայն ինչ էլ կուզէ լինի, անցան այն փոթորկալից օրերը, և յոյս ունիմ որ այն սե օրերին, ալսուհետեւ պիտի լաջորդեն պահած ու գեղազուարձ օրեր...: Արդեօք այլ ևս մի խօսք պակաւ թողթ ասելու» ասում է ու լուսւմ:

Նոյն վայրկենին Մաճնունը Լէլլու այս խօսքերին հետեւալ կերպով է պատասխանում. «ով իմ հաւատարիմ ու

սըտակից սիրուհի... թող Ալլահը քոյ պայծառ օրերդ չը խաւարեցնէ. թող անբաղդութիւններն ու արհաւելքները քեզնից հեռու մնան, թող քոյ անմեղ սիրտը երկմտութեան համաճարակ ախտով չը թիւնաւորուի... բայց գալով թշուաներին, բնաւ չեմ տեսած որ այդ ողորմելիները նըպատակի հասնին և ուրախանան... թէպէտ հազարաւոր բերաններ նրանց օրհնում ու ցանկանում են, որ նրանց յոյսերը պսակուի-աննպատակ ու թերափափագ չը մեռնին..., Միայն ինչ էլ կուզէ լինի, այդ սե աչերդ, աղեղ ունքերդ, մեղրաթաթախ շրթունքներդ ու քաղցրախօս լեզուդ շունչս կտրում են և յոյսս ու ոլժս խլում ինձանից... Էհ, ինչ անեմ, այսուհետեւ իմ ու քոյ վիճակը թողնումեմ բաղդին ու ճակատագրին, ինչպէս ուզում են թող այնպէս վճռեն ու որոշենա ասում է ու հետեւալ տողերը երգում.—

Հուսնի մանեկին է նման—  
Սիրահարի սիրուն դէմքը,  
Ում բողոքէ, կամ ում ուղղէ,  
Իւր բողոքն, անցկացած դէպքը:

Սիրտը մի եռուն հնոց է,  
Մէջը լիք կրակ ու բոց է,  
Մէրին անձնատուր լինողի  
Հէք հոգին յարաժամ խոց է:

Մէրը մի նպատակ ունի—  
Որ սիրուհուց փափագն առնի,  
Մաճնուն, դու էլ կակնկալես,  
Բայց նպատակիդ չես հասնի:

Վերջապէս Մաճնունը իւր սիրուհուն տեսնելուց և նրա հետ ունեցած խօսակցութիւնից խիստ գոհ է մնում...:

«Փիառք Աստուծոյ, ասում է, որ վերջապէս քեզ գտայ ու  
արժանացալ տեսնելու։ Արդէն նպատակիս հասայ, այլ ևս  
ոչինչ պակաս չը մնաց, յուս ունիմ որ գործերս էլ գլուխ  
կգայ. այժմ ճշմարտութիւնը մեր կողմն է։ Սակայն իմ մէջ  
մի կասկած մնաց... կարծես թէ ես մի անշունչ ու անհոգի  
պատկերի նման եմ, վերաս կենդանութիւն չկալ... կարծես  
թէ յոյսը դրութիւնս փոխելով, ինձ դէպի թշուառութիւն  
ու վիշտն է տանում... ախ, այս կասկածանքից էլ մի ազա-  
տուելինքն ասելով՝ սիրու բորբոքն ու հառաչանքը տարու-  
բերում է խղճալուն։

Այդ միջոցին էլ Լէլլին Մաճնունի սիրտը շահելու և  
նրա կասկածները փարատելու համար, մի քանի յուսալից  
խօսքեր է ասում...։ Վերջապէս Մաճնունը Լէլլու հետ  
պայման դնելով, այնտեղից հեռանում է իւր գազանների  
հետ միասին։

Յուզուած սիրտը մի կերպ սփոփելու համար, հետևեալ  
կսկծալի ու սրտամորմոք երգն է երգում։

Դառնութեամբ լցրեցին իմ մաքուր սիրտս,  
Դուրս վանեցին իմ ծաղկոցից սոխակս,  
Իզուր թափել տուին արցունքս, քիրտս,  
Խորշակահար արին նոր բարունակս։

Կարծես յոյսը սև սրտիս մէջ մեռած է,  
Մինչի այսօր արածներս կորած է,  
Ինձ տեսնողը կասէ թէ մոլորած է,  
Ափսոս, գնաց կորաւ իմ աշխատանքս։

Երազ էր իմ կեանքս, օրերս ցնորք,  
Վճիռ կարգաց դէմ՝ բաղդը անողոք,  
Մաճնուն, ում պիտի տաս բաղդիցդ բողոք,  
Լէլլի, չը մոռանաս վիշտ տառապանքս։

Մաճնունը Լէլլու հետ ալսքան խօսակցելուց, ժամա-  
նակ անցկացնելուց ու անխարդախ պայման դնելուց յետոյ  
էլ, գարձեալ մի լագեցուցիչ բաւականութիւն չի գտնում։

Մի քանիսները պատմում են, որ Լէլլին ու Մաճնունը  
միմեանցից լիուլի բաւականութիւն չստանալուց ու հեռա-  
նալուց յետոյ..։ Եթէ թէ մի օր Լէլլին տեսնում է, որ եր-  
կինքը մթագնեց ու անձրևաբեր սև ամպերով ծածկուե-  
ցաւ...։ Այդ միջոցին խօսքն ուղղելով դէպի երկինք ասում  
է. — „Ի՞նչ, միթէ քոյ ցաւդ էլ իմիս նման մշտապէս սիրտդ  
սիրոյ անշէջ կրակով ալրում ու տոչորում է, որ սգոյ սև  
շրջաղգեստ հագար...“։ Այսպէս բողոքելով ու տրտնջալով,  
աչքերից անձրևի կաթիլների նման արտասուքը վալր է հո-  
սում-հեղեղ դարձնում ու ինքը մէջը մնում մոլորուած։  
Բայց յուղուած ու բորբոքուած սրտով՝ հետևեալ երգն է  
երգում։

Երկինքն էլ ինձ նման սև շղարշ առաւ,  
Դէմքը ծածկեց մոայլ սգապատ քօղով,  
Կարծես անշէջ հրով - կրակով վառաւ,  
Երկիրը ողողեց անձրևի ցօղով։

Միթէ երկինքն էլ է սիրով տոչորուած,  
Կամ մեզ նման սիրոյ բոցերով այրուած,  
Ինչու է բորբոքուել, ինչու կրակուած,  
Ինչու է երեսը ծածկել ամպօղով։

Սև շրջաղգեստ ինձ է վայել, ով երկինք,  
Այդ պարզեց քեզնից ինձ տրուեց բաժինք,  
Թէս Լէլլուն համարում են նախատինք,  
Միայն հոդ չէ, շուտ կծածկեն սև հողով։

Այս տեսակցութիւնից մի քանի օր յետոյ, Լէլլու դրու-  
թիւնը փոխվում է — սկսում է տկարանալ ու հետզհետէ

Հիւծիլ և մաշիլ. . գոյնը դցում է, գեղեցկութիւնը հեռանում է իրանից ու դիակի նման անկողնում պարկած է մընում:

Լէլլու գրութիւնը մալրը տեսնելով, խելքը գլխից գընում է... «անուշիկս, աչքիս լոյս, ասում է, լանկարծ քեզ ինչ պատահեց, որ գոյնդ ալդպէս գցեցիր»:

Լէլլին սրտի խորքից մի ախ քաշելով պատասխանում է.- „Սիրելի մալրիկ, կեանքիս այգում տաք խորշակ փշեց... այսուհետեւ ինձ բժշկելու համար արած ջանքերն անօգուտ ու դատարկ են... իմ վերքն անբուժելի է... ինձանից լոյսերդ կտրեցէք... ինձ լանձնեցէք միայն Աստուծոյ խնամքին: Տուած կաթդ ու ինձ վերայ ունեցած երախտիքդ հալալ արա“ ասելով՝ մօր ձեռքն համբուրում է ու վերջն աւելացնում.— „գթառատ մալրիկ, քեզանից միակ խնդիրս այն է, որ մեռնելուց յետոյ, գագաղս վարդերով, մանիշակներով և ուրիշ գոյնզգոյն ծաղիկներով զարդարէք... պատանս կարմիր արիւնով ներկէք, որ սիրոյ համար զոհ լինելուս նշանակը լինի... Այսպէս զարդարուած կը թաղէք ինձ... Սիրոյ ձեռքից վտարանդի եղած Մաճնունս, գիտեմ որ իմ իւր համար արած անձնազոհութիւնները միտ բերելով՝ կզայ գերեզմանիս ափին կը նստի, ինձ կորոնէ, բայց զամբարանիցս զատ ուրիշ ոչինչ չի գտնի այնտեղ.,. Եւ իմ ցաւերով ու հոգսերով ալրուած, միայն պիտի գառնապէս սպայ ու ողբայ և լաց ու կոծ անելով սև օրերն անցկացնէ... Ուստի, անուշ մայրիկ, այս կտակն եմ քեզ թողնում, որ Մաճնունիս իմ կողմից ընդունես քեզ մօտ որդեգիր ու քեզանից ծնուած հարազատ զաւակիդ նման պահես-պահապանես և մտիկ տաս: Մեղմ ու անոլշ վարուիր հետը, որ նրա վշտածեծ, վիրաւորուած ու մաշուած սիրտը չը մնայ քեզանից: Ամուր ձեռքով բռնէ նրան, որովհետեւ խեղճ է, թշուառ է ու վշտա-

հար: Եւ այդ բոլորը նա իմ երեսիցն է գտել. ես էի պատճառը, որ նա այդ օրին ընկաւ: Իմ սէրը նրա ոսկորները քամեց—ցամաքեցրեց, մարմինը մաշեց—հիւծեց ու կմախք դարձուց, որ այժմ զառամեալ ծերունու նման գերեզմանի ափին դողդողում է և օրըստօրէ երիտասարդական այդ կայտառ հասակի մէջ, իւր օրհասական մահին է ոպասում: ասելով՝ արտասուալից աչքերով այս երգն է երգում.—

Խորշակահար եղաւ նորատունկ այգիս,  
Ծաղիկներս թառամեցան—չորացան,  
Թըթուրը մօտեցաւ նոր բացուած վարդիս,  
Վարդենիքս խանձոտեցան—զօսացան:

Էլ չկայ յոյս նորից վերականգնելու,  
Կամ թէ մի կերպ-լաւ ու վատ նորոգելու,  
Ապարդիւն է աւերակին հսկելու,  
Որովհետեւ հիմնովին կործանեցան:

Այգուս հետ ցամաքեց իմ ոսկորներս,  
Արեակէզ եղան հասած հասկերս,  
Տեղ չհասաւ բողոքներս—խօսքերս,  
Նորածիլ բոյսերս, ախ, ցամաքեցան:

Լէլլի, նպատակդ մնաց կիսկատար,  
Տգէտ հօր երեսից մուրազդ չառար,  
Մաճնունին էլ արիը դու խորշակահար,  
Չարակամ մարդիքը խիստ ուրախացան:

Լէլլին իւր կտակը մօրն աւանդելուց յետոյ. — «ով Տէր Աստուած, հոգիս քոյ ձեռքն եմ աւանդում... իմ ու խղճալի Մաճնունի նպատակը եթէ այս վաղանցուկ աշխարհում չը կատարուեց, գոնէ հանդերձեալում պսակէ ու քոյ սուրբ օթեանիդ մէջ միմեանց տեսութեան արժանի արա, որպէս

զի մարմիններս գերեզմանի մէջ գէթ անդորրութիւն ու  
հանգստութիւն գտնեն:

Այս կարճ ազօթքն ասելուց յիտոյ, իսկոյն մաքուր ու  
ամբիծ հոգին աւանդում է չօր Աստուծոյ ձեռքը:

Մալրն ու մերձաւոր ազգականները, բարեկամներն ու  
դրացիք լաց եմ լինում, ողբում են նրա տարաժամ մահը...  
ու լէլլու աւանդած կտակը իսկութեամբ կատարում են և  
մարմինը զարդարուած դագաղի մէջ դնելով, իրանց բնակա-  
վալրի ժողովրդեան հետ միասին հաւաքուած, տանում  
յանձնում են հողին:

Եւ որովհետեւ Զէլտը Լէլլուն պատահած դժբաղդու-  
թիւնից, այն է, նրա մահից տեղեակ էր, ուստի օձիքը  
պատառելով, հագի շորերը կտոր-կտոր է անում, սև հան-  
դերձներ է հագնում, աչքերից արիւն արտասուք թափելով  
դիմում է դէպի Լէլլու գերեզմանը ու այնտեղ լաց ու կռծ  
է անում... Այնուհետեւ ախուվախ անելով գնում է լեռները  
Մաճնունի մօտ....

Մաճնունը բաւական հեռուից Զէլտին այս դրութեան  
մէջ տեսնելով ։ այստեղ անպատճառ մի դժբաղդութիւն կալ  
մտածում է ինքն իրան ու խելքը գլխից գնում է... Մի քիչ  
յետոյ սթափուելով՝ հարցնում է. «ո՞վ իմ սիրուհու հաւատա-  
րի՞ սրտակից, ինչ անբաղդութեան մէջ ես ընկել, որ ալդ-  
պէս սուզի սև հանդերձներ՝ հագած դառնապէս ողբում ես»:

Զէլտը սրտի խորքից մի ախ է քաշում ու հատկեալ  
ձայնով ասում է.—«խորշակը մեր պարտիզի ամենաընտիր  
ծաղիկը թառամեցուց—չորացուց... յոլսերս մեռաւ գնաց...  
այսուհետեւ այլ ևս ուրախութեան ոչ մի պատճառ չկալ  
մեզ համար... Անիրաւ ժամանակը այն անմեղ ու չքնաղ  
կոլսին հողմահար անելով՝ սև հողի ծոցը դրեց... այլ ևս  
աշխարհի երեսին լէլլի չկայ... նա քեզ օրհնելով մեռաւ  
ու անդարձ գնաց դէպի յաւիտենականութիւն»:

Մաճնունը այս բօթաբեր լուրը լսելուն պէս, միմիայն  
մի ճիչ է արձակում ու նուազած վայր ընկնում... բաւակա-  
նին ժամանակ գիտակի նման անշունչ մնում է ընկած տեղը.  
Վերջ ի վերջոյ Զէլտի գործ դրած միջոցներով մի քիչ ըս-  
թափվում է ու գժուածի նման տեղից վեր թռչելով  
սկսում է ինքն իրան խփել քարերին ու ժայռերին... Ինչ  
և իցէ, Զէլտի օգնութեամբ հազիւ հազ ալլալուած գնում  
է Լէլլու գերեզմանի վերալ է ընկնում և ուշաթափւում է...  
Այսպէս երկար ժամանակ մնալուց յիտոյ, դարձեալ վեր է  
կենում, լալիս է, անգիտակցաբար այս ու այն կողմն է ընկ-  
նում... Այստեղ սիրուհու գերեզմանի վերալ հետևեալ  
սրտառուչ երգն է երգում.—

Անհետ թուաւ դեղձանիկս վանդակից,  
Անդարձ գնաց, այլմս յետ չի դառնայ,  
Այսուհետեւ էլ չունիմ ոք կարեկից,  
Ծով ցաւերս ինձանից ով պիտ բառնայ:

Նորափթիթ կեանքս թառամեց գնաց,  
Երազայոյս խորհուրդս փորս մնաց,  
Ճատերը կարծումնն Լէլլիս է քնած,  
Բայց ես զիտեմ, թէ երբ պիտի արթնանայ:

Առանց նրան կենդանութիւնն ինչ կանեմ,  
էլ ում համար գոյն—գոյն ծաղիկներ ցանեմ,  
Կամ թէ ումնից ես պիտի վրէժ հանեմ,  
Երբ չկայ իմ Լէլլին, որ ուրախանայ:

Դատարկ է աշխարհը, դատարկ ամեն բան,  
Սիրածդ առարկան քեզ կը զլանան,  
Մաճնուն, թէ խօսացիր, լաւ պատիժ կտան,  
Սիրոյ զոհ գնալդ, ով կհասկանայ:

Մի քանի օր էլ գերեզմանի շուրջը դառնակսկիծ լացով ու ողբով ժամանակն անցկացնելուց յետով, միայնակ կրկին վերաղառում գնում է դէպի լեռները։ Անուհետեւ դրութիւնն ևս առաւել սկսում է վատանալ,.. Ամեն ոք նրան տեսնելիս խղճահարվում էր ու վերան լաց էր լինում։ Իսկ ինքը Մաճնունը, կաթուածահար եղած, տկարացած, հիւծուած—մաշուած ու կեանքի վերջին կէտն հասած, գետնի վերայ պարկած տեղն, արտասուելով հետևեալ խընդրուածքն է անում Աստուծուց.—«ով Տէր, ծառալիդ հոգին առ ու ազատ արա այս թշուառ դրութիւնից... որովհետեւ նազելի Լէլլուն կորցնելուց յետով, այլ ևս ինձ բնչ կեանք է պէտք.. գիտես, Տէր, որ այլ ևս ոյժ ու կարողութիւն չմաց վշտերն ու տառապանքները տանելու...» Մի ամբողջ տարի սիրուհուս շիրմի շուրջը պտտելով, բազկատարած Քեզ էի դիմում։ Արդ ժամանակն է. . .ով Տէր, ընդունէ հոգիս» խօսքերը արտասանելուն պէս, հոգին իսկոյն աւանդումէ...

Խեղձի դիակը մի օրոց ժամանակ մնում է անթաղ. որովհետեւ մի տարուց աւելի ալդ կողմերում ոչ ոք չի պատահում։ Մօտը գտնուած գտացններն էլ, երբ տեսնում են որ Մաճնունի դիակը հանգաւ նեխաւ ու փոշիացաւ և միան չոր ոսկորները մնաց, թողնում գնում են մի կողմ։

Բաւականին երկար ժամանակ անցնելուց յետ, Մաճնունի բարեկամներն ու ընկերները լսելով ու տեղեկութիւն առնելով նրա մահուան մասին, որոնելով գալիս ցրուած ոսկորները գտնում հաւաքում տանում են, Լէլլու գերեզմանը բաց անելով, նրա մէջ թաղում և երկու սիրահարներին միան գերեզմանի սառ ծոցի մէջն են միմեանց հետ միացնում։

Հեքեաթաբաններն ահա ալսպէս են պատմում այն սիրու զոհ գնացածների—լէլլու և Մաճնունի հեքեաթը, որ տալիս ենք վիպասէր ժողովրդի ձեռքը կարդալու։



ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

„Քեարամի և Ասլու“ հեքեաթը — (սպառուած)	
„Շահ-Բամայիլի“ — . . . . .	(սպառուած)
«Դահար-Միբզային» — . . . . .	(սպառուած)
«Աշղ-Ղարիբի» հեքեաթը . . . . .	40 կ.
Այբենարան պատկերազարդ	5 կ.
„Քեօռօղլու—(Հասան-փաշալի) հեռջանքը . . . . .	25 կ.
„Լէլլու և Մաճնունի“ հեքեաթը . . . . .	30 կ.

	<b>Գինն է 30 կ.</b>	
--	---------------------	--

Մամուլի տակ են և հետզինք լոյս կտեսնեն Սղեֆ. Մխիթար-  
եանցի հետեւեալ ինքնուրոյն եւ բարգման. գրուածքները —

- 1) Հին և նոր Ճարտարապետութիւնը Շիրակում և գրացի գաւառ-  
ներում —պատկերազարդ:
- 2) Կրթական ստանաւու Հանելուկներ:
- 3) Շերինի և Ֆարհատի հեքեաթը երգերով հանդերձ:
- 4) Դահար-Միբզայի հեքեաթը Բ. տպագրութիւն.
- 5) Աշղ-Ղարիբի հեքեաթը Բ. տպագրութիւն.
- 6) Սարչն-Ճորին, Փարէն-քուէն—ուէլը հատ ժողովրդական հեթի-  
ներ, առանց երգերի.

Ճ.

զմա:

հն մ

Գոհմարով գնողներին սուսանձին զեղչ կը լինի նու-  
ն սլ

Դիմել — Ալեքսանդրոս

Տպոգրաֆիա A. M. Մալհասյանա.